



Ն.Հ.ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԸ
ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Է



АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ

Н. О. ОГАНЕСЯН

РЕВОЛЮЦИОННЫЙ ПРОЦЕСС
В АРАБСКОМ МИРЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ

ЕРЕВАН

1990

9-85

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԸ
ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

2745



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ

1990

Տպագրվում է ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Մովսիսյան Ս. Հ. (նախագահ)

Բարսեղյան Խ. Հ., Բարխուդարյան Վ. Բ., Գրիգորյան Ս. Վ.,
Թովմասյան Ս. Ս., Խաչիկյան Է. Ե., Հախվերդյան Լ. Հ.,
Ղարազյոզյան Կ. Գ., Ղարիբջանյան Բ. Տ., Մարտիրոսյան Ռ. Մ.,
Մկրտչյան Հո. Ս. (պատասխանատու քարտուղար), Քոթանյան Մ. Խ.:

Պատասխանատու խմբագիր՝

պատմական գիտությունների թեկնածու Շ. Լ. Կարամանուկյան
Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե. Ղ. Սարգսյանը
և պատմական գիտությունների թեկնածու Վ. Լ. Վաղարշյանը

Հովհաննիսյան Ն. Հ.

Հ 854 Հեղափոխական պրոցեսը արաբական աշ-
խարհում / Պատ. խմբ.՝ Շ. Լ. Կարամանուկյան].—
Եր.: ՀՀ ԳԱ հրատ., 1990.—96 էջ. (գիտահանրա-
մատչելի մատենաշար | ՀՀ ԳԱ, խմբ. խորհուրդ՝
Մովսիսյան Ս. Հ. (նախագահ) և ուրիշ).

Աշխատությունում քննության են ենթարկվում հեղափո-
խական պրոցեսի փուլերը և յուրաքանչյուր փուլի բնորոշ
դժերն ու յուրահատկությունները արաբական երկրներում:
Առանձնահատուկ ուշադրություն է դարձված աղգային-դեմո-
կրատական հեղափոխությունների օրինաչափությունների, զար-
գացման սոցիալիստական կողմնորոշման էության բացա-
հայտմանը և հեղափոխական տեսության, ինչպես նաև հե-
ղափոխական պրոցեսի ներկա վիճակի ու նրա զարգացման
հեռանկարների հարցերին: Զգալի տեղ է հատկացված հա-
յերի մասնակցությանը հեղափոխական պրոցեսին:

Հասցեագրվում է ընթերցող լայն շրջաններին:

0503030000

Հ ————— 91—90

703 (02)—90

ԳՄԴ 66.3 (5)

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Արաբներն աշխարհի հնագույն ժողովուրդներից են և մեծ դեր են խաղացել համաշխարհային պատմութեան ու քաղաքակրթութեան մեջ: Նրանց բուն հայրենիքը Արաբական թերակղզին է, որտեղ դեռևս մեր թվարկութեանից առաջ սեմական այլ ցեղերից անջատվելով ձևավորվել է արաբական էթնոսը: Հենց այստեղ էլ՝ Արաբական թերակղզում, մ. թ. VII դարի սկզբում առաջացավ մի նոր կրոն՝ իսլամը, որն այսօր հանդիսանում է համաշխարհային ամենատարածված երեք կրոններից մեկը:

Արաբները VII դարից սկսեցին իրենց նվաճումները, տարածվելով Ասիայով ու Աֆրիկայով մեկ, Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս և հասան մինչև Իսպանիա: Դա նրանց ռազմական և քաղաքական հզորութեան գագաթնակետն էր, որի մարմնավորումը հանդիսացավ Արաբական խալիֆայութեանը՝ (632—1258 թթ.): Արաբներն իրենց նվաճումների հետ միասին տարածեցին ազդային կրոնը՝ իսլամը, սովորութիւններն ու հոգևոր-մշակութային արժեքները, իրենց լեզուն՝ արաբերենը, որը միջնադարյան Արևելքում նույն դերն էր կատարում, ինչ որ լատիներենը միջնադարյան Եվրոպայում: Սակայն տնտեսական և քաղաքական գործոնների ազդեցութեան և օտարերկրյա բազմաթիվ նվաճողների հարվածների տակ Արաբական խալիֆայութեանը աստիճանաբար թուլացավ և կործանվեց: 1258 թ. մոնղոլ խան Հուլաղուն մտավ Բաղդադ: Այդ ժամանակաշրջանից արաբները, կորցնելով քաղաքական անկախութեանը, տիրապետողի դիրքից գահավիժեցին և հայտնվեցին ենթակայի վիճակում: Արաբների համար առանձնապես ծանր

վիճակ ստեղծվեց XVI դ. սկզբներից, երբ Օսմանյան կայսրությունը 1516 թ. սկսեց իրար հետևից նվաճել արաբական տերիտորիաները: Ուղիղ շորս դար տևած օսմանյան ահավոր լուծը կործանարար եղավ արաբների համար: Արաբական երկրների հետամնացության արմատները պետք է փնտրել բռնության, կամայականության վրա հիմնված օսմանյան տիրապետության մեջ: Արաբ հայտնի պատմաբան Ֆիլիպ Հիթթին, անդրադառնալով օսմանյան կառավարողների քաղաքականությանը նվաճված ժողովուրդների նկատմամբ, ընդգծում է, որ «Օսմանյան քաղաքական տեսությունը, համենայն դեպս, այնպես, ինչպես դա հասկանում էին վալիները, խարսխված էր այն սկզբունքի վրա, որ նվաճված ժողովուրդները... նախիր են»¹: Օսմանյան կայսրությունում տիրապետող անարխիայի, վարչական, դատական և ֆինանսական համակարգում անբաժանելիորեն տիրապետող կաշառակերության մասին է շեշտում մեկ այլ արաբ հեղինակ՝ Ժորժ Հադդադը: Դա, ըստ նրա «բարոյալքում էր կայսրության հպատակներին»²: Ուշագրավ է նաև արաբ մի այլ հեղինակի՝ Զիհադ Սալիհի տեսակետը: Նա իր «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև» հետաքրքիր ուսումնասիրության մեջ թուրանիզմը, օսմանյան կայսրության բոլոր հպատակներին թուրքացնելու քաղաքականությունը, բնութագրում է որպես «ռասայական, շովինիստական, ֆաշիստական շարժում»³: Կայսրությունում տիրող դժոխային վիճակը հանդիսանում էր կայսրության ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և արաբների ընդվզումների գլխավոր պատճառը:

Արաբների ազատագրական ելույթներից նշենք 1916 թ. դինված պայքարը, Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալիի գլխավորությամբ, որը պատմության մեջ մտել է «Արաբական մեծ ապստամբություն» անունով: Նրա նպատակն էր ազատագրվել օսմանյան լծից և ստեղծել արաբական անկախ պետություն, որի մեջ պետք է մտնեին Արաբական Արևելքի տերիտորիաների մեծ մասը: Արաբներին 1918 թ. հաջողվեց թոթափել Օսմանյան տիրապետության լուծը, իսկ ինչ վերաբերում է անկախ պետության ստեղծելուն, ապա դրան հաջողվեց հասնել: Արաբական երկրների մի մասը՝ Նեփա-

տոպ, Իրաք, Պաղեստին, Հորդանան, Քուվեյթ, Պարսից ծոցի արաբական շեյխություններ և այլն, այս կամ այն ձևով (մանդատ, պրոտեկտորատ) ընկան Անգլիայի, Մի-րիան, Լիբանանը, Թունիսը, Ալժիրը և Մարոկկոն՝ Ֆրանսիա-յի, իսկ Լիբիան՝ Իտալիայի տիրապետության տակ։ Արևմը-տաեմպրատական պետությունների տիրապետությունից ա-զատվելու և քաղաքականապես անկախ արաբական պետու-թյունների առաջացման համար պահանջվեց մոտ 40—50 տարի։ Դա պատմական նշանակություն ունեցող երևույթ էր արաբների քաղաքական կյանքում։ Այժմ աշխարհի քաղա-քական քարտեզի վրա գոյություն ունի արաբական 19 ան-կախ պետություն, որոնք աշխարհագրականորեն տեղադր-ված են Մաշրիկում՝ Արաբական արևելքում, և Մադրիբում՝ Արաբական արևմուտքում։ Դրանք են. Ալժիր, Արաբական Միացյալ Էմիրություններ, Բահրեյն, Եգիպտոս, Եմենի Արա-բական Հանրապետություն, Եմենի Ժողովրդական Դեմոկրա-տական Հանրապետություն, Թունիս, Իրաք, Լիբանան, Լի-բիա, Մատար, Հորդանան, Մավրիտանիա, Մարոկկո, Օման, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Սուդան, Քուվեյթ՝ 13 մլն. 330 հազ. քիմ ընդհանուր տարածությամբ, որտեղ բնակվում է անվերջ քան 160 մլն. մարդ։

Արաբների կողմից քաղաքական անկախության նվա-ճումը և ազգային պետությունների հիմնումը կրկին բարձ-րացրեց նրանց վարկն ու կշիռը միջազգային հարաբերու-թյուններում։ Այսօր արաբական աշխարհն ունի իր ուրույն տեղը համաշխարհային համագործակցության մեջ և նրան որոշակի, երբեմն բավականին ազդեցիկ դեր է պատկանում քաղաքական և տնտեսական զուսպազան պրոբլեմների լուծ-ման մեջ, որոնք շոշափում են համայն մարդկության շահե-րը։

Որպեսզի շրջանում, մանավանդ, քաղաքական անկա-խությունն նվաճումից հետո, արաբական երկրներում ընթա-նում են քաղաքական, տնտեսական, գաղափարական, ազ-գային-մշակութային հետաքրքիր պրոցեսներ, որոնք իրենց նշանակությամբ դուրս են գալիս նեղ ազգային շրջանակնե-րից։

Դրանք են սոցիալ-տնտեսական և քաղաքական վերա-

փոխումները, զարգացման ուղու ընտրության, սոցիալիստական կողմնորոշման, այլ կերպ ասած՝ հեղափոխական պրոցեսի հարցերը, որոնք ուսանելի են և շատ բան կարող են տալ անկախություն նվաճած նախկին գաղութային և կախյալ երկրների պատմական զարգացման օրինաչափությունները բացահայտելու և մեկնաբանելու տեսանկյունից:

...

Արաբական աշխարհում ընթացող հեղափոխական պրոցեսի ուսումնասիրությունը կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել նաև հայ ընթերցողի, լինի Մայր Հայրենիքում, թե Սփյուռքում, մանավանդ Արաբական արևելքի հայ համայնքների համար:

Դա, մեր կարծիքով, պայմանավորված է երեք հանգամանքով:

Առաջին. հայերը և արաբները, պատկանելով միևնույն աշխարհագրական միջավայրին՝ Մերձավոր Արևելքին, ճանաչել են միմյանց և շփումների մեջ մտել վաղնջական ժամանակներից: Երբեմն, պատմական դեպքերի բերումով, նրանք հայտնվել են միևնույն պետական միավորման շրջանակներում: Մ. թ. ա. 84—64 թթ. Միջագետքը, Սիրիան, Լիբանանը (Փյունիկիա), Պաղեստինը, այսինքն Արաբական Արևելքի մեծ մասը, ընդհուպ մինչև Եգիպտոս, մտնում էր Տիգրան Մեծի հայկական հզոր պետության մեջ⁴: Արաբ հեղինակ, դոկտոր Զամիլ Խաբրը Տիգրան Մեծին համարում է «իր դարաշրջանի Արևելքի ամենամեծ թագավորը»⁵: Հետագայում, VII—IX դդ. արդեն Հայաստանն էր մտնում Արաբական խալիֆայության կազմի մեջ: Հայ-արաբական քաղաքական հարաբերությունների մեջ նոր փուլ սկսվեց, երբ Հայաստանը 885 թ. վերականգնեց իր քաղաքական անկախությունը Բագրատունիների դինաստիայի ներքո: Մուսամիդ խալիֆան առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի անկախությունը և հայոց թագավոր Աշոտ I Բագրատունուն թագ ուղարկեց: Երկու հարևան պետությունների միջև հաստատվում են քաղաքական և առևտրատնտեսական աշխույժ հարաբերություններ, որոնք պահպանվեցին մինչև Բագրա-

տունյաց թագավորության անկումը (1045 թ.): XI—XIV դդ. բազմաբնույթ հարաբերություններ էին հաստատվել նաև Կիլիկիայի հայկական պետության և հարևան արաբական զանազան պետական միավորումների միջև:

Ճիշտ է, հայ-արաբական հարաբերություններն ունեցել են իրենց բարդություններն ու ստվերոտ կողմերը, սակայն շսկետ է մոռանալ, որ նույնիսկ այդպիսի պարագաներում սկիզբ առան ու զարգացան հայ-արաբական գիտամշակութային շփումները, որոնք ի տարբերություն քաղաքական կապերի, ավելի լայնածավալ, բազմաբնույթ և հարատևող են եղել: Այդ երկու ժողովուրդները, նրանց մտավորականները մշտապես միմյանց նկատմամբ մեծ հարգանքով են վերաբերվել և փոխադարձ ազդեցություն կրել հոգևոր մշակույթի տարբեր բնագավառներում:

Հայ-արաբական բարեկամական շփումների բնական զարգացումն ընդհատվեց սելջուկների, թաթար-մոնղոլների և ապա օսմանյան թուրքերի ավերիչ արշավանքների հետեւանքով: Օսմանյան կայսրությունը, ինչպես նշվեց, XVI դ. նվաճեց համարյա ամբողջ արաբական աշխարհը, իսկ XVII դ.՝ Արևմտյան Հայաստանը: Այդ պահից սկսած արաբները և հայերը դառնում են բախտակից ժողովուրդներ և նրանց գլխավոր նպատակը դառնում է թուրքական դաժան լծից ազատվելը: Եվ նրանք շատ հաճախ են միմյանց աջակցում և օգնության ձեռք մեկնում, մանավանդ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին: Այդ մասին են վկայում բազմաթիվ փաստեր, որոնցից կցանկանայինք մատնանշել երկուսը:

Իմանալով հայերի հստակ դիրքորոշման մասին՝ ի նպաստ արաբների ազգային պահանջների, արաբական հայտնի ազգային գործիչ Նաջիբ Ազուրին 1905 թ. ապրիլի 15-ին հատուկ նամակ է ուղարկում «L'Arménie» («Հայաստան») թերթի հրատարակիչ Մինաս Չերազին: Ի նկատի ունենալով այդ նամակում արժարժվող հարցերի կարևորությունը, հարկ ենք համարում ընդարձակ մեջբերում կատարել նրանից: «Ես ապավինում եմ Ձեր համակրանքին, — գրում է Նաջիբ Ազուրին, — հույս ունենալով, որ օգնելու եք ինձ՝ տեղադրելով Ձեր թերթում այս մի քանի տողը, որով

ցանկանում եմ հրապարակորեն արտահայտել իմ շնորհակալությունը Ձեզ և Ձեր աշխատակիցներին այն խանդավառության համար, որով դիմավորեցիք արարների հայրենիքի դարձնելը և այն վեհանձն կամպանիայի համար, որ բարեհաճել էք ձեռնարկել ի նպաստ մեր ազգային շարժման:

Նույն շնորհակալությունը հղում եմ ձեր բոլոր հայրենակիցներին, որոնք հիմք ունենալիս կարծելու, նույն զգացմունքն ու համակրանքն ունենալ մեր հանդեպ:

Քաջաբար առաջարկելով ամբողջ ուժով օժանդակելու արարներին թուրքական պետության դեմ, մյուս կուսակցություններից առաջ հայերը մի անգամ ևս ցույց տվեցին, որ գիտակցում են մեր ընդհանուր շահերը... Հայերը չեն վախեցել տաս տարի առաջ արթնացնելու իրենց ազգային զգացմունքը ասիական ժողովուրդների մեջ թուրք-չերքեզական բռնակալության դեմ, այնպես, ինչպես հույները XIX դարի սկզբում համարձակություն ունեցան ազդանշան տալ բալկանյան ժողովուրդներին ազատագրվելու քմահաճ փողիշահների դաժան բռնակալությունից: Եվ թուրքերը երբեք չեն կարող ջարդերի մեջ խեղդել հայերի օրինական ձգտումները... Հայ հերոսների արյունով թրջված հողից բարձրացել են երկու մեծ հսկաներ՝ քրդերի հայրենիքը և արարների հայրենիքը, որոնք հիմա բարձրացնում են իրենց ծանր մահակաները, իջեցնելու համար բռնակալի գլխին:

Հետևաբար, պետք է ճանաչենք և հասկանանք իրար և պետք է միանանք հարձակվելու համար ընդհանուր թշնամու դեմ, որն այնքան շատ օգտվեց մինչև հիմա մեր անհամաձայնությունից Վեզ արևանձին-առանձին ջախջախելու համար... Հայերն արդեն միացել են մեզ հետ»⁶:

Արարներն իրենց հերթին հանդես էին գալիս ի միաշտպանություն հայերի և նրանց արդարացի ազգային պահանջների: Այդ առումով խիստ ուշադրավ են 1913 թ. Փարիզում դրամարված Արաբական առաջին կոնգրեսի որոշումները, որի 8-րդ կետը վերաբերում է հայերին: «Կոնգրեսը, — ասված է որոշման մեջ, — հավանութուն է տալիս և իր համակրանքը՝ անտահայտում օսմանյան հայերի պահանջներին»⁷:

Հետաքրքիր է արաբական հայտնի քաղաքական և մշակութային գործիչ, 1916 թ. Ջեմալ փաշայի կողմից կախողան

բարձրացված Աբգել Համիդ աղ-Ջահրավիի ելույթը կոնգրեսում հայկական հարցի կապակցությամբ: «Մեր հայ եղբայրների վիճակը,— հայտարարում է նա,— մեր վիճակի նման է և նրանք մեզ նման մարդիկ են: Նրանք արտագաղթում են, ինչպես մենք, նրանք մտածում են այնպես, ինչպես մենք ենք մտածում, և պահանջում են, ինչպես մենք ենք պահանջում: Եվ մենք բարեմաղթում ենք հաջողություն մեզ և հաջողություն նրանց: Եվ մենք ու նրանք միասնական ենք ապակենտրոնացման (Օսմանյան կայսրության—Ն. Հ.) պահանջի հարցում»:

Առանձնահատուկ դրվատանքով պետք է նշել արաբների ապանշականությունը 1915 թ. եղեռնից փրկված հայ տարադիրների նկատմամբ: Չլինել արաբների ազնիվ և մարդասիրական դիրքորոշումը երիտթուրքերի կողմից իր բնօրրանից բռնի տեղահանված և արաբական անապատները նետված հայ անպաշտպան դաղթականների նկատմամբ, այդ ողբերգության շափերն ու ծավալներն անհամեմատ ավելի մեծ կլինեին և, հավանաբար, մենք այսօր արաբական, և ոչ միայն արաբական, երկրներում չէինք ունենա մեր հայ համայնքները:

Երկրորդ. արաբական երկրներում, մասնավորապես Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Իրաքում, Հորդանանում, Քուվեյթում, Արաբական Միացյալ էմիրություններում և այլն, գոյություն ունեն հայ համայնքներ: Մոտավոր հաշվարկներով հայերի թիվը ողջ արաբական աշխարհում հասնում է 400—450 հազարի: Նրանք իրենց բնակություն հաստատած երկրների քաղաքացիներ են՝ դրանից բխող բոլոր իրավունքներով և պարտականություններով: Հետևաբար, նրանց համար սկզբունքային նշանակություն ունեն քաղաքական իրադարձությունների, մասնավոր հեղափոխական վերափոխումների բնույթը, նրանց զարգացման հեռանկարները: Հեղափոխական պրոցեսն անմիջականորեն անդրադառնում է արաբական աշխարհի հայերի ճակատագրի, նրանց քաղաքական վիճակի և տնտեսական դրության վրա:

Երրորդ. հայերը բոլոր էտապներում եղել են արաբական աշխարհում տեղի ունեցած հեղափոխական իրադարձությունների ամենաակտիվ մասնակիցները: Մասնավորա-

պես պետք է ընդգծել նրանց մեծ դերը Սիրիայի, Լիբանանի
և Իրաքի կոմունիստական կուսակցությունների ստեղծման,
տարբեր բնույթի արհմիություններ հիմնելու գործում: Ա-
ռանձնահատուկ դրվատանքի է արժանի հայերի լայն մաս-
նակցությունը արաբական աշխարհում ծավալված ազգային-
ազատագրական շարժումներին: Բարձր գնահատելով հայ-
արաբական համագործակցությունն այդ բնագավառում, Լի-
բանանի կոմունիստական կուսակցության գլխավոր քար-
տուղար Նիկոլա Շաուին նշել է. «Այդ գործակցությունը նոր
չէ. պայքարի ընթացքին, թե բանտերի մեջ, միշտ մեր կող-
քին ունեցած ենք մեր հայ ընկերները»⁹:

Հեղափոխական պրոցեսի ներկա փուլում ևս արաբա-
կան աշխարհում հաստատված հայերը ոչ թե իրադարձու-
թյունների հայեցողական դիտորդներ են, այլ անմիջական
մասնակիցներ:

1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

1917 թվականին բոլշևիկյան կուսակցության առաջնորդ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ կատարված Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը ցնցեց ամբողջ աշխարհը: Համաշխարհային պատմական նշանակություն ունեցող այդ իրադարձության ուղղակի ազդեցության տակ տեղի ունեցավ հեղափոխական շարժումների աննախընթաց վերելք, որն իր մեջ ներգրավեց ոչ միայն եվրոպական, այլև Արևելքի երկրները: Եվրոպական մայրցամաքում տեղի ունեցան մի շարք հեղափոխական պոռթկումներ, իսկ գաղութներում և կախյալ երկրներում ծավալվեց հակաիմպերիալիստական հուժկու պայքար: Դա իրոք որ հեղափոխական մեծ խմորումների դարաշրջան էր, երբ բռնությունների, ճնշումների և անարդարության հիմքի վրա կուտակված հսկայական պայթուցիկ նյութը ելք էր փնտրում, հարցականի տակ դնելով գահերն ու թագերը, հին սոցիալ-տնտեսական կառուցվածքները և նախորդ ժամանակներից եկող քաղաքական հարաբերությունները: Հենց նման իրավիճակն էր նկատի ունենր Վ. Ի. Լենինը, երբ հեղափոխական պրակտիկայի խոր և գիտական վերլուծության հիման վրա, կատարեց իր կարևոր տեսական ընդհանրացումներից մեկը՝ ձևակերպելով «սոցիալական հեղափոխության» սահմանումը: «Սոցիալական հեղափոխությունը, — նշում է Վ. Ի. Լենինը, — չի կարող այլ կերպ տեղի ունենալ, քան իբրև մի դարաշրջան, որ միացնում է պրոլետարիատի քաղաքացիական կռիվը բուրժուազիայի դեմ առաջավոր երկրներում և մի ամբողջ շարք

դեմոկրատական ու հեղափոխական, այդ թվում նաև ազգային-ազատագրական շարժումներ, չգարգացած, հետամնաց և ճնշված ազգերի մեջ»¹⁰։ Այս կարևոր տեսական դրույթը օգնում է ճիշտ հասկանալու 1917 թ. հոկտեմբերին հաջորդած ամբողջ պատմական դարաշրջանում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական և տնտեսական վերափոխումների բնույթը։ Դրանից պարզորոշ ու ակնհայտորեն հետևում է, որ սոցիալական հեղափոխությունն իր բնույթով միասեռ չէ։ Այն ներառնում է հեղափոխական տարբեր հոսանքներ և ջոկատներ, որոնք տվյալ կոնկրետ պատմական դարաշրջանում միանման խնդիրներ չեն հետապնդում, ուստի և տարբերվում են իրենց բնույթով։ Սոցիալական հեղափոխության քաղաքականությունն են հանդիսանում, մի կողմից, սոցիալիստական հեղափոխությունը՝ պրոլետարիատի քաղաքացիական կռիվը բուրժուազիայի դեմ առաջավոր երկրներում, իսկ մյուս կողմից՝ դեմոկրատական բնույթի հեղափոխական շարժումները, որոնք տեղի են ունենում չգարգացած և ճնշված ազգերի մեջ։ Վ. Ի. Լենինը այս երկրորդ տիպի շարժումների շարքն է դասում նաև ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական շարժումները։

Տարբերությունը հեղափոխական երկու հիմնական հոսանքների միջև միայն նպատակների մեջ չէ, այլև կատարողների, այսինքն ղեկավար և շարժիչ ուժերի մեջ։ Սոցիալիստական հեղափոխությունն իրականացնում է պրոլետարիատը իր մարքս-լենինյան ավանգարդի ղեկավարությամբ։ Մինչդեռ դեմոկրատական հեղափոխությունների և ազգային-ազատագրական շարժումների պատկերը սոցիալ-դասակարգային առումով ավելի խաչտաբղետ է։ Այդ շարժումներին մասնակցում են ազգային բուրժուազիան, երբեմն նաև հայրենասիրաբար տրամադրված հողատեր-կալվածատերերը, միջին և մանր բուրժուազիան, բանվոր դասակարգը, գյուղացիությունը, մտավորականությունը և այլն։

Հեղափոխական երկու ջոկատների միջև եղած տարբերությունը, նրանց կողմից հետապնդվող նպատակները տարբեր երկրների ու ժողովուրդների անհամաչափ զարգացման արդյունք էին։ Գտնվելով զարգացման տարբեր աստիճանների վրա և միանգամայն տարբեր քաղաքական և սոցիալ-

տնտեսական պայմաններում, այդ իրողության արտահայտիչը հանդիսացող հեղափոխական շարժումները չէին կարող միասնական խնդիրներ լուծել:

Չնայած հեղափոխական այդ երկու ջոկատների միջև եղած տարրերություններին, դժվար չէ տեսնել այն օրգանական համար, որ կա նրանց միջև: Առաջավոր երկրներում կատարվող սոցիալիստական հեղափոխությունը մեծ խթան է հենարան է ազգային-ազատագրական շարժումների համար, իսկ վերջիններիս հաղթանակը իր հերթին նպաստում է սոցիալիզմի դիրքերի ամրապնդմանը համաշխարհային մասշտաբով: Այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ վերջնականապես իմպերիալիզմին կարող է հաղթել աշխարհի բոլոր երկրների պրոլետարիատը և ուսանելը սկսում են այն գործը, որ կամրապնդի անգլիական, ֆրանսիական կամ գերմանական պրոլետարիատը: «Բայց մենք տեսնում ենք, — շարունակում է Վ. Ի. Լենինը, — որ նրանք առանց բոլոր ճնշված գաղութային ժողովուրդների աշխատավոր մասնակցի և առաջին հերթին Արևելքի ժողովուրդների աշխատավոր մասնակցի օգնության չեն հաղթի»¹¹:

Ըստ սոցիալական հեղափոխության լենինյան սահմանման, պրոլետարիատի պայքարը կապիտալիստական երկրներում և գաղութային ու կախյալ երկրների ազգային-ազատագրական շարժումները մարդկությունը սոցիալ-քաղաքական և ազգային ճնշումից ազատագրելու ընդհանուր և միասնական հեղափոխական պրոցեսի բաղկացուցիչ մասերն են:

Վ. Ի. Լենինի կողմից առաջ քաշված այս թեզը ելակետ է մեր առջև դրված խնդիրը՝ արաբական երկրներում սոցիալական հեղափոխության էությունը և նրա արտահայտման ձևերը պարզաբանելու համար:

Հարկ ենք համարում ընդգծել, որ պրոբլեմը լուսաբանելիս կենտրոնացել ենք գլխավորապես Նգիպտոսի, Իրաքի, Սիրիայի և Լիբանանի պատմական փորձի վրա, որպես արաբական առավել դարգացած երկրների, որտեղ կատարված քաղաքական և սոցիալ-տնտեսական տեղաշարժերը հարուստ նյութ են նախա հարցի պարզաբանման համար: Բացի դրանից, այդ երկրներում կատարված պրոցեսները, մասնավորապես առաջին փուլում, երբ խոսքը ազգային անկախության

նվաճման մասին է, այս կամ այն շափով տիպական էին նաև արաբական մյուս երկրների համար:

Պրոբլեմի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացություն, որ առաջին փուլում սոցիալական հեղափոխությունը արաբական երկրներում դրսևորվել է նախ և առաջ ազգային-ազատագրական և դեմոկրատական-հեղափոխական շարժումների ձևով: Սոցիալական հեղափոխությունը բովանդակությունը կազմել է օտարերկրյա տիրապետության տապալումը, արաբական երկրների կողմից քաղաքական անկախության նվաճումը, ազգային պետության ստեղծումը և դեմոկրատական վարչակարգի հաստատումը, որը կոչված էր լուծելու երկրի առջև կանգնած բազմաթիվ քաղաքական և սոցիալ-տնտեսական պրոբլեմներ: Այս փուլը արաբական երկրների համար սկսվում է 1918 թվականից, Օսմանյան կայսրության կործանումից և Անգլիայի ու Ֆրանսիայի տիրապետության հաստատումից մինչև Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Լիբանանի և արաբական մյուս երկրների կողմից իրենց քաղաքական անկախությունը նվաճելը: Լիբանանը և Սիրիան դա իրականացրին 1943—1946 թթ., Եգիպտոսը՝ 1952 թ., իսկ Իրաքը՝ 1958 թ.: Մոտավորապես նույն ժամանակաշրջանում իրենց անկախությունը ձեռք բերեցին (առաջին փուլն անցան) Սուդանը, Լիբիան, Թունիսը, Մարոկկոն: Մնացած արաբական երկրները այս փուլն անցան 60-ական թվականներին: Արաբական առաջատար երկրների համար այդ փուլը, որը մենք անվանում ենք առաջին, ընդգրկում է 40 տարվա մի ժամանակահատված:

Այստեղ նպատակ չունենք մանրամասն լուսաբանելու այդ երկրներում ծավալված ազգային-ազատագրական շարժումները, քանի որ դա արդեն արված է խորհրդային արաբագետների կողմից¹²: Սակայն պետք է նշել, որ Եգիպտոսում, Իրաքում և Հորդանանում ընդդեմ բրիտանական, իսկ Սիրիայում, Ալժիրում, Մարոկկոյում, Թունիսում՝ ընդդեմ ֆրանսիական իմպերիալիզմի ծավալված երկարատև պայքարը, ինքնին վերցրած մի հեղափոխական պրոցես էր: Դա կոչված էր, առաջին, վերացնելու արաբների ազգային-քաղաքական ճնշումը, ստեղծելու ազգային անկախ պետություն,

և, երկրորդ. առավել նպաստավոր պայմաններ ստեղծել՝ արարների առջև կանգնած սոցիալ-տնտեսական և քաղաքական պրոբլեմները լուծելու համար:

Սոցիալական հեղափոխության առաջին փուլում արարական երկրներում ամենից առաջ լուծվում էր քաղաքական անկախության նվաճման հարցը: Այս փուլում ֆորմացիոն բնույթի խնդիրներ դեռևս առաջ չէին քաշվում: Մինչև արարները չհասնեին անգլիական և ֆրանսիական տիրապետության վերացմանը և անկախության նվաճմանը, չէին կարող դբադվել սոցիալ-տնտեսական պրոբլեմների լուծման հարցով: Այդ պատճառով էլ սոցիալական հեղափոխության առաջին փուլում սոցիալ-տնտեսական վերափոխումների պրոբլեմը ստորադաս էր քաղաքական անկախության նվաճման պրոբլեմին:

5472
Այդ փուլում սոցիալ-տնտեսական խնդիրներ էլ էին դրվում: Պրոցեսի մեջ ներգրավված տարբեր քաղաքական ուժեր տարբեր շափով, սակայն բոլորն էլ իրենց ծրագրային պահանջներում որոշակի տեղ էին հատկացնում օտարերկրյա կապիտալի և մոնոպոլիստական ընկերությունների ազդեցության վերացման, ազգային արդյունաբերության հովանավորման, արդարության և սոցիալական ապահովության հաստատման, դեմոկրատական ազատությունների սահմանման և այլ հարցերի: Այդ պահանջները առաջ չէին քաշվում մեծ մասշտաբներով, կոնկրետ կերպով չէր դրվում նրանց կենսագործման հարցը և դրա հնարավորությունն էլ չկար, քանի որ օտարերկրյա կապանքները թույլ չէին տալիս հասնել նման պահանջների դրական լուծմանը, քանի դեռ չէր լուծվել քաղաքական անկախության նվաճման և ազգային պետականության ստեղծման հարցը: Սակայն վերոհիշյալ պահանջների առաջադրումը վկայում էր այն մասին, որ արարական երկրներում նույնիսկ սոցիալական հեղափոխության առաջին փուլում սոցիալ-տնտեսական հարցերի առումով վակուում գոյություն չունեի:

Սոցիալ-տնտեսական պրոբլեմների ստորադաս լինելը օտարերկրյա տիրապետության տապալման և քաղաքական անկախության ձեռք բերման խնդիրն, հանդիսանում է սո-

ցիալական հեղափոխութեան դրսևորման յուրահատկութիւններին մեկը արաբական երկրներում:

Սոցիալական հեղափոխութեան մյուս յուրահատկութիւնը այն փուլում կայանում էր նրանում, որ այդ խնդիրները, մասնավորապէս քաղաքական, իրականացվում էր ոչ թէ մեկ դասակարգի կամ կուսակցութեան, այլ տարբեր սոցիալ-դասակարգային ուժերի և նրանց շահերի արտահայտիչ հանդիսացող քաղաքական կազմակերպութիւնների բլոկի կողմից: Ռաբացատրվում է նրանով, որ սոցիալական հեղափոխութեան գլխավոր խնդիրները կրում էին համազգային բնույթ: Նրանք, թեև տարբեր շափերով, անխտիր շոշափում էին բոլոր դասակարգերի և սոցիալական խավերի շահերը, ընդունելի հիմք հանդիսանում իրենց բնույթով տարբեր դասակարգերի և սոցիալական խավերի քանքերի միավորման համար: Եթե արաբական երկրներին հաջողվեց լուծել քաղաքական անկախութեան նվաճման պրոբլեմը և կիրառել առաջադիմական բնույթի որոշ վերափոխումներ, դրա համար նրանք պարտական էին համազգային ճակատին, որ ստեղծվեց սոցիալական հեղափոխութեան առաջին փուլում: Խոսելով տարբեր սոցիալ-դասակարգային ուժերի բլոկի ստեղծման մասին, չպետք է կարծել, թէ այն ձևավորվել էր կազմակերպչորեն: Խոսքը գնում է այդ ուժերի շահերի, ավելի ճիշտ՝ հետապնդած նպատակների նույնութեան և համատեղ պայքարի մասին: Նրանց հետապնդած հիմնական նպատակները, որոնք կենսականորեն անհրաժեշտ էին, ստիպում էին իրենց բնույթով քաղաքական միանգամայն տարբեր ուժերին առժամանակ «մոռանալ» իրենց տարածայնութիւնները և դրանք ստորադասել գաղութային լծի թոթափման և քաղաքական անկախութեան նվաճման ավելի բարձր ու համազգային խնդրին:

Որո՞նք էին այդ ուժերը: Առաջին. դա ազգային բուրժուազիան էր, իր բոլոր շերտերով՝ խոշոր, միջին և մանր: Նա ներկայում էր օտարերկրյա կապիտալի տիրապետութիւնից, որն արգելակում էր նրա տնտեսական զարգացումը: Օտարերկրյա լծի թոթափումը և տնտեսական կապանքներից ազատվելը լիովին համապատասխանում էր եգիպտական, իրանական, սիրիական, լիբանանյան, ինչպէս նաև արաբական այլ երկրների

Թույլ դարգացած ազգային բուրժուազիայի դասակարգային շահերին: Դրանով նա հույս ունեւր առավել նպաստավոր պայմաններ ստեղծել իր տնտեսական դարգացման համար և դառնալ իր երկրի ղեկավար քաղաքական ուժը: Երկրորդ, արարական երկրների հողատեր-կալվածատերերի այն խավը, որը հայրենասիրաբար էր տրամադրված և տնտեսական ու քաղաքական թելերով կապված շէր օտարերկրյա տիրապետողների տնտեսական ու քաղաքական շահերի հետ: Քաղաքական անկախության նվաճումը և ազգային ինքնուրույն պետութեան ստեղծումը միանգամայն համապատասխանում էր այդ խմբի դասակարգային շահերին: Նա ակնկալում էր, որ հաղթանակի շնորհիւ ինքը լայն հնարավորութեաններ ձեռք կբերի տնտեսական դարգացման համար և ազգային բուրժուազիայի հետ համատեղ կդառնա կառավարող ուժ: Այս վերջին իրողութեան արտահայտութեան էր արարական երկրներում սոցիալական հեղափոխութեան առաջին փուլում գործող մի շարք առաջատար կուսակցութեաններ, ինչպէս «Վաֆդը» Եգիպտոսում, «Աշ-Շաաբը», «Քուսլա ալ-Վաթանիյան»՝ Սիրիայում, «Ալ-Իսթիքլալը»՝ Իրաքում, «Քուսլա ալ-Վաթանիյան» «Քուսլա ադ-Դուստուրիան»՝ Լիբանանում և այլն, որոնք արտահայտում էին այդ երկրների ազգային բուրժուազիայի և լիբերալ կալվածատերերի շահերը:

Երրորդ, սոցիալական հեղափոխութեան ակտիւ մասնակից էր արարական ազգային մտավորականութեանը: Նա, բացի օտարերկրյա տիրապետութեան վերացման և քաղաքական ինքնուրույնութեան նվաճման համընդհանուր խնդրից, հետամուտ էր նաև իր, եթե կարելի է ասել, «նեղ» պրոֆեսիոնալ նպատակներին: Խոսքը գնում է արևմտյան արժեքներին արարական միջավայր տեղափոխելու ընդդիմութեան մասին: Անգլիական և ֆրանսիական գաղութարարների տիրապետութեանը դրսևորվում էր ոչ միայն քաղաքական և տնտեսական ասպարեզներում, այլև հոգևոր-մշակութային ոլորտում: Արարական ազգային մտավորականութեանը հաշտ աչքով չէր նայում այդ երևույթին, արևմտյան զանազան փիլիսոփայական ուսմունքների, գաղափարների, արվեստի և մշակույթի վերաբերյալ մերժելի տեսակետների տարած-

մանը արաբական երկրներում: Նա մտահոգված էր մի կողմից արաբական ազգային մշակույթի ինքնատիպության պահպանմամբ, իսկ մյուս կողմից՝ նրա հետագա զարգացմամբ: Այստեղից էլ ահա արաբ մտավորականության ակտիվ մասնակցությունը սոցիալական հեղափոխությանը, նրա մեծ ներդրումը արաբների ազգային ինքնագիտակցության արթնացման մեջ:

Զորրորդ. արաբական երկրներում ծավալված սոցիալական հեղափոխության ամենամեծ բանակը կազմում էր գյուղացիությունը, որը գտնվում էր կրկնակի ճնշման ներքո: Այս հանգամանքը նրան դարձնում էր հեղափոխական մեծ հնարավորություն պարունակող ուժ, որը կարող էր դուրս ժայթքել համապատասխան պայմանների դեպքում: Պատմական փաստերը վկայում են, որ օտարերկրյա իմպերիալիզմի դեմ ուղղված պայքարը ավելի մեծ թափ էր ստանում, երբ դրան ակտիվորեն մասնակցում էին գյուղացիական զանգվածները: Այդ են վկայում 1919 և 1921—1922 թթ. ապրտամբությունները, բազմաթիվ ելույթները Նգիպտոսում, 1920 և 1936 թթ. ապստամբությունները, հետպատերազմյան շրջանում ծավալված հակաիմպերիալիստական պայքարը Իրաքում, 1925—1927 թթ. ապստամբությունը Սիրիայում, 1943 թ. ապստամբությունը Լիբանանում և այլն: Սակայն, գյուղացիությանը ինչպես Արևելքի, այնպես էլ արաբական երկրներում բնորոշ էր անկազմակերպվածությունը և դասակարգային ցածր գիտակցությունը: Արաբական գյուղացիությունը իրենից ներկայացնում էր մի ուժ, որը կարիք էր զգում ղեկավարության մեկ այլ ուժի կողմից: Այդ ֆունկցիան քննարկվող ժամանակաշրջանում հիմնականում կատարում էին զանազան բուրժուա-նացիոնալիստական կազմակերպություններ:

Զնայած դրան, շատ ծանրակշիռ է արաբական գյուղացիության ներդրումը սոցիալական հեղափոխության խնդիրների իրականացման բնագավառում: Եթե գյուղացիությունը ակտիվորեն շներգրավվեր պայքարի մեջ, ապա անհնար կլիներ սոցիալական հեղափոխության առաջին փուլի գլխավոր պահանջների կենսագործումը:

Հինգերորդ, սոցիալական հեղափոխության մյուս ուժի՝

բանվոր դասակարգի մասին։ Սկզբնական շրջանում լինելով
փոքրաթիվ և անկազմակերպ, Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի,
Լիբանանի, Թունիսի, Ալժիրի և արաբական մյուս երկրների
բանվոր դասակարգը, անցնելով դասակարգային և ազգա-
յին-ազատագրական պայքարի բովով, դարձավ սոցիալա-
կան հեղափոխության ամենահետևողական ուժերից մեկը։
Նա կարողացավ ստեղծել իր դասակարգային կազմակեր-
պությունները, այդ թվում և կոմունիստական, մշակել իր
դասակարգային գաղափարախոսությունը, բարձրանալ հա-
մազգային խնդիրների ըմբռնման մակարդակին և համա-
գործակցելով գյուղացիության ու արաբական երկրների մյուս
հայրենասիրական ուժերի հետ, իր արժանի ավանդը ներ-
դնել հեղափոխական-դեմոկրատական, ազգային-ազատա-
գրական շարժումներում։

2. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈԽԼՈՒՄ

Արաբական երկրներում սոցիալական հեղափոխության առաջին փուլի էությունն ավելի խոր բացահայտելու և նրա յուրահատկությունները լուսաբանելու համար, ավելի հանգամանորեն կանգ առնենք բանվոր դասակարգի ու նրա զանազան կազմակերպությունների, մասնավորապես՝ կոմունիստական կուսակցությունների խաղացած դերի վրա:

Արաբական երկրներում բանվորական ելույթներ տեղի են ունեցել դեռ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը: Սակայն դրանք եղել են վատ կազմակերպված և էական վտանգ չեն ներկայացրել տիրող խավերի համար:

Բանվորական շարժման մեջ որակական բնույթի փոփոխություններ կատարվեցին և՛ Հոկտեմբերյան հեղափոխության ուղղակի ազդեցության տակ, և՛ արաբական երկրներում կատարված սոցիալ-տնտեսական տեղաշարժերի շնորհիվ: Աճում է բանվորների թվաքանակը, բարձրանում դասակարգային գիտակցությունը: Դրան զուգահեռ աճում է պրոլետարիատի տեսակարար կշիռը սոցիալական հեղափոխության խնդիրների լուծման մեջ: Այդ պրոցեսը թեև դանդաղ, սակայն ընթանում էր անշեղորեն:

20-ական թվականներից Եգիպտոսում, Իրաքում, Սիրիայում, Լիբանանում սկսում են կազմավորվել բանվորական արհեստակցական միություններ, որպես բանվորների տնտեսական շահերի պաշտպանության, բանվորական շարժմանը որոշակի ուղղություն տալու առաջին քայլերից մեկը: Սկզբնական շրջանում արհեստակցական միությունները գործում

էին անշատ-անշատ, միշտ չէ, որ հստակորեն դրսևորվում էր դասակարգային համերաշխությունը նրանց գործունեության մեջ: Գրանից տուժում էր բանվորական շարժումը: Դառն իրականությունը և պալքարի տրամաբանությունը արաբական երկրների բանվորներին կանգնեցրեց նրանց շանքերը միավորելու և ընդհանուր ճակատով հանդես գալու անհրաժեշտություն անշուշտ:

Դեռևս 1921 թ. եգիպտական բանվորները հիմնեցին Եգիպտոսի արհմիությունների ընդհանուր կոնֆեդերացիա (ԵԱՀԿ), որն իր շարքերում միավորում էր 38 արհմիություններ¹³: ԵԱՀԿ-ն Կարմիր պրոֆինտերնի անդամ էր և սերտորեն համագործակցում էր նրա հետ: 1924 թ. եգիպտական կառավարությունը արգելեց նրա գործունեությունը:

Սակայն արհմիութենական կյանքը Եգիպտոսում շղա-դարեց: Հների կողքին ձևավորվում էին նոր արհեստակցական միություններ, որոնց թիվը Եգիպտոսում 1940-ական թվականների վերջին հասավ մոտավորապես 490-ի¹⁴: Այդ տարիներին փորձեր արվեցին հիմնելու մեկ, համահգիտական արհմիութենական կենտրոն, սակայն իշխանությունները թույլ չէին տալիս իրականացնելու բանվոր դասակարգի համար կենսական նշանակություն ունեցող այդ խնդիրը: Ճիշտ է, 1945 և ապա 1951 թթ. հիմնվեցին Եգիպտոսի արհմիությունների ընդհանուր ֆեդերացիայի ստեղծման նախապատրաստական կոմիտե, սակայն չհաջողվեց նախապատրաստական աշխատանքներից այն կողմ անցնել:

Եգիպտոսում 30—40-ական թվականներին միասնական արհմիութենական ֆեդերացիայի բացակայությունը ինչ-որ չափով փոխհատուցվում էր տարբեր արհմիությունների՝ տեքստիլագործների, նավթագործների, տրանսպորտի աշխատողների և այլ ճյուղային արհմիությունների միջև համերաշխության ուժեղացմամբ և համատեղ գործողությունների ձեռնարկմամբ:

Արհմիութենական շարժման յուրահատկությունը Սիրիայում կայանում էր հետևյալում. ֆրանսիական մանդատային իշխանությունները, հենվելով արհեստների վերաբերյալ դեռևս Օսմանյան կայսրության ժամանակ ընդունված օրենքի վրա, արգելում էին բանվորներին ինքնուրույն,

առանց ձեռնարկատերերի արհմիությունների հիմնում: Այդ, այսպես կոչված խառն արհմիությունները, սահմանափակում էին բանվոր դասակարգի պայքարը, ստեղծում բանվորների և ձեռնարկատեր-կապիտալիստների միջև շահերի միասնության և նույնության պատրանք: Այդ պատճառով էլ սիրիական պրոլետարիատի պայքարի մեջ 20—30-ական թվականներին հակահիմպերիալիստական և ընդհանուր դեմոկրատական պահանջների հետ միասին մեծ տեղ էր գրավում իր ինքնուրույն, ձեռնարկատերերից անջատ և անկախ արհմիություններ հիմնելու պահանջը: 1938 թ. մարտին գումարվեց արհմիությունների առաջին համագումարը, որը և հիմնեց բանվորական արհմիությունների ընդհանուր ֆեդերացիա: Հաջորդ տարի նրան հաջողվեց հասնել այն բանին, որ բանվորները ձեռնարկատերերից անջատ ինքնուրույն արհմիություններ հիմնելու իրավունք նվաճեցին¹⁵: Դա սիրիական պրոլետարիատի խոշոր հաղթանակն էր:

Զարգացման նման բարդ և աստիճանական վերափոխումների ուղիով է ընթացել արհմիութենական շարժումը նաև Լիբանանում, Իրաքում և արաբական այլ երկրներում: Սակայն պետք է նշել, որ Իրաքում արհմիությունների գործունեության համար պայմաններն անհամեմատ ավելի դժվար էին: Երկրում հաստատված վարչաձևը, որ ստացել էր «սև ուժիմ» անունը, դրա ոգեշնչողները՝ անգլիական գաղութարարները, դաժանորեն հետապնդում էին ամեն մի դեմոկրատական ու ազատատենչ շարժում, այդ թվում և արհմիութենականը: Արհեստակցական միությունները գտնվում էին ներքին գործերի մինիստրության անմիջական հսկողության տակ:

Այս փուլում բանվորական շարժման բնորոշ գծերից մեկը՝ գործադուլները, որպես դասակարգային պայքարի զենք օգտագործելն էր: Դրանք կազմակերպված բնույթ ստացան 30-ական թվականների կեսերից և հետագա տարիներին: Պրոլետարիատը բազմիցս իր այդ փորձված զենքին է դիմում Եգիպտոսում:

Սոցիալական հեղափոխության այս փուլի յուրահատկություններից մեկը արաբական երկրներում կոմունիստական կազմակերպությունների և կոմունիստական կուսակցու-

թյունների առաջացումն էր: Գիտական կոմունիզմի գաղա-
փարները սկսում են տարածվել արաբական աշխարհում:

Վ. Ի. Լենինը, որը մեծ ուշադրություն էր դարձնում Արևելքում կոմունիստական կազմակերպությունների ձևա-
վորմանը, կանխատեսելով նրանց մեծ ապագա և բարձր
գնահատելով պատմության կողմից նրանց վրա դրված
առաքելությունը, մատնանշում էր, որ այդ կազմակերպու-
թյունները, հենվելով կոմունիստական ընդհանուր տեսու-
թյան վրա և հարմարվելով յուրահատուկ պայմաններին,
պետք է «կարողանան այդ թեորիան և տակտիկան կիրառել
այն պայմաններում, երբ գլխավոր մասսան հանդիսանում
է «գյուղացիությունը»¹⁶: Նա, ելնելով իրադրությունից,
խորհուրդ էր տալիս Արևելքի կոմունիստներին, որոնք դեռևս
անհրաժեշտ փորձ չունեին, կուրորեն չընդօրինակել ուս-
սական փորձը, այլ ցուցաբերել ստեղծագործական մոտե-
ցում, հաշվի առնելով իրենց երկրների սոցիալ-տնտեսական
և քաղաքական զարգացման մակարդակը, յուրահատուկ պայ-
մանները, ազգային սովորույթներն ու ավանդույթները: Դա
հավասարապես վերաբերում էր նաև արաբական երկրներին:

Կոմունիստական առաջին կազմակերպությունները հայտ-
նվեցին Եգիպտոսում 1918—1919 թթ.: Այդ տարիներին
կոմունիստական խմբակներ են ձևավորվում Ալեքսանդրիա-
յում, Կահիրեում և Պորտ-Սաիդում¹⁷, Եգիպտոսում խիստ
սրվել էին սոցիալ-դասակարգային հակասությունները, բարձ-
րացել էր հակաիմպերիալիստական պայքարի ալիքը, եր-
կիրը գտնվում էր 1919 թ. ապստամբության նախօրյակին:
Խմբերը կազմված էին օտարերկրյա (իտալացի, ֆրանսիա-
ցի, հույն, հետագայում նաև՝ հայ, հրեա և այլն) և արաբ
բանվորներից: 1920 թ. դրանք միավորվեցին և հիմնադրու-
վեց Եգիպտոսի սոցիալիստական կուսակցությունը, որը
1922 թ. վերանվանվեց կոմունիստական կուսակցություն:
Նա դարձավ առաջին կոմունիստական կուսակցությունը
ամբողջ արաբական աշխարհում: 1922 թ. Եգիպտոսի կո-
մունիստական կուսակցությունը մտավ Կոմինտերնի մեջ:
Չնայած ծանր պայմաններին, կուսակցությունը պրոպագան-
դիստական աշխատանք էր տանում բանվորների շրջանում.
մարքսիստական գրքույկներ, թռուցիկներ էր հրատարակում

և տարածում, կազմակերպում էր աշխատավորների մայիս-
մեկյան ցույցեր, որոնցից հիշարժան են 1921 և 1922 թթ.
կազմակերպածները¹⁸: Նա մեծ աշխատանք կատարեց 1921 թ.
արհմիությունների առաջին համագումարի հրավիրման գոր-
ծում, որտեղ հիմնվեց Եգիպտոսի արհմիությունների ընդ-
հանուր կոնֆեդերացիան¹⁹: Նշանակալից էր կոմունիստների
մասնակցությունը 1919 և 1921 թթ. ապստամբություններին:

Դասակարգային և հակաիմպերիալիստական պայքարի
ընթացքում աստիճանաբար մշակվում են Եգիպտոսի կոմու-
նիստական կուսակցության ծրագրային պահանջները, որոնք
հրապարակվեցին 1923 թ. պառլամենտական ընտրությու-
նների նախօրյակին:

Երազրի առաջին մասում կոմունիստական կուսակցու-
թյունը պահանջում էր ընդունել աշխատանքային օրենսդրու-
թյուն, սահմանել 8—ժամյա աշխատանքային օր, միանման
աշխատավարձ օտարերկրյա և տեղական բանվորների հա-
մար, արհմիությունների և բանվոր դասակարգի քաղաքական
կազմակերպությունների ճանաչում, գործարանային կոմիտե-
ների հիմնում, աշխատավարձի բարձրացում և այլն:

Երազրի երկրորդ մասը նվիրված էր ագրարային հար-
ցին: Կոմունիստները պահանջում էին բռնագրավել 100
ֆեոդանից ավելի տարածություն ունեցող կալվածքները և
դրանք բաժանել հողազուրկ գյուղացիներին, վերացնել վաշխա-
ռուական հարկերը, չեղյալ հայտարարել ստրկական բնույթի
վարձակալական պայմանագրերը, կազմակերպել գյուղացիա-
կան կոմիտեներ և այլն: Երազրի երրորդ մասում շոշափվում էին
քաղաքական հարցեր: Դրանց մեջ կենտրոնական տեղ էին
գրավում հակաիմպերիալիստական պահանջները: Կոմունիս-
տական կուսակցությունը մասնավորապես պահանջում էր
Եգիպտոսի լրիվ ազգային անկախությունը, կապիտուլյա-
ցիաների ռեժիմի վերացումը, Սուեզի ջրանցքի ազգայնա-
ցումը և այլն²⁰:

Կոմունիստական կուսակցության այս ծրագիրը և նրա-
նում առաջադրված պահանջները բխում էին Եգիպտոսի սո-
սոցիալ-դասակարգային շերտավորման աստիճանից և, ըստ
էություն, կազմում էին սոցիալական հեղափոխության առա-

շին փուլի սոցիալ-տնտեսական և քաղաքական բովանդակությամբ:

1924 թ. եգիպտական կառավարությունն արգելեց Եգիպտոսի կոմունիստական կուսակցության գործունեությունը, ձերբակալեց և բանտ նետեց նրա ղեկավարներին: Կուսակցությունն անցավ ընդհատակ: Արգելվեցին նաև այլ դեմոկրատական կազմակերպություններ, այդ թվում Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիան:

Գտնվելով ընդհատակի պայմաններում, կոմունիստները շարունակում էին պայքարել իրենց ծրագրային պահանջների համար և ձգտում պահպանել կապը աշխատավորական մասսաների հետ: Նրանք որոշակի ազդեցություն ունեին բանվորների, մտավորականության և ուսանողության շրջաններում:

Իշխանությունների հալածանքները և ներքին որոշ տարածայնությունները հանգեցրին նրան, որ Եգիպտոսի կոմունիստական կուսակցությունը դադարեց միասնական լինելուց: 1942—1952 թթ. առաջացան առանձին կոմունիստական կազմակերպություններ: Դրանցից հիշատակության են արժանի «Ազգային ազատագրության եգիպտական շարժում», «Կայծ», «Նոր արշալույս» և «Ազգային ազատագրության դեմոկրատական շարժումը» (ՀԱԴԵԹՈՒ) կազմակերպությունները²¹: Կոմունիստները գործում էին նաև դեմոկրատական և հակաիմպերիալիստական այլ կազմակերպությունների շարքերում: Օրինակ, 1946 թ. հիմնված «Բանվորների և ուսանողների ազգային կոմիտեում» և այլն²²: Նրանց նկատմամբ ևս չէին դադարում հալածանքները և զրպարտությունները: Եգիպտական իշխանությունների նման քաղաքականության տրամաբանական վախճանը հանդիսացավ 1948 թ. կառավարական որոշումը կոմունիստական կուսակցությանը պատկանելի դավաճանություն համարելու մասին:

Չնայած այս բոլորին, եգիպտական մարքսիստները փորձում էին համակցել պայքարի լեգալ և անլեգալ միջոցները, օգտագործել դեմոկրատական բոլոր հնարավորությունները՝ պահպանելու կապը բանվորական և աշխատավորական մյուս զանգվածների հետ: Համառ ջանքերի շնորհիվ նրանց հաջողվեց միավորել առանձին գործող կազմա-

կերպությունները և վերականգնել կուսակցության միասնությունը: Դա հնարավոր եղավ իրագործել 1980 թ. սեպտեմբերին գումարված կուսակցության առաջին համագումարում, որն ընդունեց կուսակցության նոր ծրագիր և կանոնադրություն²³:

...

Ժամանակագրական առումով Արաբական Արևելքում կոմունիստական երկրորդ կուսակցությունն ստեղծվեց Սիրիայում և Լիբանանում 1924 թ. հոկտեմբերին որպես մեկ միասնական կուսակցություն: Սիրիայի կոմունիստական կուսակցության փաստաթղթերում ասված է. «Սիրիայում և Լիբանանում մարքսիստական խմբակների մի քանի ներկայացուցիչներ հանդիպեցին 1924 թ. և որոշեցին միավորել իրենց կազմակերպությունները մեկ կուսակցության մեջ՝ մարքսիզմ-լենինիզմի հիմքի վրա»²⁴: Նույնը հաստատվում է Լիբանանի կոմունիստական կուսակցության պաշտոնական փաստաթղթերում: «1924 թ. հիմնվեց կոմունիստական կուսակցություն,— կարդում ենք Լիբանանի կոմկուսի պաշտոնական փաստաթղթերից մեկում,— որպես պատմական անհրաժեշտություն պաշտպանելու սփյուռնավորների շահերը և պայքարելու նրանց քաղաքական և սոցիալական ազատագրության համար»²⁵: Սակայն սիրիական և լիբանանյան կոմունիստական կուսակցությունների նյութերում կուսակցության հիմնադրման վերաբերյալ տարբեր ամսաթվեր են նշված: Սիրիայի կոմկուսի 60-ամյակին նվիրված հոդվածում Սիրիայի կոմկուսի քաղբյուրոյի անդամ Խալեդ Համմամին նշում է, որ կուսակցությունը հիմնվել է 1924 թ. հոկտեմբերի 28-ին²⁶, իսկ Լիբանանի կոմկուսի հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ գրած իր հոդվածում Լիբանանի կոմկուսի քաղբյուրոյի անդամ Ռաֆիկ Սամհունը նշում է, որ Սիրիայի և Լիբանանի կոմկուսը հիմնվել է 1924 թ. հոկտեմբերի 24-ին²⁷:

Կուսակցությունը հիմնվեց արաբ և հայ հեղափոխական կազմակերպությունների միավորման հիման վրա: Այդ գործում նշանակալի էր հայ առաջին մարքսիստների դերը:

Դեռևս 1924 թ. սկզբներին Արթին Մադեյանի նախաձեռնությամբ հիմնվում է Լիբանանում առաջին կոմունիստական կազմակերպությունը՝ «Սպարտակը»²⁵, որը կազմված էր բացառապես հայ երիտասարդ մարքսիստներից և իր մասնակցողներն ուներ Բեյրութում, Հալեպում, Ջահլեում և Ջերիկ Մուսայում²⁶:

1924 թ. հոկտեմբերի 24-ին, մի խումբ արաբ մարքսիստներ Ֆուադ Շիմալիի և Յուսուֆ Յազբեքի նախաձեռնությամբ հիմնում են իրենց կոմունիստական կազմակերպությունը, որը կոչվում է Լիբանանի կոմունիստական կուսակցություն²⁷:

Այս երկու կազմակերպությունները աշտեղյակ էին միմյանց դոյության մասին և նրանց միջև չկար որևէ համագործակցություն: Դրությունը փոխվեց 1925 թ., երբ «Սպարտակը» նախաձեռնությամբ Լիբանանում առաջին անգամ լքվեց մայիսմեկյան տոնակատարությունը: Հայ կոմունիստները կազմակերպում են ցույց և հետո հանդիսավոր ժողով Բեյրութի «Կրիստալ» կինոթատրոնի շենքում: Դա առիթ դարձավ հայ և արաբ կոմունիստներին ծանոթության համար: Ֆուադ Շիմալին և Յուսուֆ Յազբեքն առաջարկում են հայ կոմունիստներին հանդիպել և քննարկել համատեղ գործողությունների հարցը: Հանդիպումը կայանում է 1925 թ. մայիսի 2-ին Միհրան Վիհրունիի Բեյրութի Բաբ ալ-Խդրիս թաղամասում գտնվող արհեստանոցում: Կողմերը համաձայնում են «Սպարտակ» կազմակերպության հետ միավորման մասին²⁸: Նույն գիշերը «Սպարտակ» կազմակերպության ժողովը միաձայն հավանություն է տալիս ընդունված որոշմանը: 1925 թ. մայիսի 3-ին կայացավ կոմունիստական կազմակերպությունների ղեկավարների պաշտոնական հանդիպումը, որին մասնակցել են Յուսուֆ Յազբեքը, Ֆուադ Շիմալին, Էլի Թիբրը, Արթին Մադեյանը և Հայկազուն Բոյաջյանը, որը Լիբանանի առաջին հայ կոմունիստներից էր: Որոշում է ընդունվում երկու կազմակերպությունները միավորել մեկ կուսակցության մեջ, որը պաշտոնապես կոչվեց Լիբանանի և Սիրիայի կոմունիստական կուսակցություն: Կազմվեց նաև կուսակցության Կենտրոնական կոմիտե, որի առաջին կազմի մեջ մտան Յուսուֆ Յազբեքը, որպես քար-

տուղար, Ֆուադ Շիմալին, էլի Թիբրը, Արթին Մադեյանը, Հայկազուն Բոյաջյանը և Ֆարիդ Թահամեն՝ անդամներ³²։ Միավորումը բարենպաստ պայմաններ ստեղծեց կոմունիստական շարժման ծավալման համար։ «Սպարտակի» և հայ կոմունիստների միացումը արաբական կոմունիստական կազմակերպության հետ հնարավորություն տվեց կուսակցական նոր բջիջներ ստեղծել Սիրիայի և Լիբանանի տարրեր վայրերում։ Այդ առթիվ Յուսուֆ Յազբեքը գրել է. «Կոմունիստական կազմակերպությունը (նկատի ունի արաբական—ն. Հ.), որ ստեղծվել էր այն ժամանակ, մինչև 1925 թ. հայերի հետ միանալը շուներ որևէ մասնաճյուղ և նախքան հայերի հետ միանալը մենք շունեինք կոմունիստական խլամբակ Հալեբում»³³։

Կուսակցությունը հնարավորություն չունեցավ անմիջապես հրավիրելու որևէ համաժողով։ Միայն 1925 թ. դեկտեմբերին, երբ կուսակցությունը հարկադրված էր գործել անլեգալ պայմաններում, հրավիրվեց կուսակցության առաջին ազգային կոնֆերանսը, որը պետք է մշակեր կուսակցության կազմակերպչական հիմունքները և ծրագրային պահանջները։

Կոնֆերանսն ընտրեց նոր Կենտկոմ, որի կազմի մեջ մտան նախկին բոլոր հինգ անդամները։ Սակայն «ֆրանսիական իշխանությունները կոնֆերանսից անմիջապես հետո ձերբակալեցին և բանտ նետեցին այն ժամանակվա կուսակցական դեկավարությունը՝ ընկերներ Ֆ. աշ-Շիմալին, Յու. Իբրահիմ Յազբեկին, Ա. Մադեյանին»³⁴։ Նրանց դատեց ռազմական ատյանը, որը կոմկուսի դեկավարներին մեղադրում էր բանակը խռովության հրահրելու մեջ։

Կոմկուսը 20—30-ական թթ. իր բջիջները հիմնեց Բեյրութից և Դամասկոսից բացի նաև Ջահլեում, Տրիպոլիում, Բաալբեկում, Հալեպում, Հոմսում և այլ վայրերում։ Շուտով Կենտրոնական կոմիտեն համալրվեց նոր անդամներով՝ Ահմադ Ջազա, Ֆավզի առ-Ռահիմ, Ռիշադ Իսա, Խալիդ Բեկդաշ և ուրիշներ, և Կենտկոմի նստավայրը Բեյրութից տեղափոխվեց Դամասկոս³⁵։

1930 թ. հուլիսի 8-ին գումարվեց կուսակցության երկրորդ ազգային կոնֆերանսը, որն ընդունեց առաջին կու-

սակցական ծրագիրը: Այն հրատարակվեց առանձին գրքուկով ուղիղ մեկ տարի անց՝ 1931 թ. «Ինչի՞ համար է պայքարում Սիրիայի կոմունիստական կուսակցությունը» վերնագրով³⁶:

Կոմկուսը իր գլխավոր նպատակն էր համարում «կապիտալիստական շահագործողական սխտեմի տապալումը և սոցիալիստական սխտեմի հաստատումը»³⁷: Նա ձգտում էր դրան հասնել ոչ թե ռեֆորմների, այլ հեղափոխական պայքարի միջոցով: Ծրագրում մեծ տեղ էր հատկացվում հակաիմպերիալիստական պայքարին, Սիրիան և Լիբանանը ֆրանսիական տիրապետությանից ազատագրելու խնդիրներին:

Կոմկուսը պահանջում էր. Սիրիայի լիակատար անկախություն և միասնություն, օկուպացիոն (ֆրանսիական — ն. Ն.) բանակի հեռացում և մանդատի (ֆրանսիական — ն. Ն.) վերացում³⁸:

Ծրագրում զդալի տեղ էին գրավում դեմոկրատական իրավունքների հաստատման և ընդլայնման, մասնավորապես մամուլի, խոսքի տպագրության, միությունների, ցույցների և դործադուլների ազատության պահանջները³⁹: Մեծ տեղ էին գրավում բանվորների և գյուղացիների շահերը օրենսդրական կերպով պաշտպանելու և նրանց կյանքի պայմանները բարելավելու, ինչպես նաև կանանց իրավունքների պաշտպանության հարցերը⁴⁰:

Մակայն կոմկուսը ելնում էր այն բանից, որ իր առաջադրած պահանջների իրականացումը հնարավոր կլինի այն դեպքում, եթե հաստատվի բանվորների և գյուղացիների կառավարություն: Այդ առումով, որպես եզրափակիչ ակկորդ էին հնչում ծրագրում գրի առնված տողերը՝ «Սիրիայի կոմունիստական կուսակցությունը մշտական պայքար է մղում հասնելու հետևյալ պահանջի իրականացմանը. ստեղծել բանվորների և գյուղացիների կառավարություն Սիրիայում»⁴¹:

Սիրիայի և Լիբանանի կոմկուսի վերոհիշյալ ծրագրում ճիշտ են սահմանված կուսակցության խնդիրները անկախության նվաճման, դեմոկրատական ազատությունների հաս-

տատման և աշխատավորների իրավունքների պաշտպանութ-
յան հարցերում:

Սակայն ծրագրում որոշ հարցեր ճիշտ չեն լուսաբան-
ված և ճիշտ չեն սահմանված կուսակցության և աշխատա-
վորական զանգվածների պայքարի խնդիրները: Նկատի
ունենք ծրագրի երկու հիմնական դրույթները՝ պայքարը
կապիտալիզմի տապալման և սոցիալիստական հասարա-
կարգի կառուցման և բանվոր դասակարգի ու գյուղացիու-
թյան կառավարության ստեղծման համար: Այդ ժամանակ
նման պահանջների առաջադրման համար համապատասխան
պայմաններ չկային ո՛չ Սիրիայում և ո՛չ էլ Լիբանանում:
Դեռ չէին հասունացել օբյեկտիվ (երկրի սոցիալ-տնտեսա-
կան զարգացման մակարդակը, հակասությունների սրումը
աշխատանքի և կապիտալի միջև և այլն) և սուբյեկտիվ (հա-
սարակության անբավարար դասակարգային շերտավորում,
պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության ան-
բավարար ձևավորում, համապատասխան մարքս-լենին-
յան մասսայական կուսակցության բացակայություն և այլն)
պայմանները, որոնք հնարավորություն կտային, առանց մի-
ջանկյալ աստիճանների, ուղղակի թեւակոխել հեղափոխու-
թյան սոցիալիստական փուլը:

Կուսակցության ծրագրային նման դիրքորոշումը հան-
գեցրեց նրա և ազգային բուրժուազիայի միջև հակասու-
թյունների սրմանը, որը, տվյալ պատմական ժամանակա-
շրջանում նույնպես շահագրգռված էր օտարերկրյա՝ ֆրան-
սիական տիրապետության վերացման և Սիրիայի ու Լիբա-
նանի քաղաքական անկախության նվաճման մեջ: Մի կող-
մից թուլանում էր հակաիմպերիալիստական ճակատը, իսկ
մյուս կողմից նպաստավոր պայմաններ ստեղծվում կոմկու-
սի բրեշակի մեկուսացման համար հասարակայնության
մյուս խավերից:

Նման սխալները, մանավանդ 30-ական թթ., բնորոշ էին
ոչ միայն Սիրիայի և Լիբանանի կոմկուսին, այլև Արևելքի
մյուս երկրների կոմունիստական շարժմանը: Հետագայում
այդ սխալը հաղթահարվեց: Դրանում մեծ է կոմինտերնի
7-րդ կոնգրեսի (1935 թ.) որոշումների պատմական նշանա-

կոթիւնը, որը կոմկուսներին կողմնորոշեց դեպի ազգային բուրժուազիայի հետ միաձնական ճակատ ստեղծելու՝ ընդդէմ իմպերիալիզմի և գաղութատիրութեան: «30-ական թվականների վերջին,— գրում է Խալեդ Համմամին,— ՍԿԿ-ն հետադարձ հակագաղութային շարժման մեջ ազգային բուրժուազիայի դերի ժխտման դիրքորոշումից: Ղեկավարվելով Կոմինտերնի 7-րդ կոնգրեսի որոշումներով, կոմունիստները հանդես եկան լայն ազգային հակագաղութային ճակատ ստեղծելու կոչով, միաժամանակ ընդգծելով, որ անհրաժեշտ է զգոնութեամբ ցուցաբերել և պայքարել բուրժուազիայի տատանումների դեմ, որոնք պայմանավորված են նրա դասավարդային էութեամբ»⁴²:

Դա միանգամայն ճիշտ վերակողմնորոշում էր, որը նըպաստեց հակաիմպերիալիստական ուժերի միավորմանը, նրանց պայքարի ուժեղացմանը և այդ պայքարում կոմունիստների ու բանվոր դասակարգի տեսակարար կշռի բարձրացմանը:

Սիրիայի ու Լիբանանի կոմունիստական կուսակցության ստեղծման առաջին իսկ օրից նշանակալից է եղել հայ մարքսիստ-լենինյանների գործունեությունը նրա շարքերում: Արդեն նշվեց, որ կուսակցության հիմնադիր կազմակերպություններից մեկը հայ հեղափոխական «Սպարտակ» կազմակերպությունն էր, իսկ Ա. Մադեյանը և Հ. Բոյաջյանը մտան կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին կազմի մեջ*: Հետագայում ակտիվ դեր սկսեցին խաղալ նաև Հ. Ադրաշյանը, Ե. Էլիզյանը, Գ. Տեր-Նիկողոսյանը, Գ. Ադարյանը և ուրիշներ:

1924 թ. կոմկուսի հիմնադրումից հետո ստեղծվեց նաև Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության Հայկական սեկցիա⁴³: Իր գոյության 23 տարիների ընթացքում այդ սեկցիան մեծ աշխատանք է տարել Սիրիայի և Լիբանանի հայ համայնքների շրջանում մարքս-լենինյան հեղափոխական գաղափարների տարածման բնագավառում: Նրա գոր-

* Ա. Մադեյանը հետագայում զարձակ կուսակցության Կենտկոմի քաղրյուրոյի անդամ և փարտուղար:

ժողովուրդի կենտրոնում են գտնվել հայ-արարական բա-
 րեկամության ամրապնդումը, հայերին և արաբներին միմ-
 յանց դեմ գրգռելու, նրանց միջև սեպ խրելու ֆրանսիական
 մանդատային իշխանությունների փորձերի մերկացումը:
 Շնորհիվ նման ճիշտ և հեռատես քաղաքականության, հայ
 աշխատավորական զանգվածները հեղափոխական պայքա-
 րում կանգնեցին արաբ աշխատավորների կողքին, նպաս-
 տելով հակաիմպերիալիստական ճակատի ամրապնդմանը
 և սոցիալական հեղափոխության առաջին փուլի խնդիրների
 իրագործմանը: Եվ այդ պայքարում հայերը, ինչպես և
 արաբները, քիչ զոհեր չտվեցին: 1968 թ. գումարված Լիբա-
 նանի կոմկուսի 2-րդ համագումարում կուսակցության առա-
 ջին քարտուղար Նիկոլա Շաուրի հաշվետու զեկուցման մեջ
 նշվեց, որ 44 տարիների ընթացքում կուսակցությունն ան-
 ցել է հերոսական ուղի, և նա օրինականորեն հպարտանում
 է, որ նրա շարքերից դուրս են եկել այնպիսի հերոս մար-
 տիկներ, որոնք պայքարել են երկրի անկախության նվաճ-
 ման և ժողովրդական մասսաների շահերի պաշտպանության
 համար «և մտել Լիբանանի, արաբական և համաշխարհա-
 յին ազգային-ազատագրական և հեղափոխական շարժման
 պատմության մեջ»: Դրանց մեջ կուսակցության ղեկավար,
 հերոս նահատակ Ֆարաջալլահ ալ-Հելուի անվան հետ միա-
 սին հիշատակվեցին «ընկերներ էդվար Շարթունին, Աթամ
 Եղյայանը, Պողոս Թաթարյանը, Սուլեյման Ալի Շարիֆը,
 Անվար ալ-Աշան, Ջորջ Արուն, Բաբկեն Բոյաջյանը, Ժիրայր
 Մատաղջյանը, Մարտիրոս Կոշկարյանը, Արթին Կուլբեն-
 կյանը, Հակոբ Ադաջյանը, Հաննա Ջաքարիան, Պետրոս Խա-
 շատրյանը, Թորոս Դեմիրճյանը և Կոջոյան եղբայրները»⁴⁴:

Փաստորեն Սիրիայի և Լիբանանի կոմկուսի Հայկական
 սեկցիան այն գլխավոր օղակն էր, որի միջոցով հայ աշ-
 խատավորական գիտակից զանգվածները ներգրավվում էին
 հեղափոխական պայքարի մեջ, թեև նա միակը չէր:

Հայկական սեկցիան ինքնալուծարքի ենթարկվեց 1947 թ.
 դեկտեմբերի 30-ին⁴⁵:

Ինչպես նշվեց, կուսակցությունը ստեղծվել էր որպես
 Սիրիայի և Լիբանանի մեկ միասնական կուսակցություն:
 Նման իրավիճակը պահպանվեց մինչև 1944 թ. հունվարի

ակիզքը: 1943 թ. դեկտեմբերի 31-ից մինչև 1944 թ. հուն-
վարի 2-ը տեղի ունեցավ կուսակցական համագումար: Ար-
դեն վերացվել էր ֆրանսիական մանդատը և հռչակվել Սի-
րիայի ու Լիբանանի որպես երկու ինքնուրույն պետութ-
յունների անկախութ-
յունը: «Համագումարը, հաշվի առնելով, որ
ստեղծվել են Լիբանանի և Սիրիայի անկախ պետութ-
յուններ, որ փոխվել են քաղաքական ու սոցիալական պայմանները,
և յուրաքանչյուր երկրի առջև իր ազգային խնդիրներն են
կանգնած, որոշեց ստեղծել Սիրիայի և Լիբանանի առանձին
կոմունիստական կուսակցութ-
յուններ, յուրաքանչյուրն իր
կենտրոնական կոմիտեով և ղեկավար այլ մարմիններով»⁴⁵:

Լիբանանի կոմունիստները դա համարում են իրենց
կուսակցության առաջին, իսկ սիրիական կոմունիստները՝
երկրորդ համագումարը*:

Այդ համագումարում երկու կուսակցութ-
յուններն էլ ըն-
դունեցին Ազգային խարտիա՝, որը փաստորեն ստեղծված նոր
պայմաններում սահմանում էր կուսակցութ-
յունների առջև
կանգնած խնդիրները և այդ իմաստով ծրագրի դեր կատա-
րում: Ազգային խարտիան պահանջում էր Սիրիայի լիակա-
տար անկախութ-
յուն, սովերենութ-
յուն և ազատութ-
յուն, իս-
կական դեմոկրատական վարչաձևի հաստատում, ազգային
համերաշխության հաստատում արաբական ժողովուրդների
հետ՝ իրականացնելու համար նրանց լիակատար ազգային
ազատագրումը, ազգային սովերենութ-
յան տարածում օտար-
երկրյա ֆինանսական, արդյունաբերական և առևտրական
հաստատութ-
յունների վրա, հավասարութ-
յան հաստատում
ընդ որ սիրիացիների միջև, դեմոկրատական ազատութ-
յուն-

* 1982 թ. մարտին, Բեյրութում գտնվելու ժամանակ, տողերիս հե-
տինակը հանդիպեց Ա. Մադեյանի հետ և հետաքրքրվեց, թե ինչու այդպի-
սի տարակարծութ-
յուն գոյութ-
յուն ունի համագումարի հարցի շուրջը:
Ա. Մադեյանը պարզաբանեց, որ սիրիական կոմունիստները 1930 թ.
գումարված ազգային կոնֆերանսը 50-ական թվ. վերջերից սկսեցին հա-
մարել որպես առաջին համագումար, ուստի և 1944 թ. գումարված
համագումարը նրանք դիտում են որպես երկրորդ համագումար: Իսկ Լի-
բանանի կոմունիստները գտնում են, որ 1930 թ. հուլիսին գումարվել է
կոնֆերանս, ինչպես նախկինում բոլորն էին այդպես համարում: Այդ պատ-
ճառով էլ նրանք առաջին համագումարը համարում են 1944 թ. համա-
ժողովը:

ների ապահովում, երկրի տնտեսական մակարդակի բարձրացում, ազգային արդյունաբերության, քաղաքի և գյուղի մանր արտադրողների պաշտպանություն, գյուղատնտեսության զարգացում, պայքար անգործության և աղքատության դեմ և այլն⁴⁷։ Նման պահանջներ էին առաջադրված նաև Լիբանանի կոմունիստական կուսակցության Ազգային խարտիայում⁴⁸։

Երկու կուսակցությունների նոր ծրագրային պահանջներն առաջադրվել էին քաղաքական անկախության նվաճման թարմ տպավորության տակ և դա իր կնիքն է դրել առաջադրված պահանջների բնույթի վրա։ Դրանք ճիշտ լինելով հանդերձ, վկայում էին սակայն, որ կուսակցությունների պատկերացումները և ձևակերպված պահանջները դեռևս մնում էին սոցիալական հեղափոխության առաջին փուլի շրջանակներում։ Այդ պահանջներն ավելի շուտ նպատակամղված էին առաջին փուլի խնդիրների հետևողական կենսագործմանը, քան նախանշում էին անցում դեպի հեղափոխական նոր փուլ։ Սիրիայի կոմկուսը դրան անդրադարձավ հետագայում, 60-ական թվականների սկզբին։

Լիբանանի կոմկուսը «1948 թ. անլեգալ դրության անցնելու կապակցությամբ, միավորվեց Սիրիայի կոմկուսի հետ։ 1958 թ., Սիրիայի և Եգիպտոսի միավորումից հետո, ԼԿԿ-ն կրկին դարձավ ինքնուրույն, թեև մինչև 1961 թ. գոյություններ այդ կուսակցությունների միացյալ կենտրոնական ղեկավարություն»⁴⁹։ Այս ամբողջ ժամանակահատվածում, մասնավորապես 60-ական թվականներին և դրանից հետո, Սիրիայի և Լիբանանի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումն ընթացավ տարբեր ուղիներով, և դրա հետ կապված միանգամայն այլ խնդիրներ կանգնեցին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունների առջև։

«Եթե չլիներ Հոկտեմբերյան հեղափոխությունը, — նշում է Իրաքի կոմկուսի ականավոր ղեկավարներից Զաքի Խայրին, — մենք չէինք իմանա գիտական սոցիալիզմի և մարքսիզմ-լենինիզմի մասին»⁵⁰։ Մարքսիստական-լենինյան

դադափարները, թեև մեծ դժվարությամբ, տարածվում են
 երկրով մեկ, և դրանց հիման վրա 30-ական թվականների
 սկզբներին իրաքում ձևավորվում են մի շարք կոմունիստական
 կազմակերպություններ: Նման կազմակերպություն 1932 թ.
 հիմնվեց Ան-Նասիրիայում Յուսուֆ Սալմանի կողմից⁵¹,
 որը հետագայում դարձավ Իրաքի կոմկուսի ականավոր դե-
 կավարը: 1933 թ. ընթացքում կոմունիստական կազմակեր-
 պություններ ստեղծվեցին նաև մայրաքաղաքում՝ Բաղդա-
 դում, Բասրայում և այլ քաղաքներում: Այդ կազմակեր-
 պություններում և խմբերում ընդգրկված էին բանվորներ,
 ուսանողներ, ծառայողներ, ուսուցիչներ, բժիշկներ, արվեստի
 ներկայացուցիչներ: Կոմունիստական կազմակերպությունների
 և խմբերի առաջացումը անհրաժեշտություն դարձրեց նրանց
 միավորումը մեկ միասնական կազմակերպության՝ կուսակցու-
 թյան մեջ: Իրաքի երիտասարդ կոմունիստներն այդ խնդիրը
 հաջողությամբ լուծեցին 1934 թ.: Նույն տարվա դեկտեմբերին
 նրանց ջանքերով դոմաճվեց կուսակցական կոնֆերանս,
 որը 1934 թ. դեկտեմբերի 31-ին հռչակեց Իրաքի կոմունիս-
 տական կուսակցության ստեղծումը՝ երրորդն արարական
 աշխարհում: Սկզբնական շրջանում, ելնելով կոնսսիդերացիա-
 լի պահպանման խնդիրներից, կուսակցությունը կոչվում էր
 «Իմպերիալիզմի և շահագործման դեմ պայքարի կոմիտե»⁵²:
 Կոնֆերանսն ընտրեց ղեկավար մարմին՝ Կենտրոնական կո-
 միտե, և սահմանեց կուսակցության գլխավոր խնդիրները,
 որոնց մեջ կարևոր էին երկուսը՝ աշխատավորների շահերի
 պաշտպանություն, և, երկրորդ՝ պայքար Իրաքի լիակատար
 անկախության և սուվերենության համար⁵³:

* Անգլիական մանդատը շեղյալ հայտարարվեց և Իրաքը ձևականո-
 րեն անկախ հռչակվեց 1932 թ.: Սակայն մինչև ապրիլ 1930 թ., Անգլիան
 Իրաքին պարտադրեց այսպես կոչված «բարեկամության և դաշինքի»
 պայմանագիր, որը լիովին ապահովում էր Անգլիայի քաղաքական, ուղ-
 մական և տնտեսական տիրապետությունը Իրաքում, ի շիք դարձնելով նրա
 անկախությունը: Կոմունիստները և մյուս հայրենասիրական ուժերը իրա-
 վացիորեն դռնում էին, որ Իրաքի անկախության հարցը չի լուծված, և
 պայքարում էին նրա ոչ թե ձևական, այլ իսկական և լիակատար ան-
 կախության համար: Այս պահանջը մնաց կենտրոնական սոցիալական հե-
 ղափոխության առաջին փուլի ամբողջ ընթացքում, ընդհուպ մինչև 1958 թ.
 հուլիսի 14-ի հեղափոխությունը:

Առաջին խնդրի լուծմանն էին կոչված կոմկուսի հետևյալ պահանջները. սահմանել ութժամյա բանվորական օր, կիրառել հողային բարեփոխում, անցկացնել ազատ դեմոկրատական ընտրություններ, քաղցածներին ապահովել հացով և այլն: Կուսակցության կարևոր լոզուգներից մեկը դարձավ «Հաց՝ քաղցածներին»:

Երկրորդ խնդրի իրականացման համար կուսակցությունն առաջարկում էր շեղյալ հայտարարել 1930 թ. անգլո-իրաքյան պայմանագիրը, վերացնել Իրաքի տարածքում՝ Հաբբանիյայում և Շուալբեում գտնվող անգլիական ռազմական քաղաները, վերանայել օտարերկրյա նավթային ընկերությունների հետ կնքված պայմանագիրը, որոնք ծառայում էին Իրաքի հիմնական բնական ազգային հարստության կողոպտմանը և արևմտյան իմպերիալիստական մոնոպոլիստների կողմից առասպելական հարստությունների դիզմանը:

Կոմունիստների ազդեցության ուժեղացման և մարքսիստական-լենինյան գաղափարների տարածման գործում մեծ դեր խաղաց «Քիֆահ աշ-Շաաբ» («Ժողովրդի պայքար») թերթը, որը սկսեց լույս ընծայվել 1935 թ. հունիսից⁵³: Ընդհանրապես կուսակցությունը մեծ ուշադրություն էր դարձնում թերթերի, գրականության, մասնավորապես թուրքիկների, գրքույկների և այլնի հրատարակմանը, որոնցում մատչելի կերպով պարզաբանվում էին Իրաքի առջև կանգնած կարևոր քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրները և կոմկուսի դիրքորոշումը դրանց հանդեպ:

Միաժամանակ կուսակցությունը լայն աշխատանք ծավալեց ընդլայնելու իր կապերը բանվորական շրջանների հետ: Կոմունիստներն ակտիվորեն մասնակցում են մի շարք գործադուլների և ցույցերի, հաճախ հանդիսանալով դրանց կազմակերպիչներն ու ղեկավարները: Հիշատակության ևն արժանի կոմունիստների մասնակցությունը նախապատերազմյան տարիներին Բասրայի և Կիրիկուկի նավթագործների, Բաղդադի և Հաբբանիյայի շինարարական բանվորների գործադուլներին:

Իրաքի կառավարող շրջանները ակնդետ հետևում էին կոմունիստներին և խստագույնս պատժում նրանց, կային նաև ներքին դժվարություններ։ Անբավարար քաղաքական կոմիսիանությունը, տեսական ցածր մակարդակը, մանրբուծության միջավայրը և այլն հանգեցրին այն բանին, որ Իրաքի կոմկուսի ներսում ձևավորվեցին տարբեր ֆրակցիաներ և դրսևորվեցին ձախ և աջ թեքումներ։ Դրանց դեմ պայքար ծավալեց կուսակցության առողջ, մարքսիզմ-լենինիզմի գաղափարներին հավատարիմ կորիզը՝ Յուսուֆ Սալմանի (Ֆահդի) գլխավորությամբ։ Կուսակցական կադրերին հեղափոխության հարցերում ճիշտ կողմնորոշելու և ֆրակցիաների դեմ պայքար ծավալելու գործում մեծ նշանակություն ունեցավ Ֆահդի «Կոմունիստական կուսակցություն և ոչ թե դեմոկրատական սոցիալիզմի կուսակցություն» աշխատությունը, որ լույս տեսավ 1938 թ., որում բացահայտվեց ձախ թեքման էությունը։ Ֆահդի կարծիքով ձախ թեքումը դրսևորվում էր հեղափոխական պրոցեսում միջանկյալ խավերի դերի գերազնահատման մեջ։ Այդ թեքման հետևորդները փորձում էին համոզել, ինչպես գրում էր Ֆահդը, որ «Իրաքում սոցիալիզմը պրոլետարիատի պայքարի արդյունք չի լինի, և որ «Իրաքում հեղափոխական դասակարգ են հանդիսանում միջին խավերը, որոնց ներկայացուցիչների առջև լայնորեն պետք է բացել կուսակցության դռները»⁵⁴։

Ինչ վերաբերում է աջ թեքմանը, ապա կուսակցության շարքերում դրա առաջացման պատճառը համարվում էր մարքսիզմից հեռանալը և անցումը դեմոկրատական սոցիալիզմի դիրքերը⁵⁵։

Ֆահդը և նրա կողմնակիցները 30-ական թթ. վերջերին— 40-ական թթ. սկզբներին անդուլ պայքար են ծավալում ֆրակցիոնների դեմ՝ պահպանելու կուսակցական սկզբունքների անաղարտությունը և կազմակերպչորեն ամրապնդելու կուսակցությունը։ 1943 թ. սկզբներին Իրաքի կոմկուսի (ԻԿԿ) գլխավոր քարտուղար ընտրվեց Յուսուֆ Սալմանը՝ Ֆահդը, որն ամբողջապես նվիրված էր մարքսիզմ-լենինիզմի գաղափարներին, կարողանում էր ստեղծագործաբար կիրառել այդ գաղափարները Իրաքի յուրահատուկ պայմաններում։

Քանի որ կուսակցության կենտրոնական օրգան «Աշ-
Շարարա» թերթն անցել էր ֆրակցիոնների ձեռքը, ուստի
կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ կենտկոմի
անդամներ Հուսեյն Աշ-Շաբիբին և Զաքի Բասիմը 1943 թ.
կազմակերպեցին կուսակցական նոր օրգանի՝ «Ալ-Կաիդա»
թերթի հրատարակումը⁵⁶։

Այս բոլորը նպաստավոր պայմաններ ստեղծեց 1944 թ.
փետրվարին կուսակցական կոնֆերանսի հրավիրման հա-
մար⁵⁷։ Կոնֆերանսը հակահարված տվեց ֆրակցիաներին,
դատապարտեց ձախ և աջ թեքումները, հավաստեց իր հա-
վատարմությունը մարքսիզմ-լենինիզմին, կուսակցական շի-
նարարության վերաբերյալ լենինյան գաղափարական և
կազմակերպչական սկզբունքներին։ Կոնֆերանսը մշակեց և
ընդհանուր ձևով հավանություն տվեց կուսակցության ծրա-
գրի և կանոնադրության նախագծերին։

1945 թվականը շրջադարձային եղավ կուսակցության
կյանքում. ապրիլին գումարվեց ԻԿԿ-ի առաջին համագու-
մարը։ Համագումարը քննարկեց և հավանություն տվեց կու-
սակցության ծրագրին՝ Իրաքի կոմունիստական կուսակցու-
թյան ազգային խարտիային։ Նա սահմանեց կուսակցության
կարևորագույն խնդիրները սոցիալական հեղափոխության
առաջին փուլում։ Կուսակցության գլխավոր դեիզը դարձավ
«Ազատ հայրենիք, երջանիկ ժողովուրդ» լոզունգը, որի ոգով
և կազմված էր ծրագիրը⁵⁸։

Ծրագրի առաջին կետում ասված էր, որ ԻԿԿ-ն «պայ-
քարում է հանուն ազգային սուվերենության, հանուն երկրի
իրական անկախության»⁵⁹։

Ծրագրի կարևոր պահանջներից էր երկրի ներքին կյան-
քի լրիվ դեմոկրատականացումը։ Դրա համար ԻԿԿ-ն պա-
հանջում էր ստեղծել մի կառավարություն, որն աշխատեր
ի շահ ժողովրդի, կազմել ժողովրդի կողմից ընտրված պառ-
լամենտ, հետևողականորեն կիրառել ժողովրդի դեմոկրա-
տական իրավունքների վերաբերյալ սահմանադրության մեջ
արձանագրված հոդվածները և շեղյալ հայտարարել սահմա-
նադրության ոգուն շահապատասխանող բոլոր օրենքներն
ու հրամանագրերը⁶⁰։

Ծրագրում զգալի տեղ էր հատկացված տնտեսական

Հարցերին: Այնտեղ հստակ կերպով սահմանված էր, որ Իկկ-ն պայքարում է ազգային անկախ տնտեսության, հատկապես արդյունաբերության զարգացման համար, դա դիտելով որպես Իրաքի իսկական անկախության նվաճման բաղկացուցիչ մաս: Այդ նպատակով ծրագրում առաջադրվում էր երկիրը լրիվ կերպով օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալի, ընկերությունների ու բանկերի ազդեցությունից ազատելու պահանջը⁶¹: Դրա հետ միասին Իկկ-ն առաջադրում էր կիրառել ագրարային ռեֆորմ, գտնելով, որ խոշոր լատիֆունդիաները և ազատ պետական հողերը պետք է մանր հողակտորներով, առանց որևէ փոխհատուցման, հանձնել գյուղացիներին, նրանց ցույց տալ ֆինանսական օգնություն և այլն:

Ծրագրում զգալի տեղ էին գրավում նաև աշխատավորների տնտեսական դրության բարելավման հարցերը, ինչպես Ց-ժամյա բանվորական օրվա սահմանում, հարկերի կրճատում, կանանց տղամարդկանց հետ հավասար իրավունքների տրամադրում և այլն⁶²:

Քաղաքական և սոցիալ-տնտեսական բնույթի այս բոլոր պահանջների առաջադրումը բխում էր սոցիալական հեղափոխության առաջին փուլի, ազգային-ազատագրական պայքարի բուն էությունից և պայմանավորված էր տվյալ պատմական ժամանակաշրջանում Իրաքի սոցիալ-դասակարգային շերտավորման աստիճանով:

Համագումարը հաստատեց կուսակցության կանոնադրությունը և ընտրեց ղեկավար մարմիններ: Իկկ-ի գլխավոր քարտուղար վերընտրվեց Յուսուֆ Սալմանը (Ֆահդ), իսկ Կենտկոմի կազմում ընտրվեցին Յուսուֆ Սալմանը, Զաքի Բասիմը, Հուսեյն Մուհամմեդ աշ-Շաբիբին, Աբդ Թամիրը, Մալիք Սաիֆը, Մուլլա Շաբիֆը, Սամի Նադիրը և ուրիշներ⁶³:

Իկկ-ի գործունեության մեջ, նրա ստեղծման առաջին իսկ օրից, մեծ տեղ է գրավել ազգային փոքրամասնությունների, և առաջին հերթին, քրդերի հարցը: Կուսակցության առաջին համագումարը, բնականաբար, չէր կարող շրջանցել այդ հարցը և այն իր համապատասխան արտացոլումը գտավ ընդունված ծրագրում: Այդ կապակցությամբ հետև-

յալն էր ասված. կոմկուսը պայքարում է «ստեղծելու համար քուրդ ազգային փոքրամասնության իրավունքների իսկական հավասարություն, հարգելով նաև փոքր ազգային ու ցեղային խմբերի, ինչպիսիք են թուրքմենների, հայերի և եզդիների իրավունքները»⁶⁴։ Նշելով այդ խնդիրներից և ձգտելով մարքսիզմ-լենինիզմի գաղափարները տարածել իրաքի ոչ արաբ բնակչության շրջաններում, համագումարը որոշեց ստեղծել ԻԿԿ-ի քրդական և Հայկական սեկցիաներ։ Ապագայում նախատեսվում էր ստեղծել նաև Թուրքմենական և Ասորական բաժիններ⁶⁵։ Դա անհրաժեշտ էր, քանի որ իրաքում ծանր էր ոչ արաբ բնակչության՝ քրդերի, ասորիների, հայերի, եզդիների և ազգային այլ փոքրամասնությունների վիճակը, իրաքի միապետական հետադիմական ռեժիմը նրանց նկատմամբ վարում էր բացահայտ ձուլման քաղաքականություն։ ԻԿԿ-ն պայքար ծավալեց նրանց ազգային իրավունքների պաշտպանության համար, ձեռնամուխ եղավ քրդերեն և հայերեն լեզուներով կուսակցական գրականության հրատարակմանը և արաբ ու ոչ արաբ ժողովուրդների բարեկամական կապերի ամրապնդմանը։ ԻԿԿ-ն չափազանց մեծ ուշադրություն էր դարձնում քրդական հարցին և քրդերի շրջանում տարվող աշխատանքներին, քանի որ այդ հարցը ամենասուրն էր և մեծ էր քրդերի տեսակարար կշիռը իրաքի հասարակական-քաղաքական կյանքում։

Դրա հետ միասին բարձր գնահատականի է արժանի այն աշխատանքը, որ կատարեց ԻԿԿ-ի Հայկական բաժինը իրաքահայերի շրջանում։ Նա հրատարակել է թերթ հայերեն լեզվով, որի էջերում մարքսիզմ-լենինիզմի դիրքերից լուսաբանվել են իրաքի առջև կանգնած քաղաքական, տնտեսական և ազգային կարևոր խնդիրները։ Որոշ փաստեր խոսում են այն մասին, որ կոմունիստներն ունեցել են զգալի ազդեցություն իրաքի հայ համայնքի շրջանում։ Այդ մասին է վկայում «Մոնիտոր» թերթը։ Իր համարներից մեկում նա ընդգծել է. «Կոմունիստական ձայների համոզականությունը ցույց է տալիս հայկական համայնքը, որը բաղկացած է 15 000 մարդուց և որը իրաքում գյուղություն ունի դաշերի վեր»⁶⁶։

Իկկ-ի դերը մեծ էր հետապատերազմյան շրջանում ծա-
վալված դասակարգային (գործադուլների կազմակերպում,
դանադան պահանջների առաջադրում և այլն) և հակաիմպե-
րիալիստական պայքարի, հատկապես 1948 թ. հունվարին
լոնդինյան ապստամբության մեջ: Նրա ազդեցության աճը
անհանգստացնում էր և՛ միապետական իշխանություններին,
և՛ բուրժուադեմոկրատական շրջաններին: Վերջիններս հան-
դես եկան կոմկուսը լուծարքի ենթարկելու պահանջով: Դա
հիմնավորում էին նրանով, որ Իրաքի բոլոր քաղաքական
կուսակցություններն իբր թե ունեին միևնույն նպատակը,
ուստի և առանձին քաղաքական կուսակցությունների գոյու-
թյան անհրաժեշտությունը չի զգացվում: Ելնելով այդ մեկ-
նակետից, առաջադրվեց «մեկ դեմոկրատական կուսակցու-
թյուն» լողունգը⁶⁷: Իսկ Քրդստանի դեմոկրատական կուսակ-
ցությունն իր հերթին հանդես եկավ Իրաքի կոմունիստական
կուսակցության Քրդական սեկցիայի վերացման պահան-
ջով⁶⁸:

Պարզ է, որ նման պահանջների նպատակն էր կոմ-
կուսը տարրալուծել ընդհանուր դեմոկրատական շարժման
մեջ, դադարաբանական առումով զինաթափ անել բանվոր
դասակարգը, նրան դարձնել բուրժուական շարժմանը են-
թակա և նրա պոչից քարշ եկող մի ուժ: Անվիճելի է, որ
Իրաքի մի շարք քաղաքական կուսակցություններ, որոնք
օպոզիցիայի մեջ էին գտնվում բրիտանական իմպերիալիզ-
մի և նրա դրածո Իրաքի միապետական հետադիմական վար-
չակարգի դեմ, ունեին մի շարք ընդհանուր խնդիրներ սո-
ցիալական հեղափոխության առաջին փուլում: Սակայն,
չպետք է մոռանալ, որ Իրաքում հաստատված բռնատիրա-
կան ռեժիմի տապալման, ազատ պառլամենտական ընտրու-
թյունների անցկացման և դեմոկրատական վարչաձևի հաս-
տատման պահանջները պաշտպանում էին և՛ կոմկուսը, և՛
ազգային-դեմոկրատական կուսակցությունը, որը հանդիսա-
նում էր Իրաքի ազգային բուրժուազիայի, մասնավորապես
նրա միջին և մանր խավերի կուսակցությունը, և՛ «Ալ-Իս-
թիկլալ» կուսակցությունը, որն արտահայտում էր Իրաքի
խոշոր բուրժուազիայի և միջին ու մանր ֆեոդալների շա-
հերը: Պարզ է, որ ազատ պառլամենտական ընտրու-
թյուն-

ներ, անցկացնելու դեպքում նրանցից յուրաքանչյուրը ձեռն-
տելու էր ընտրել իր ներկայացուցիչներին և տիրապետող
դիրքեր գրավել ապագա դեմոկրատական վարչակարգում:

Հակախմայերիալիստական պայքարի դիրքերում կանգ-
նած տարբեր քաղաքական ուժերի միջև սոցիալական հե-
ղափոխության առաջին փուլում հստակորեն դրսևորում է մի
հակասություն: Այն աշտահայտվում է նրանց շահերի ընդ-
հանրության (բռնապետական վարչակարգի տապալում և
դեմոկրատական կարգերի հաստատում) և հակադրության
(թե ով տիրապետող դիրք կհավաճի այդ դեմոկրատական
կարգերում) միջև: Հակասություններ կային այդ կուսակ-
ցությունների վերջնական նպատակների միջև: Ելնելով այս
բոլորից, ԻԿԿ-ի ղեկավարությունը մերժեց կոմկուսը լու-
ծարժի ենթարկելու պահանջը:

Ինչ վերաբերում է Իրաքում հաստատված «սև ուժի-
մի» ունեցիային, կոմկուսի ազդեցության զգալի աճին, ապա
այն դրսևորվեց յուրովի, ոստիկանական ձևով: «Սև ուժիմը»
բանավեճ չծավալեց այն հարցի շուրջը, թե պե՞տք է ար-
դյոք ինքնուրույն կոմունիստական կուսակցություն, թե՞ ոչ:
Նա այդպիսի երկընտրանքի առջև չի կանգնել: Նախ, երբ
1946 թ. ընդունվեց օրենք քաղաքական կուսակցությունների
լեգալ գործունեությունը թույլատրելու վերաբերյալ, ապա
այն շտարածվեց կոմունիստական կուսակցության վրա: Դը-
րանից օգտվեցին միայն բուրժուական վաճառական կու-
սակցությունները: Իշխանությունները 1947 թ. հունվարի
18-ին ձերբակալեցին ԻԿԿ-ի գլխավոր քարտուղար Յուսուֆ
Սալմանին, քաղբյուրոյի անդամներ Զաքի Մուհամմեդ Բա-
սիմին, Հուսեյն Մուհամեդ աշ-Շաբիբին, Յակուտ Իբրահիմ
Սադիկին և կոմկուսի մոտ 1000 այլ անդամների: Դատա-
րանը մահվան դատապարտեց Յուսուֆ Սալմանին, Զաքի
Բասիմին, Հուսեյն աշ-Շաբիբին, իսկ մնացածներին՝ ազա-
տագրկման տարբեր ժամկետներով: Թեև ժողովրդական
հուժկու շարժումների ճնշման տակ դատարանը ստիպված
էր մահապատիժը փոխարինել բանտարկությամբ⁶⁹, սակայն
1949 թ. հունվարին զինվորական ատյանը վերանայեց գոր-
ծը և նրանց կրկին դատապարտեց մահվան: Փետրվարին, կա-
խաղաքի բարձրացվեցին Յուսուֆ Սալմանը, Հուսեյն աշ-

Շաբիրին, Ջաքի Բասիմը և Յակուտ Սադիկը⁷⁰։ Իսկ 1954 թ. նուրի Սաիդի կառավարությունն ընդունեց գեկրետ կոմունիստներին քաղաքացիությունից զրկելու մասին⁷¹։

Կոմունիստական կուսակցության ղեկավարների մահապատիժը, զանգվածային ձերբակալությունները, մի շարք կուսակցական կազմակերպությունների ջախջախումը շատ ծանր ազդեց կուսակցության հետագա գործունեության վրա։ Քուլաքամ կապը ժողովրդական զանգվածների հետ, նկատվեց հեղափոխական աշխատանքի որոշ անկում, կրկին գլուխ բարձրացրին ֆրակցիոնները։

Սակայն կուսակցությունը կարողացավ իր մեջ ուժ գրտնել և վերականգնել կուսակցության միասնությունը, կրկին մտնել հեղափոխական և հակաիմպերիալիստական պայքարի մեջ և իր արժանի ավանդարդային տեղը գրավել հեղափոխական ուժերի շարքում։ Այդ գործում հատկապես մեծ է Սալամ Ադիլի (Հուսեյն առ-Ռադիի) դերը, որն 1955 թ. հունիսին ընտրվեց Իկկ-ի կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար։ 1956 թ. սեպտեմբերին գումարվեց Իկկ-ի երկրորդ ազգային կոնֆերանսը։ Նա հավաստեց կոմկուսի շարքերի միասնությունը և քաղաքական ճիշտ գծի մշակումը։ Կոնֆերանսի ընդունած որոշման մեջ ընդգծվեց նոր պայմաններում ազգային բոլոր ուժերի միավորման և միասնական ազգային ճակատի ստեղծման անհրաժեշտությունը⁷²։

Նվ երբ 1957 թ. սկզբներին Իրաքի ազգային հայրենասիրական ուժերը կանգնեցին հակաիմպերիալիստական պայքարի միասնական կենտրոն ստեղծելու անհրաժեշտության առջև, ապա կոմկուսը դարձավ նրա լիիրավ անդամը։ Այդպիսի կենտրոն հանդիսացավ 1957 թ. փետրվարին հիմնված Իրաքի ազգային միասնության ճակատը, որի մեջ մտան Կոմունիստական, ազգային չեմոկրատական, արաբական առցիալիստական վերածննդի (Բաաս) և «Ալ-Իսթիկլալ» կուսակցությունները։ Ճակատի ստեղծման կապակցությամբ Սալամ Ադիլը նշել է, որ «մինչև հուլիսի 14-ի (1958 թ.—Ն. Հ.) հեղափոխությունը, բոլոր կուսակցությունները և ազգային ուժերը համոզված էին, որ ոչ մի կուսակցություն և ոչ էլ Ազգային ճակատը մյուս կուսակցություններից անջատ չի կարող իր ուսերի վրա կրել երկրի ազատագրման և ազ-

գալին անկախության նվաճման խնդիրը»⁷³։ Այդ համազգային խնդիրները կարող էին լուծվել միայն բոլոր հակաիմպերիալիստական ուժերի միացյալ ջանքերով։ Սրանումն է կայանում սոցիալական հեղափոխության առաջին փուլի յուրահատկություններից մեկը։ Փաստորեն Իրաքը հանդիսացավ միակ երկիրը Արաբական արևելքում, որտեղ ի տարբերություն Նգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի և մյուս երկրների, սոցիալական հեղափոխության առաջին փուլում կազմակերպչորեն ձևավորվեց միասնական ազգային ճակատ, այն էլ կոմունիստական կուսակցության մասնակցությամբ։

Կապ է հաստատվում ճակատի և դեռևս 1956 թ. հիմնրված «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպության միջև։ Երկու կազմակերպությունների ղեկավարները մշակեցին գործողությունների համատեղ ծրագիր, որի գլխավոր պահանջները դարձան միապետության տապալումը և հանրապետության հռչակումը, Բաղդադի ագրեսիվ պակտից դուրս գալը, իմպերիալիզմի ազդեցության վերացումը, դեմոկրատական ազատությունների հաստատումը, ազգային էկոնոմիկայի զարգացումը, ագրարային ռեֆորմի կիրառումը և այլն։ 1958 թ. հուլիսի 14-ին Իրաքում կատարվեց բուրժուա-դեմոկրատական, հակաիմպերիալիստական հեղափոխություն։ Այն իրականացրին «Ազատ սպաներ» կազմակերպությունը և Ազգային միասնության ճակատը, որի ընթացքում բանակը հանդես եկավ հարվածային ուժի դերում։

Հուլիսի 14-ի հեղափոխությունով իրագործվեցին սոցիալական հեղափոխության առաջին փուլի շատ խնդիրներ։ Միաժամանակ նա անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց հեղափոխության հաջորդ փուլին անցնելու համար։

3. ԱԶԳԱՅԻՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքական անկախության նվաճումից և ազգային պետությունների կազմավորումից հետո արաբական երկրների հետագա քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումն ընթացավ տարբեր ուղիներով:

Արաբական պետությունների ճնշող մեծամասնությունը մյանգնեց զարգացման կապիտալիստական ուղու վրա: Այդ ուղին ընտրեցին Հորդանանը, Լիբանանը, Քուվեյթը, Թուրքիա, Մարոկկոն, հետագայում նաև Բահրեյնը, Կատարը, Օմանը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Սաուդյան Արաբիան և այլն, որտեղ անկախության նվաճումից հետո իշխանությունն անցավ բուրժուազիայի և կամ բուրժուակալ-վաժատիրական բլոկի ձեռքը: Վերոհիշյալ երկրները թե՛ քաղաքական և թե՛ սոցիալ-տնտեսական առումով պատկանում են կապիտալիզմի համաշխարհային սխտեմին և հնթական են նրա օրինաչափությունների ներգործությանը: Սակայն անհրաժեշտ է ի նկատի ունենալ մի հանգամանք. արաբական այդ երկրները, ինչպես նաև Ասիայի և Աֆրիկայի նույնատիպ այլ երկրներ, կազմում են կապիտալիստական աշխարհի ծայրամասը և կախման մեջ են կապիտալիզմի մենտրոններից, որը յուրահատուկ կնիք է դնում նրանց զարգացման նկարագրի վրա: Զարգացման կապիտալիստական ուղին ոտք դրած երկրներում չլուծվեցին առաջին փուլի այն բոլոր խնդիրները, որոնք վերաբերում էին սոցիալ-տնտեսական և դեմոկրատիայի զարգացման ոլորտին: Այդ փուլի բնական զարգացումն ընդհատվեց և նա շատացավ իր տրամաբանական շարունակությունը: Սակայն նրանցում պահպան-

վում է հեղափոխական պոտենցիան, որի կրողներն են հան-
դիսանում բանվորական և գյուղացիական զանգվածները,
մանր ու միջին խավերը, քաղաքացիական ու գինվորական
մտավորականությունը: Դրա շնորհիվ հիշյալ երկրներում
պահպանվում է լարված, ներքաղաքական վիճակ և բարե-
նպաստ պայմանների առկայության դեպքում հնարավոր է,
որ հեղափոխական ավյունը դուրս ժայթքի: Դրա մասին են
լկայում սոցիալ-քաղաքական բնույթի այն ականառու ցրն-
ցումները, որ տեղի ունեցան 70—80-ական թվականներին
Լիբանանում, Մաուդյան Արաբիայում, Մարոկկոյում և արա-
բական այլ երկրներում: Իրավացի են այն հեղինակները,
որոնք նշում են, որ «Ազատագրված երկրների համար, որոնք
ընթանում են կապիտալիստական ուղիով, մերձավորագույն
հեղափոխական հեռանկարը օբյեկտիվորեն բխում է սրվող
սոցիալ-դասակարգային հակասություններից»⁷⁴:

Արաբական երկրների մի այլ խումբ, անկախության նը-
վաճումից հետո, թեակոխեց ազգային-դեմոկրատական հե-
ղափոխության շրջանը: Հեղափոխական այդ պրոցեսի մեջ
ընդգրկվեցին Ալժիրը, Եգիպտոսը, Եմենի ժողովրդական Դե-
մոկրատական Հանրապետությունը (ԵԺԴՀ), Իրաքը, Լիբիան,
Սիրիան և Սուդանը:

Արաբական երկրների զարգացման տարբեր ուղիներով
ընթանալը, նրանցում հաստատված այլազան քաղաքական
վարչակարգերը վկայում են նրանց անհամաչափ զարգաց-
ման մասին⁷⁵: Անհամաչափ զարգացման օրենքի բացա-
հայտումը յուրատեսակ բանալի է հանդիսանում գիտակա-
նորեն ճիշտ մեկնաբանելու իրադրությունն արաբական աշ-
խարհում:

Այսպիսով՝ վերոհիշյալ արաբական երկրներում հեղա-
փոխական պրոցեսի դրսևորման ձևը հանդիսանում է ազ-
գային-դեմոկրատական հեղափոխությունը:

Նշենք, որ ազգային-դեմոկրատական հեղափոխությու-
ներն իրենց բնույթով տարբերվում են ինչպես բուրժուա-
դեմոկրատական, այնպես էլ սոցիալիստական հեղափո-
խություններից: Նրանք ազգային են կոչվում, որովհետև կոչ-
ված են լուծելու համազգային խնդիրներ, ելնելով ոչ թե մեկ

դասակարգի կամ սոցիալական մեկ խավի շահերից, այլ ամբողջ ազգի: Ի տարբերություն սոցիալական հեղափոխությունն առաջին փուլի, երբ «համազգային» հասկացությունն իր մեջ ներառնում էր ոչ միայն աշխատավորական զանգվածներին, այլև ազգային բուրժուազիային և հայրենասիրաբար տրամադրված լիբերալ ֆեոդալ-կալվաժատերերին, այժմ համազգային հասկացությունից դուրս են մղվում տեղական խոշոր բուրժուազիան և ֆեոդալ-կալվաժատերերը: Ազգային-դեմոկրատական հեղափոխություններն արտահայտում են տվյալ ազգի դեմոկրատական խավերի՝ բանվորների, գյուղացիների, արհեստավորների, մանր, մասամբ նաև միջին բուրժուազիայի, քաղաքացիական և ղինվորական մտավորականության շահերը և լուծում են առաջին հերթին համադեմոկրատական խնդիրներ: Այստեղից էլ դրանց՝ ազգային-դեմոկրատական հեղափոխություններ անվանումը:

Բուրժուական, այդ թվում և բուրժուադեմոկրատական հեղափոխությունները հաստատում են բուրժուական հասարակարգ և որտեղ հաղթանակում են, իշխանության գլուխ է դալիս տեղական, ազգային բուրժուազիան, որը ձգտում է դրանով ավարտել հեղափոխական պրոցեսը: Հեղափոխության հետագա շարունակումը և զարգացումը հակասում են նրա դասակարգային շահերին:

Ի տարբերություն դրանց, ազգային-դեմոկրատական հեղափոխությունները չեն հաստատում կապիտալիստական հասարակարգ: Ընդհակառակը, այնտեղ, որտեղ ազգային բուրժուազիան անկախության նվաճումից հետո անցել էր իշխանության գլուխ, ազգային-դեմոկրատական հեղափոխությունները նրանց հեռացրին երկրի կառավարումից և կիրառեցին քաղաքական ու տնտեսական մի շարք միջոցառումներ: Ազգային-դեմոկրատական հեղափոխություններին բնորոշ այդ գիծը ականառու կերպով դրսևորվեց Նգիպտոսում (60-ական թվականներին) Իրաքում և Սիրիայում: Իսկ արական այն երկրներում, որտեղ ազգային բուրժուազիան թույլ էր զարգացած, ազգային-դեմոկրատական հեղափոխությունների շնորհիվ իրականացվում են կարևոր միջոցառումներ բուրժուազիայի զարգացումը կանխարգելելու ուղղու-

Թյամբ: Այդ պրոցեսը ցայտունորեն երևում է ԵԺԴՀ-ում, Լիբիայում, Ալժիրում, իսկ 70-ական թվականների սկզբներին նաև Սուդանում:

Այս առումով ազգային-դեմոկրատական հեղափոխությունների հակակապիտալիստական կողմնորոշումը ակնհայտ է և դրանումն է նրա սկզբունքային տարբերությունը բուրժուական և բուրժուադեմոկրատական հեղափոխություններից:

Ազգային-դեմոկրատական հեղափոխությունները չպետք է նույնացնել սոցիալիստականի հետ, քանի որ նրանք իրականացնում են դեմոկրատական վերափոխումներ և անմիջականորեն չեն հաստատում սոցիալիստական արտադրական հարաբերություններ, թեև դրանց համար ստեղծում են քաղաքական և տնտեսական անհրաժեշտ նախադրյալներ: Բացի դրանից, նրանք ընթանում են ոչ թե պրոլետարիատի և նրա մարքսիստական-լենինյան ավանգարդի, այլ հիմնականում մանր բուրժուազիայի ծոցից ելած ուժերի և կազմակերպությունների ղեկավարման ներքո, որոնք շատ հաճախ ապավինում են բանակին:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ ազգային-դեմոկրատական հեղափոխությունները ո՛չ սոցիալիստական և ո՛չ էլ բուրժուական հեղափոխություններ են: Նրանք անցման շրջանի հեղափոխություններ են, որոնք հասարակական որոշակի ֆորմացիա չեն հաստատում:

Դա հետևանք է արաբական այդ, ինչպես նաև Ասիայի և Աֆրիկայի համանման երկրների հետամնացության, որը յուրահատուկ իրավիճակ ստեղծեց: Յուրահատկությունն արտահայտվում է այդ երկրների սոցիալ-դասակարգային անբավարար, ոչ հստակ շերտավորման, թույլ զարգացած լինելու մեջ: Բուրժուազիան այնքան զարգացած չէր, որ կարողանար քաղաքական իշխանությունն իր ձեռքում պահել և երկրի զարգացումը տանել կապիտալիստական ուղիով: Այդ երկրներում պրոլետարիատը նույնպես թույլ է զարգացած և դեռևս ի վիճակի չէ դառնալու հեղափոխության հեղեմներ և միանգամից իրականացնելու սոցիալիստական վերափոխումներ:

Բուրժուազիայի և պրոլետարիատի փոխադարձ թուլութ-
յան պայմաններում ասպարեզը մնաց մանր, մասամբ նաև
միջին բուրժուազիային և նրա շահերն արտահայտող մտա-
վորականությանն ու բանակի սպայական կազմին։ Ազգա-
յին-դեմոկրատական հեղափոխության ընթացքում այդ ուժե-
րը երբեմն ընդգծված կերպով արտահայտում են նաև գյու-
ղի և քաղաքի աշխատավորական զանգվածների շահերը։

Արաբական երկրներում ազգային-ազատագրական հե-
ղափոխությունների վերաճումը ազգային-դեմոկրատական
հեղափոխությունների, տեղի ունեցավ երկու ուղիով։ Առա-
ջին, հեղափոխական պայքարի, որի շնորհիվ տապալվեց
բուրժուազիայի կամ բուրժուակալվածատիրական բլոկի իշ-
խանությունը։ Այդ երկույթը ցայտուն կերպով դրսևորվեց
Սիրիայում (1963 թ. մարտի 8-ի հեղափոխությունը և 1966 թ.
փետրվարի 23-ի շարժումը), Իրաքում (1968 թ. հուլիսի
17-ի հեղափոխությունը), Սուդանում (1969 թ. մայիսի 25-ի
հեղափոխությունը), Լիբիայում (1969 թ. սեպտեմբերի 1-ի
հեղափոխությունը) և ԵժԴՀ-ում (1967—1970 թթ. հեղափո-
խական իրադարձությունները)։ Նշված երկրներում իշխա-
նությունն անցավ հեղափոխական-դեմոկրատների ձեռքը,
որոնք և հանդիսացան ազգային-դեմոկրատական հեղափո-
խությունների առաջնորդներն ու իրականացնողները։

Երկրորդ, վարչակազմի ինքնազտման կամ էվոլյուցիայի
ուղիով։ Դրա բնորոշ օրինակն է Եգիպտոսը։ 1952 թ. հուլի-
սի 23-ի հեղափոխությունն իր բնույթով հակաիմպերիալիս-
տական և հակաֆեոդալական էր և դասվում է բուրժուական
հեղափոխությունների շարքը։ Հեղափոխությունը ոչ միայն
առաջ շէր քաշում եգիպտական բուրժուազիային քաղաքա-
կան ասպարեզից հեռացնելու հարցը, այլև նպաստեց նրա
քաղաքական և տնտեսական զարգացմանը։ Հեղափոխու-
թյունից հետո հաստատված վարչակարգը ազգային բուր-
ժուազիայի հետ էր կապում սոցիալ-տնտեսական շատ հար-
ցերի լուծման հույսը։ Սկզբնական շրջանում տիրապետող
էին հանդիսանում դասակարգերի և դասակարգային պայ-
քարի ժխտման, դասակարգային ներդաշնակության, եգիպ-
տական հասարակությունը որպես մեկ ազգային ընտանիք

դիտելու և նման այլ տեսություններ: Այդ տեսությունները քողի դեր էին կատարում, որի հետևում թաքնված էր ազգային բուրժուազիայի շահերը պաշտպանելու միտումը: Սրանից չպետք է հետևեցնել, որ հուլիսի 23-ի հեղափոխությունը անտեսում էր աշխատավորների շահերը: Նա կիրառեց մի շարք միջոցառումներ, մասնավորապես ագրարային ռեֆորմը, որը բխում էր աշխատավորների շահերից և կոչված էր պաշտպանելու նրանց իրավունքները: Սակայն զարգացման ընդհանուր տենդենցն ավելի նպաստավոր էր բուրժուազիայի համար: Ի. Պ. Բելյակը և Ե. Մ. Պրիմակովը ի նկատի ունենալով նրա կողմից լուծված խնդիրները, հզիպտական հեղափոխության զարգացումը բաժանում են երեք շրջանի. «1952—1956 թթ.— պայքար ֆեոդալական տարրերի և Եզիպտոսում օտարերկրյա ռազմական դիրքերի վերացման, 1956—1961 թթ. հարձակում Եզիպտոսում օտարերկրյա կապիտալի տնտեսական դիրքերի վրա, միջոցառումներ, որոնց նպատակն էր պետական կապիտալիստական սեկտորի զարգացումը»⁷⁶: Ինչպես տեսնում ենք, երկու շրջանում էլ, որն ընդգրկում է տասնամյա մի ժամանակամիջոց, ոչ միայն չի դրվել ազգային բուրժուազիայի դեմ պայքարի հարցը, ընդհակառակը, Եզիպտոսում պետական կապիտալիզմի զարգացման համար մշակվել և կիրառվել է տնտեսական ու քաղաքական միջոցառումների մի ամբողջ համակարգ: 1961 թ. հետո է սկսվում հեղափոխության երրորդ շրջանը, որով կտրուկ շրջադարձ է կատարվում և Եզիպտոսը ոտք է դնում ազգային-դեմոկրատական հեղափոխության ոլորտը. «1961—1967 թթ.,— գրում են Ի. Բելյակը և Ե. Պրիմակովը,— անցում այնպիսի միջոցառումների, որոնք ամբողջությամբ հակաիմպերիալիստական բնույթ են կրում»⁷⁷:

Սակայն այդ անցումը տեղի ունեցավ ոչ թե գոյություն ունեցող ռեժիմի տապալման և նոր իշխանության հաստատման, այլ հեղափոխական էվոլյուցիայի ուղիով: Չարդարացան հզիպտական հեղափոխության առաջնորդ Գ. Ս. Նասերի ու նրա համախոհների այն հույսերը, որ նրանք կապել էին հզիպտական ազգային բուրժուազիայի հետ: Բուրժուազիան ի վիճակի չեղավ ապահովելու Եզիպտոսի սո-

սոցիալ-տնտեսական ու կուլտուրական առաջադիմութիւնը: Այսու կողմից կեղծ դուրս եկան նաև «դասակարգային համերաշխութեան» և «եզիպտական հասարակութիւնը որպէս մի ազգային ընտանիք» համարելու տեսութիւնները: Իրականում եզիպտական հասարակութիւնը պառակտված էր և նրա ներսում դասակարգային խուլ պայքար էր գնում: Նասերն ըմբռնեց, որ Եզիպտոսի առջև կանգնած քաղաքական և սոցիալ-տնտեսական պրոբլեմները, նրա ապագայի հետ կապված հարցերը հնարավոր է լուծել բուրժուա-կապիտալիստական հարաբերութիւնների շրջանակներից դուրս, հարված հասցնելով հենց իրեն՝ բուրժուազիային: Տեղի ունեցավ պառակտում Նասերի և հեղափոխութիւնը կատարած ղեկավար կորիզի՝ «Ազատ սպաներ» կազմակերպութեան մի շարք անդամների միջև, որոնք հեռացան Նասերից և հեղափոխութիւնից: «Պատակաման և հեռացման առիթները տարբեր էին: Բայց պատճառն, այնուամենայնիվ, մեկն է. հակաիմպերիալիզմը և հակաֆեոդալիզմը, սոցիալիստական երկրների հետ համագործակցութեան կողմնորոշումը, սոցիալիստական ընտրութիւնը»⁷⁸:

Այդ ուժերի հեռացումը, որոնք դեմ էին հակաիմպերիալիստական, սոցիալիստական բնույթի միջոցառումներին, հնարավոր դարձրեց ռեժիմի անարյուն էվոլյուցիան և դուռ բացեց ազգային-դեմոկրատական հեղափոխութեան առջև:

Զարգացման նման ուղուն հարեց նաև Ալժիրը, թեև նաև ունի իր յուրահատկութիւնները:

Ազգային-դեմոկրատական հեղափոխութիւնների առջև կանգնած են քաղաքական և սոցիալ-տնտեսական կոնկրետ խնդիրներ: Եթե սոցիալական հեղափոխութեան առաջին՝ ազգային-ազատագրական փուլում, ինչպես նշել ենք, դոմինանտը հակաիմպերիալիստական պայքարը և քաղաքական անկախութեան նվաճումն էր, իսկ սոցիալ-տնտեսական հարցերը հարաբերաբար հետին պլան էին մղված, ապա ազգային-դեմոկրատական հեղափոխութիւնների շրջանում, ընդհակառակը, տիրապետող են դառնում քաղաքական և սոցիալ-տնտեսական մերափոխումների պրոբլեմները: Սրանից չի կարելի հետեւեցնել, թե այս շրջանում արտաքին քաղաքական լուրջ պրոբլեմներ չկան: Դրանք դոմինանտ ունենալու պայ-

տահայտվում են նվաճած քաղաքական անկախությունը պահպանելու և ամրապնդելու, իմպերիալիզմի ամեն տեսակի ազդեցություն վերացնելու խնդրի մեջ, որոնք իրենց հերթին անհրաժեշտ նախապայման են հանդիսանում ազգային-դեմոկրատական հեղափոխությունների առջև կանգնած քաղաքական և սոցիալ-տնտեսական պրոբլեմների հաջող լուծման համար:

Այս շրջանի յուրահատկությունը այն է, որ այդ պրոբլեմների լուծումը փորձ է արվում իրագործել հակա-իմպերիալիստական հիմքի վրա: Տեղին է հիշեցնել վ. ի. Լենինի կարևոր դրույթը ազգային-ազատագրական շարժումները հակակապիտալիստական շարժման վերածվելու վերաբերյալ: 1921 թ. ելույթ ունենալով Կոմինտերնի երրորդ կոնգրեսում, վ. ի. Լենինը հայտարարեց. «Կատարելապես պարզ է, որ համաշխարհային հեղափոխության ապագա վճռական ճակատամարտերում երկրագնդի բնակչության մեծամասնության շարժումը, որ սկզբում ուղղված էր ազգային-ազատագրության նպատակին, կշրջվի կապիտալիզմի և իմպերիալիզմի դեմ, և գուցե շատ ավելի մեծ հեղափոխական դեր խաղա, քան մենք սպասում ենք»⁷⁹: Կապիտալիզմի դեմ այդ շրջվելը արաբական երկրներում տեղի ունեցավ 60-ական թվականներից՝ շնորհիվ ազգային-դեմոկրատական հեղափոխությունների:

Հարց է ծագում, թե մանր բուրժուական խավերի ծոցից դուրս եկած ուժերը ընդունակ են հակակապիտալիստական բնույթի վերափոխումներ իրականացնելու: Կարծում ենք՝ այո: Մանր բուրժուազիան շահագրգռված է խոշոր և նույնիսկ միջին բուրժուազիայի վերացմամբ, քանի որ նրանք սահմանափակում են նրա տնտեսական գործունեությունը և կապանքներ դնում նրա վրա: Խոշոր բուրժուազիայի վերացումը չի հակասում մանր բուրժուազիայի շահերին և այս հարցում նրա շահերը համընկնում են աշխատավորական մասսաների շահերին: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ աշխատավորական և ընդհանրապես բոլոր դեմոկրատական ուժերը աջակցում են մանր բուրժուազիային նրա այն քայլերում, որոնք ուղղված են խոշոր և միջին բուրժուազիայի դեմ:

Պայքարելով խոշորի դեմ, նա միաժամանակ հանդես է գալիս հօգուտ մանր մասնավոր սեփականության պահպանման: Դա իր կնիքն է դնում նրա՝ որպես վարչակարգը դեկավարող ուժի քաղաքական և տնտեսական կուրսի վրա և ծնում տարածայնություններ ու հակասություններ մանր բուրժուազիայի և բանվոր դասակարգի, առաջին հերթին կոմունիստական կուսակցությունների միջև, որոնք հետևողականորեն հանդես են գալիս հանուն մասնավոր սեփականության վերացման:

Ազգային-դեմոկրատական հեղափոխությունները, ինչպես նշվեց, իրականացնում են հակակապիտալիստական կամ սոցիալիստական կողմնորոշում ունեցող միջոցառումներ: Սոցիալիստական կողմնորոշումը նշանակում է քաղաքական իշխանությունից զրկել, հեռացնել խոշոր և միջին բուրժուազիային: Իսկ այնտեղ, որտեղ նրանք դեռևս չեն անցել իշխանության գլուխ, կանխել այդ, ազգայնացնել օտարերկրյա մոնոպոլիստական ընկերություններին և ազգային բուրժուազիային պատկանող արդյունաբերական ձեռնարկությունները, բանկերը, ապահովագրական ընկերությունները, ստեղծել պետական սեկտոր, որի ձեռքում կենտրոնացնել արտադրության հիմնական միջոցները, հաստատել պետական մեծանորհ արտաքին առևտրի վրա, կիրառել արմատական ագրարային ռեֆորմ, մտցնել առաջադիմական սոցիալական ապահովագրություն, բանվորներին մասնակից դարձնել ձեռնարկությունների կառավարմանը, ապահովել բանվորների և գյուղացիների մասնակցությունը, առնվազն 50 %-ի չափով, օրենսդիր մարմիններում, վարել ակտիվ հակաիմպերիալիստական քաղաքականություն, բարեկամական հարաբերություններ հաստատել և համագործակցել սոցիալիստական երկրների հետ և այլն:

Այս է ընդհանուր գծերով սոցիալիստական կողմնորոշման էությունը որը և կազմում է ազգային-դեմոկրատական հեղափոխությունների սոցիալ-տնտեսական և քաղաքական բովանդակությունը: Ոչ կապիտալիստական ուղին թեև սոցիալիստական կողմնորոշում ունի, բայց դեռևս սոցիալիզմ չէ: Դրանք չպետք է նույնացնել: Զարգացման ոչ կապիտալիստական ուղին՝ ստեղծված յուրահատուկ պայմաններում,

տնտեսական և քաղաքական նախադրյալներ է ստեղծում
անցնելու սոցիալիզմին: Փաստորեն նա ինքնին անցման շր-
ջան է կիսաբուրժուական-կիսաֆեոդալական (Եգիպտոս,
Իրաք, Սիրիա և այլն) կամ տոհմատիրական-ցեղային
և կիսաֆեոդալական (ԵժԴՀ) հարաբերություններից դե-
պի սոցիալիզմ: Այդ երկրների զարգացման մակարդա-
կը և սոցիալ-դասակարգային կոնկրետ փոխհարաբերու-
թյունները հնարավորություն չեն տալիս միանգամից անց-
նելու սոցիալիզմի: Օբյեկտիվ պայմաններն իրենք ծնեցին
միջին օղակի կամ կիսակայարանի անհրաժեշտությունը,
որպիսին հանդիսացավ զարգացման ոչ կապիտալիստական
ուղին:

4. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԴԵՄՈՆԻՐԱՏԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայտնի է, որ յուրաքանչյուր հեղափոխության հիմնա-
կան հարցը իշխանության հարցն է: Իշխանության բնույթը և
նրա սոցիալ-դասակարգային էությունը, այսինքն հեղափո-
խությունը ի՞նչ ուժերի է տապալում և ի՞նչ ուժեր են իշխա-
նությունը վերցնում իրենց ձեռքը, վճռական նշանակություն
ունի հեղափոխության հետագա բախտի և երկրի զարգաց-
ման ուղղության որոշման համար: Այն երկրներում, որտեղ
տեղի ունեցան կամ տեղի են ունենում ազգային-դեմոկրա-
տական հեղափոխություններ և որոնք ընտրել են սոցիա-
լիստական կողմնորոշում, հաստատվել է հեղափոխական-
դեմոկրատական վարչակարգ, կապիտալիստները և կալվա-
ծատերերը հեռացվել և զրկվել են իշխանությունից: Հեղա-
փոխական-դեմոկրատական վարչակարգերում ղեկավար դե-
րը պատկանում է հեղափոխական դեմոկրատներին, որոնք
դուրս են եկել մանր կամ միջին խավերից, սակայն արտա-
հայտում են ոչ միայն նրանց, այլև աշխատավորական զանգ-
վածների շահերը: Դա ո՛չ մանր բուրժուազիայի դիկտատու-
րա է և ո՛չ էլ պրոլետարիատի դիկտատուրայի տարատե-
սակ: Հեղափոխական-դեմոկրատական վարչակարգերը առա-
ջանալով ազգային-դեմոկրատական հեղափոխությունների
ընթացքում, որպես անցման շրջանի հեղափոխություններ,
իրենք նույնպես անցման շրջանի կառավարման ձև են:
Հայտնի է, որ մարքսիզմ-լենինիզմը սկզբունքորեն չի բա-
ցառում անցման շրջանի պահանջներին համապատասխա-
նող կառավարման ժամանակավոր այս կամ այն ձևի կի-
րառումը: Հիշենք, թեկուզ, 1905—1907 թթ. ռուսական առա-

ջին հեղափոխությունը, երբ Վ. Ի. Լենինը և բոլշևիկներն առաջադրեցին բանվորների և գյուղացիների հեղափոխական դիկտատուրայի լուծունգը: Վ. Ի. Լենինը նշում էր, որ թեև այդ դիկտատուրան պրոլետարիատի դիկտատուրա չէ, սակայն այն բուրժուազիայի դիկտատուրա էլ չէ:

Արաբական, Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներում, որտեղ պրոլետարիատը փոքրաքանակ է ու թույլ զարգացած, հնարավոր չեղավ միանգամից հաստատել պրոլետարիատի դիկտատուրա և իրագործել սոցիալիստական հեղափոխություն: Պրա փոխարեն ծնվեց հեղափոխական-դեմոկրատական վարչակարգը, որը հանդիսանում է հակակապիտալիստական, սոցիալիստական կողմնորոշման իրականացնողը և իր վերջնական նպատակը համարում է սոցիալիստական հասարակարգի կառուցումը: Ահա այդ պատճառով էլ հեղափոխական-դեմոկրատական վարչակարգը մանր բուրժուազիայի դիկտատուրա չէ, որովհետև բուրժուազիան, վերջին հաշվով անհամատեղելի է սոցիալիզմի հետ: Առայժմ հեղափոխական ռեժիմները չեն դնում և չեն էլ կարող դնել մանր բուրժուազիայի վերացման հարցը: Պրա համար անհրաժեշտ են որակական փոփոխություններ այդ երկրների սոցիալ-դասակարգային կառուցվածքում: Զարգացման ոչ կապիտալիստական ուղին մանր բուրժուազիայի ձեռքում դեռևս թողել է որոշ տնտեսական և քաղաքական, երբեմն բավականին ուժեղ դիրքեր: Հեղափոխական-դեմոկրատական վարչակարգերը ներկա էտապում համախմբում են մանր բուրժուազիային, պրոլետարիատին, գյուղացիությանը, ուսանողությանը, մտավորականությանը, բանակի սպայական կազմը, այսինքն նրանց, որոնք կենսականորեն շահագրգռված են ազգային անկախության ամրապնդմամբ, գաղութատիրության բոլոր հետևանքների վերացմամբ, բազմակողմանիորեն զարգացած ազգային անկախ տնտեսության ստեղծմամբ, ժողովրդական զանգվածների տնտեսական վիճակի բարելավմամբ ու դեմոկրատական իրավունքների ընդլայնմամբ և համընդհանուր սոցիալական առաջադիմությամբ:

Արաբական երկրների կոմունիստական կուսակցություններն՝ ակտիվորեն մասնակցում են ազգային-դեմոկրատական

հեղափոխություններին և պաշտպանում սոցիալիստական կողմնորոշումը: Նրանք մեծ եռանդ են ներդնում աշխատավորներին կազմակերպելու, նրանց քաղաքական ինքնագիտակցությունը բարձրացնելու և հեղափոխական-դեմոկրատական ուժիմների կողմից հռչակված առաջադիմական սկզբունքները կյանքում հետևողականորեն կենսագործելու համար: Իրենց այդ գործունեության մեջ կոմունիստները առանձնահատուկ նշանակութուն են տալիս դեմոկրատիայի ընդլայնման, բանվորների և աշխատավորական այլ զանգվածներին իրապես կառավարման պրոցեսի մեջ ներգրավելու, վարչակարգի վրա ներքևից ճնշում գործադրելու հարցերին: Նրանք պայքարում են հանուն այն բանի, որ խզում չառաջանա հեղափոխական-դեմոկրատական իշխանության կողմից հռչակված առաջադիմական սկզբունքների և նրանց գործնական կիրառման միջև, որը հաճախ է հանդիպում պրակտիկայում, երբեմն ընդունելով վտանգավոր շափեր:

Արաբական երկրներում կոմունիստների մասնակցությունը ազգային-դեմոկրատական հեղափոխություններին տարբեր ձևերով դրսևորվեց:

Սիրիայում, 1966 թ. փետրվարի 23-ի շարժումից հետո, երբ արաբական սոցիալիստական վերածնության՝ Բաաս կուսակցության ներսում հաղթանակեցին ձախ ուժերը, որոնք և անցյալ իշխանության գլուխ, կոմունիստական կուսակցությունը, առաջինն արաբական աշխարհում, մտավ կառավարության մեջ: Եվ ահա այդ օրվանից մինչև հիմա, ավելի քան քսան տարի սիրիական կոմունիստները կառավարության կազմում գործում են ազգային-դեմոկրատական հեղափոխության խորացման, սոցիալիստական կողմնորոշման հետևողական կիրառման և այդ պրոցեսի արագացման համար: Կոմունիստները դարձան Սիրիայում հաստատված հեղափոխական-դեմոկրատական վարչակարգի անբաժանելի մասը:

Պատմական նշանակութուն ունեցավ Սիրիայի Առաջադիմական ազգային ճակատի (ԱԱՃ) ստեղծումը: Նրա մեջ մտան Սիրիայի Բաաս և կոմունիստական կուսակցությունները, Արաբական սոցիալիստական միությունը, Արաբական սոցիալիստների շարժումը և «Սոցիալիստ-յունիսնիստների»

կազմակերպությունը: Դրա շնորհիվ ընդլայնվեց հեղափոխա-
կան-դեմոկրատական վարչակարգի սոցիալական բազան և
սոցիալական նոր խավեր ու քաղաքական ուժեր ներգրավ-
վեցին ազգային-դեմոկրատական հեղափոխության մեջ:

Ճակատն ունի իր կենտրոնական ղեկավարությունը, որի
նախագահն է Բաաս կուսակցության գլխավոր քարտուղար,
Սիրիայի Արաբական Հանրապետության պրեզիդենտ Հաֆեզ
Ասադը: Սիրիայի կոմկուսից կենտրոնական ղեկավարու-
թյան մեջ մտնում են երկու ներկայացուցիչ:

ԱԱԾ-ի ժրագրային փաստաթղթում՝ Խարտիայում, հա-
տուկ կերպով արձանագրվեց, որ ճակատի հիմնական և կա-
րևոր խնդիրներից մեկը սոցիալիստական հասարակարգի
կառուցումն է: «Արաբական ճակատագրի միասնությունը և
զանգվածների ձգտումը միասնության,— կարդում ենք ԱԱԾ-ի
Խարտիայում,— հիմք են հանդիսանում միասնական արա-
բական սոցիալիստական հասարակության կառուցման հա-
մար, ազատ իմպերիալիստական ճնշումից, շահագործումից
և հետամնացությունից, հասարակության, որն ընդունակ է
վանելու ամեն մի միջամտություն իր ներքին գործերին և
իր լուծման ներդնելու մարդկության առաջադիմության մեջ»⁸⁰:

Խարտիայում՝ միաժամանակ մանրամասնորեն շարա-
դրված են ճակատի խնդիրները ներքին քաղաքականության
(արդյունաբերության, գյուղատնտեսության, պլանավորման,
կրթության) և այլ բնագավառներում, որոնք պետք է «նպաս-
տեն դեմոկրատական ժողովրդական կարգի կառուցումն ավար-
տելուն»⁸¹: Հենց դա է, որ կազմում է ազգային-դեմոկրատա-
կան հեղափոխությունների սոցիալ-տնտեսական և քաղաքա-
կան բովանդակությունը:

70-ական թվականներին մոտավորապես համանման վի-
ճակ ստեղծվեց Իրաքում, երբ 1968 թ. հուլիսի 17-ի հեղա-
փոխությունից հետո իշխանության գլուխ անցան բաասա-
կանները: Նրանք քննադատաբար մոտեցան նախկինում
իրենց թույլ տված սխալներին, մոսնավորապես կոմունիստ-
ների նկատմամբ, հռչակեցին և սկսեցին կիրառել առաջա-
դիմական քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափո-
խումներ: Դրա շնորհիվ Իրաքը թևակոխեց ազգային-դե-
մոկրատական հեղափոխության շրջանը և սոցիալիստական

կողմնորոշումը հռչակեց որպես պաշտոնական կուրս⁸²։
Բաաս կուսակցությունն ապրեց որոշ էվոլյուցիա և փոխեց
իր վերաբերմունքը երկրի մյուս առաջադիմական կուսակ-
ցությունների նկատմամբ, առաջին հերթին Իրաքի կոմու-
նիստական կուսակցության նկատմամբ։ Նա առճակատումից
անցավ համագործակցության, ըմբռնելով, որ համագործակ-
ցությունը Իրաքի կոմկուսի, ինչպես նաև մյուս առաջադի-
մական ուժերի հետ ոչ միայն հնարավոր է, այլև անհրա-
ժեշտ։ Դրան դրական արձագանք տվեց Իրաքի կոմունիստա-
կան կուսակցությունը, որը միշտ պայքարել է ազգային-
հայրենասիրական, առաջադիմական ուժերի միավորման և
համագործակցության համար։ Ելնելով դրանից և հաշվի առ-
նելով այն հանգամանքը, որ Բաաս կուսակցությունը վարում
էր հակաիմպերիալիստական կուրս, իսկ ներքին քաղաքա-
կանության բնագավառում կիրառում էր առաջադիմական
վերափոխումներ, Իրաքի կոմկուսը որոշեց քաղաքական հա-
մագործակցություն հաստատել Բաաս կուսակցության հետ։
Դա իր արտացոլումը գտավ երկու կարևոր միջոցառումների
մեջ։ Առաջին, 1972 թ. մայիսին Իրաքի կոմկուսի ներկայա-
ցուցիչները մտան Իրաքի կառավարության կազմի մեջ։ Դա
շատ պատասխանատու քայլ էր, որը դրական դեր խաղաց
ազգային-դեմոկրատական հեղափոխության հետագա ծավալ-
ման մեջ։ Երկրորդ, 1973 թ. հուլիսի 17-ին Իրաքի Բաաս-
կուսակցության գլխավոր քարտուղար, Իրաքի պրեզիդենտ
Ահմեդ Հասան ալ-Բաքրի և Իրաքի կոմունիստական կուսակ-
ցության առաջին քարտուղար Ազիզ Մուհամեդի միջև ստոր-
ագրվեց համաձայնագիր երկու կուսակցությունների միջև
համագործակցության սկզբունքների վերաբերյալ։ Դրանով
իսկ դրվեց Ազգային առաջադիմական հայրենասիրական ճա-
կատի հիմքը։ Բաքրի և Մուհամեդի ստորագրած համատեղ
հայտարարության մեջ մատնանշված էր, որ «բոլոր կուսակ-
ցությունների, դեմոկրատական և առաջադիմական-ազգային
ուժերի համագործակցությունը միասնական ճակատի շրջա-
նակներում կարևոր քայլ է առաջադիմության և սոցիալիզ-
մին անցնելու համար նախադրյալներ ստեղծելու ճանապար-
հին»⁸³։ Այսպիսով, Իրաքի կոմկուսը դարձավ ազգային-դե-
մոկրատական հեղափոխության, սոցիալիստական կողմնո-

որոշման իրականացման ամենաառաջատար ուժերից մեկը։ Այդ պրոցեսը 70-ական թվականների կեսերին այնքան խորացավ, որ 1976 թ. մայիսին Բաղդադում գումարված Իրաքի կոմկուսի 3-րդ համագումարի կողմից ընդունված բանաձևում հատուկ ընդգծվեց, որ Իրաքում ռեալ հնարավորություններ կան ազգային-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերաճման համար⁸⁴։ Նման գնահատականը թերևս ճիշտ էր իր ժամանակի, տվյալ կոնկրետ պատմական պայմանների համար։

Իրաքի կոմկուսը, ստանալով լեգալ գործունեության հրահարավորություն, մեծ աշխատանք ծավալեց աշխատավորների շրջանում, իր հրատարակությունների միջոցով սկսեց պրոպագանդել մարքսիզմ-լենինիզմի գաղափարները, տարածեց և ամրապնդեց իր ազդեցությունը ժողովրդական լայն շրջանների վրա։ Աճեցին նաև կուսակցության շարքերը։

Սակայն երկրի հետադիմական ուժերը հաշտ աչքով չէին նայում կոմկուսի հեղինակության աճին ու դիրքերի ամրապնդմանը։ Դա անհանգստացնում էր նաև իմպերիալիստական ուժերին, որոնք դրա մեջ տեսնում էին լուրջ վտանգ իրենց շահերին։ «Իմպերիալիզմի և ռեակցիայի ուժերին հաջողվեց խախտել Իրաքի կոմկուսի և Բաաս կուսակցության միջև հաստատված համագործակցությունը»⁸⁵։ Կոմունիստների դեմ սկսվեցին հալածանքները։ Նրանց հեռացնում էին պետական և հասարակական կազմակերպություններից, կեղծ մեղադրանքների հիման վրա դատական պրոցեսներ կազմակերպում և այլն։ Ստեղծված պայմաններում Իրաքի կոմկուսը 1979 թ. մայիսին որոշեց դուրս գալ Ազգային առաջադիմական հայրենասիրական ճակատից, կառավարության կազմից և անցնել անլեգալ դրության⁸⁶։

Դա ծանր հարված էր ոչ միայն կոմունիստներին, այլև Իրաքի ամբողջ հեղափոխական պրոցեսին։

Բարդ և հակասական պայմաններում էր ընթանում Սուդանի կոմունիստական կուսակցության գործունեությունը։ Սուդանի կոմկուսը ակտիվորեն պաշտպանեց 1965 թ. մայիսի 25-ին տեղի ունեցած հեղափոխությունը, որն իր բնույթով ազգային-դեմոկրատական էր։ Նա տապալեց բուրժուական վալվածատիրական և ֆեոդալական-ցեղային վերնախավի

իշխանությունը և երկրում հաստատեց հեղափոխական-դեմոկրատական ուժիմ: Ստեղծվեց հեղափոխական խորհուրդ: Ջաֆար Նիմեյրիի գլխավորությամբ: Սուդանի կոմունիստական կուսակցությունը համաձայնություն տվեց մտնել հեղափոխական խորհրդի, կառավարության և պետական զանազան մարմինների մեջ⁸⁷: Կոմունիստական կուսակցությունը ~~հեղափոխություն~~ արվում էր 1967 թ. հոկտեմբերին տեղի ունեցած 4-րդ համագումարի որոշումներով: Այդ համագումարում ընդունված ծրագրում նշվում էր, որ ազգային-դեմոկրատական հեղափոխության խնդիրները կարող են լուծվել, եթե իշխանությունը պատկանի դեմոկրատական ուժերի բլոկին, որի առանցքը պետք է կազմի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը: Միաժամանակ 4-րդ համագումարի փաստաթղթերում հստակորեն ընդգծվում էր, որ «զարգացման սոցիալիստական ուղին սկսվում է ոչ կապիտալիստական բնույթի ազգային-դեմոկրատական վերափոխություններից, որոնք անմիջապես չեն վերացնում կապիտալիստական հարաբերությունները արտադրության ոլորտում, սակայն նախապատրաստում են անցումը սոցիալիզմին»⁸⁸:

1969—1971 թթ., մոտ երկու տարի Սուդանն ընթանում էր ազգային-դեմոկրատական հեղափոխության ուղիով, և կոմունիստները հեղափոխական խորհրդի, կառավարության, զանազան պետական և հասարակական կազմակերպությունների կազմում նպաստում էին այդ հեղափոխության խորացմանը, այն հաշվով, որ նա դառնա անշրջելի: Իրոք, Սուդանում կիրառվեցին տարբեր բնույթի առաջադիմական վերափոխումներ: Դա մի կողմից բարձրացրեց դեմոկրատների հեղինակությունը, իսկ մյուս կողմից՝ հարվածեց աջակողմյան ուժերին: Երկրի ներսում խիստ սրվեցին քաղաքական և դասակարգային հարաբերությունները: Գլուխ բարձրացրեց հակակոմունիզմը, որի կողմնակիցները պահանջում էին համապատասխան սանկցիաներ կիրառել կոմունիստների նկատմամբ և անում էին ամեն բան պառակտում մտցնելու կոմունիստների և հեղափոխական-դեմոկրատական այլ ուժերի միջև: Սուդանի կառավարությունը փաստորեն սկսեց տեղի տալ հետադիմական ուժերի ճնշմանը և դիմեց մի շարք քայլերի, որոնք սահմանափակում էին դե-

մոկրատական կազմակերպությունների և Սուդանի կոմունիստական կուսակցության գործունեությունը: Ներքադաքական խիստ լարված իրադրության պայմաններում, մի խումբ ձախ տրամադրված սպաներ և զինվորներ 1971 թ. հունիսի 19-ին պետական հեղաշրջում կատարեցին, ձերբակալելով Զաֆար Նիմեյրիին և այլ ղեկավարների: Սակայն նրանք չկարողացան իշխանությունն իրենց ձեռքում պահել և հունիսի 22-ին, Նիմեյրիին հավատարիմ մնացած զորամիավորումները հակահեղաշրջում կազմակերպեցին: Նիմեյրիին կրրկին եկավ իշխանության գլուխ: Սկսվեցին բռնություններն ու մահապատիժները: Սուդանի կոմկուսին մեղադրեցին հունիսի 19-ի հեղաշրջմանը մասնակցելու մեջ և այդ հիման վրա ձերբակալեցին և մահապատժի ենթարկեցին կուսակցության գլխավոր քարտուղար Ա. Մահշուբին, Քաղբյուրոյի անդամներ Դ. Գարանգին, Ահմեդ աշ-Շեյխին և ուրիշներ⁸⁹:

Այդ իրադարձություններից հետո Սուդանի կառավարությունն սկսեց ներքին քաղաքականության բնադավառում կիրառել բացահայտ հետադիմական կուրս, որի առանցքը կազմում էր հակադեմոկրատիզմը: Սուդանում ազգային-դեմոկրատական հեղափոխությունն ընդհատվեց, իսկ հեղափոխական-դեմոկրատական վարչակարգը վերասերվեց, դառնալով գործիք աջ նացիոնալիստական, հակակոմունիստական և հետադիմական ուժերի ձեռքում:

Ինչ վերաբերում է Ալժիրին, ապա այստեղ կոմունիստները, որոնք հանդես են գալիս Ալժիրի սոցիալիստական ավանգարդ կուսակցության . անվան տակ, զրկված են լիզալ գործելու հնարավորությունից: Լեգալ կերպով գործող միակ կուսակցությունը կառավարող Ազգային ազատագրության ճակատ կուսակցությունն է, որն իր բնույթով հեղափոխական-դեմոկրատական կուսակցություն է:

Սակայն կոմունիստները սկզբունքորեն պաշտպանում են Ալժիրի ընտրած սոցիալիստական կողմնորոշումը և զանազան հասարակական, այդ թվում և արհմիութենական, գյուղացիական, ուսանողական և այլ կազմակերպությունների կազմում պայքարում ազգային-դեմոկրատական հե-

ալափոխության կարևոր սկզբունքների իրականացման հա-
մար:

Լիբիայում կոմունիստական կուսակցություն գոյություն
չունի: Սակայն այստեղ աչքի է զարնում մի հանգամանք.
արտաքին քաղաքականության բնագավառում հակաիմպե-
րիալիստական պայքարի ընդհանուր ֆոնի վրա ներքին քա-
ղաքականության, մանավանդ քաղաքաիրախոսության բնա-
գավառում, բավականին ցայտունորեն արտահայտվում են
հակակոմունիզմին բնորոշ գծեր: Դա դրսևորվում է, մաս-
նավորապես, սոցիալիստական հասարակություն կառուցե-
լու լիբիական մոդելի մեջ, որը խարսխվում է գլխավորապես
խլամի սկզբունքների վրա: «Մենք,— նշում է Լիբիական
Արաբական Ժողովրդական Սոցիալիստական Զամահիրիայի
առաջնորդ Մուամար Կադաֆին,— սոցիալիստներ ենք Ղու-
րանի կողմից գծված շրջանակներում: Մենք իսկապես սո-
ցիալիստներ ենք, բայց մենք նախ և առաջ մուսուլմաններ
ենք»⁹⁰: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Կա-
դաֆիի տեսակետները հասարակության զարգացման օրենք-
ների վերաբերյալ, որ նա շարադրել է իր «Կանաչ գրքում»: Նա
գտնում է, որ «Ամեն մի հասարակության բնական օրենք-
ը հանդիսանում է կա՛մ ավանդույթը կա՛մ կրոնը: Այս եր-
կու աղբյուրներից դուրս յուրաքանչյուր հասարակության հա-
մար օրենք կազմելու ամեն մի փորձ անիրական և անտրա-
մաբանական է»⁹¹: Այս բոլորը կազմում են Կադաֆիի այս-
պես կոչված «Երրորդ ունիվերսալ տեսության» կարևոր բա-
ղադրամասերը, որոնք շատ հստակ կերպով հակադրվում են
գիտական սոցիալիզմի սկզբունքների վրա հիմնված մոդե-
լին:

Բավականին բարդ փոխհարաբերություններ գոյություն
ունեն Նգիպտոսի կոմունիստների և հեղափոխական դե-
մոկրատների միջև: Ինչպես նշել ենք, Նգիպտոսում չկար
միասնական կուսակցություն: Կային առանձին կոմունիս-
տական, մեծ կամ փոքր, խմբակներ: Եվ այդ իրավիճակը
պահպանվեց 50—70-ական թվականների ընթացքում:

Երբ տեղի ունեցավ 1952 թ. հուլիսի 23-ի հեղափոխու-
թյունը, եգիպտական կոմունիստները չկարողացան կողմնո-
րոշվել: Նրանց մի մասը ժխտական դիրք գրավեց նրա և նոր

վարչակարգի կենսագործած առաջին քայլերի նկատմամբ
կոմունիստական կազմակերպություններից միայն ՀԱԴԵ-
ԹՈՒ-ն (Ազգային ազատագրության դեմոկրատական շար-
ժում) հանդես եկավ ի պաշտպանություն հուլիսի 23-ի հե-
ղափոխության⁹²։

Այսպիսով, եգիպտական հեղափոխական-դեմոկրատնե-
րը և մարքսիստները սկզբից ևեթ շկարողացան սահմանել
համադորժակցության համար անհրաժեշտ սկզբունքներ։ Դը-
րան խանգարում էին հեղափոխական-դեմոկրատների դա-
վանելը ոչ ճիշտ տեսական դրույթների և նախապաշար-
մունքներն ընդդեմ կոմունիստների, որ հատուկ է ոչ միայն
եգիպտական, այլև մյուս երկրների հեղափոխական-դեմոկ-
րատներին։ Մասնավորապես ի նկատի ունենք դասակարգա-
յին պայքարի ժխտման, «դասակարգային ներդաշնակու-
թյան», ինչպես նաև մի դասակարգի դիկտատուրայի ժրխա-
ման տեսությունները, որոնք պաշտոնական տեսական դը-
րույթներ էին Նգիպտոսում 50—60-ական թթ.։ Դրանք ուղղ-
ված էին մարքսիստների դավանած սկզբունքների դեմ, որոնք
կանգնած էին դասակարգային պայքարի տեսության դիրքե-
րում։ Եվ երբ նասերը և եգիպտական հեղափոխական-դե-
մոկրատները հանդես էին գալիս մի դասակարգի դիկտա-
տուրայի դեմ, ապա նրանք ի նկատի ունեին պրոլետարիա-
տի դիկտատուրան։ Եթե սրան ավելացնենք մարքսիստների
և հեղափոխական-դեմոկրատների տարբեր մոտեցումը կրո-
նին, ապա պարզ կդառնան նրանց միջև եղած տարաձայնու-
թյունները։

Հարկ է նշել նաև, որ եգիպտական մարքսիստները միշտ
չէ, որ ճիշտ էին գնահատում Նգիպտոսում կիրառվող առա-
ջադիմական վերափոխումները և դրանց հնարավոր քա-
ղաքական հետևանքները երկրի հետագա զարգացման հա-
մար։ Նրանք նման մոտեցում ցուցաբերեցին 1952 թ. սեպ-
տեմբերի 9-ի ընդունված ագրարային ռեֆորմի օրենքի նը-
կատմամբ, որը եգիպտական հեղափոխության առաջին լուրջ
միջոցառումն էր ներքին քաղաքականության բնագավառում։

Սակայն հետագայում նկատվում է եգիպտական հեղա-
փոխության այս երկու ուժերի միջև եղած հակասություն-
ների մեղմացում, ապա նաև՝ մերձեցում։ Դրան նպաստե-

ցին մի քանի հանգամանքներ, այդ թվում՝ ա) հեղափոխական-դեմոկրատական վարչակարգի հակաիմպերիալիստական քաղաքականությունը, որի շնորհիվ երկիրը վերջնականապես ազատվեց անգլիական օկուպացումից, ազգայնացվեց Ստեղծի շրանցքի բնկերությունը, ամրապնդվեց երկրի քաղաքական անկախությունը, բ) Եզիպտոսի մերձեցումը խորհրդային Միության և մյուս սոցիալիստական երկրների հետ, որը այնուհետև վերաժվեց բարեկամության և համագործակցության քաղաքական, տնտեսական և ռազմական ասպարեզներում, գ) Նասերի և հեղափոխական-դեմոկրատական ռեժիմի կողմից 1961—1967 թթ. կիրառած ռեֆորմները և բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնք կրում էին հակակապիտալիստական բնույթ և որոնց շնորհիվ խորացավ ազգային-դեմոկրատական հեղափոխությունը Եզիպտոսում:

Ստեղծվեց բոլորովին նոր իրադրություն, որը հեղափոխական-դեմոկրատների և մարքսիստների առջև համագործակցության նոր դռներ բացեց: Երկու կողմերն էլ զգալի շափով վերանայում են իրենց գնահատականները ինչպես մեկը մյուսի տեղի և դերի, այնպես էլ Եզիպտոսում կատարվող քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումների հարցում: «Եզիպտական կոմունիստները տեսնում էին, — նշում են Ի. Բելլաևը և Ե. Պրիմակովը, — որ հեղափոխական-դեմոկրատները, որոնք գտնվում էին իշխանության գլխին, բնորոշվել են շատ լուղունգներ, որոնք իր ժամանակին առաջադրել էին Եզիպտոսի կոմունիստական խմբերը, և ոչ միայն ընդունել են այդ լուղունգները, այլև դրանց մի մասը կիրառել կյանքում: Եզիպտոսի կոմունիստական շարժման որոշ ներկայացուցիչներ նույնիսկ ընդգծում էին, որ առաջադիմական լուղունգների կենսագործումը կատարվում էր ավելի արագ տեմպերով և մի շարք դեպքերում ավելի վճռականորեն, քան իրենք կարող էին ենթադրել: Այսպիսով, երկրի կոմունիստական խմբերի որոշ ղեկավարների տեսակետով դադարեց անհրաժեշտ լինելուց իրենց հակադրումը Նասերի հեղափոխական-դեմոկրատական ռեժիմին, քանի որ նախանշվում էր նպատակների միասնությունն ռեժիմի և երկրի առաջադիմական ուժերի միջև»⁹³: Որպես այդ նոր միտումի

դրսևորում պետք է դիտել Նասերի 1964 թ. որոշումը՝ ազատ արձակել բոլոր ձերբակալված կոմունիստներին: Նրանք հնարավորություն ստացան աշխատելու մամուլի ասպարեզում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, անգամ պետական հիմնարկներում, Արաբական սոցիալիստական միության մարմիններում և կազմակերպություններում և այլն: Դա դրական կերպով ազդեց հեղափոխական պրոցեսի հետագա զարգացման վրա և հնարավորություն ստեղծվեց, թեև որոշակի սահմաններում, գիտական սոցիալիզմի գաղափարների պրոպագանդանը եզիպտական իրականությունում:

Ասվածից սխալ կլիներ եզրակացնել, թե կոմունիստների և հեղափոխական-դեմոկրատների միջև տարաձայնություններն ու տարբերությունները ջնջվեցին և նրանք պատրաստ էին տարրալուծվելու միմյանց մեջ: Խոսքը միայն նրանց մերձեցման մասին է: Այն մասին, որ հեղափոխական-դեմոկրատները որոշակի էվոլյուցիա ապրեցին. նրանք դիմում էին գիտական սոցիալիզմի լոզունգներին, իսկ կոմունիստներն ավելի իրական մոտեցում էին ցուցաբերում կատարվող վերափոխումների նկատմամբ և ավելի ստեղծագործաբար օգտագործում մարքսիզմ-լենինիզմի ընդհանուր դրույթները եզիպտական յուրահատուկ պայմաններում:

Թե ինչով կարող էր վերջանալ այդ մերձեցումը, դժվար է ասել, սակայն այդ պրոցեսն ընդհատվեց Նասերի մահով, որ տեղի ունեցավ 1970 թ. սեպտեմբերի 28-ին:

Բայց փաստ է, որ կոմունիստների և հեղափոխական-դեմոկրատների համագործակցությունը կազմակերպչական առումով շրջադրությունացալիսի ձև, ինչպես Սիրիայում և Իրաքում, այսինքն չվերածվեց ազգային առաջադիմական ճակատի ստեղծման:

5. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային հեղափոխական պրոցեսի մանրազնին ուսումնասիրությունը Վ. Ի. Լենինին հանգեցրեց այն եզրակացության, որ առանց հեղափոխական տեսության չկա հեղափոխական շարժում: Այդ օրինաչափությունը բնորոշ է, ինչպես բուրժուական, բուրժուա-դեմոկրատական և ազգային-դեմոկրատական, այնպես էլ սոցիալիստական հեղափոխություններին:

Երբ այս տեսանկյունից ենք մտնում հեղափոխական տեսության հարցերին արաբական աշխարհում, ապա մի խայտարդիտ պատկեր է ներկայանում: Այստեղ կոդը-կոդրի դոյություն ունեն զանազան, հաճախ իրարամերժ և միանգամայն հակադիր տեսություններ: Արաբական երկրներում զգալի տարածում է գտել մարքսիզմ-լենինիզմը, որը ներկայացնում է հեղափոխական տեսության յուրահատուկ համակարգ: Արաբական երկրների մեծ մասում կազմակերպվել և գործում են լեզալ, թե անլեզալ կոմունիստական կուսակցություններ, որոնք ղեկավարվում են մարքս-լենինյան գաղափարներով, պրոպագանդում այդ գաղափարները և պայքարում նրանց շուրջը ժողովրդական լայն մասսաների համախմբելու համար: Սակայն մարքսիզմ-լենինիզմը այդ երկրներում, այդ թվում և այնտեղ, ուր տեղի են ունենում ազգային-դեմոկրատական հեղափոխություններ, դեռևս չի դարձել տիրապետող հեղափոխական գաղափարախոսություն: Դա բացատրվում է նրանով, որ արաբական ոչ մի երկրում պրոլետարիատը չի անցել իշխանության գլուխ, որը և հնարավորություն կտար նրան մարքսիզմ-լենինիզմը դարձնել տիրապետող հեղափոխական տեսություն: Նա առայժմ հե-

ղափոխական մի ջոկատի՝ պրոլետարիատի գիտակից խավերի և առաջադեմ մտավորականության գաղափարախոսությունն է։ Այդուհանդերձ, կոմունիստական կուսակցությունների գործունեության շնորհիվ գիտական սոցիալիզմի գաղափարները զգալիորեն ազդում են հեղափոխական պրոցեսի վրա, նպաստում արաբական երկրներում հեղափոխական շարժման խորացմանն ու ամրապնդմանը, և բարերար ազդեցություն գործում հեղափոխական-դեմոկրատների քաղաքական համոզմունքների ձևավորման և նրանց տեսակետները որոշ հարցերում կոմունիստների տեսակետներին մոտեցնելու վրա։

Արաբական երկրներում զգալի տարածում ունեն զանազան բուրժուա-նացիոնալիստական տեսություններ, որոնք չդարձան և չէին էլ կարող դառնալ հեղափոխական շարժման տիրապետող տեսություն թեկուզ այն պատճառով, որ ազգային-դեմոկրատական հեղափոխություններն ունեն հակակապիտալիստական ուղղվածություն։ Իսկ արաբական այն երկրներում, որտեղ ազգային-դեմոկրատական հեղափոխություններ տեղի չեն ունենում, հեղափոխական պրոցեսի հիմնական կրողները հանդիսանում են բանվորական և աշխատավորական չայն խավերը, որոնց համար բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսությունը նույնպես ընդունելի չէ։

50-ական թվականներից սկսած Ասիայի և Աֆրիկայի մի շարք, այդ թվում և արաբական երկրներում, լայնորեն տարածվեցին զանազան սոցիալիստական ուսմունքներ։ Մի շարք պետություններ սոցիալիստական հասարակության կառուցումը հայտարարեցին իրենց վերջնական նպատակը։

Սոցիալիստական գաղափարների մասսայականությանը և հասարակության լայն խավերի նրանց հրապուրվելուն նպաստեցին երկու կարևոր հանգամանք։

Առաջին, Ասիայի և Աֆրիկայի երկրների ժողովուրդների աչքում գաղութարարներն ու կապիտալիստները հանդես էին գալիս միևնույն դեմքով, դրանք նույն ուժերն էին։ Գաղութարարները, որոնք մի որևէ երկրի զրկել էին քաղաքական անկախությունից և վերածել իրենց գաղութի, միաժամանակ հանդիսանում էին շահագործողներ, որոնք կո-

դոպատում ու թալանում էին գաղութների աղգային հարս-
տությունները, իսկ ժողովուրդներին դատապարտում աղքա-
տության և հետամնացության: Այդ պատճառով էլ երկրորդ
համաշխարհային պատերազմից հետո ծավալված աղգային-
աղատադրական շարժումը՝ գաղութային լծի տապալման և
քաղաքական անկախության նվաճման համար, շատ երկր-
ներում միաժամանակ ընդունեց հակաիմպերիալիստական
ուղղվածություն: Ասիայի և Աֆրիկայի այն երկրներում, այդ
թիվում և արաբական, որտեղ ուժեղ էին հեղափոխական-դե-
մոկրատների դիրքերը և նրանք ղեկավար դեր էին խաղում,
զարգացման կառիստալիստական ուղին մերժվեց և առաջ
քաշվեց զարգացման սոցիալիստական կողմնորոշումը:

Երկրորդ, սոցիալիստական ուսմունքների տարածմանը
նպաստեցին Խորհրդային Միության, սոցիալիզմի համաշ-
խարհային համակարգի կարծեցյալ հաջողությունները: Այդ
պատճառով էլ Ասիայի և Աֆրիկայի բազմաթիվ երկրների
ժողովրդական ղանգվածները և դեմոկրատական ուժերն իրենց
առջև կանգնած սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ
խնդիրների հաջող և, որ շատ կարևոր է, պատմական համե-
մատաբար կարճ ժամանակամիջոցում լուծելը այն ժամա-
նակ կապում էին սոցիալիզմի հետ:

Սակայն այդ երկրների զարգացման յուրահատկությու-
նը կայանում է նրանում, որ այստեղ լայն տարածում գտան
ոչ մարքսիստական սոցիալիստական ուսմունքները: Այդ երե-
վույթը հասկանալու բանալին տալիս է մարքսիստական
դրույթն այն մասին, որ միշտ էլ «չհասունացած դասակար-
գային հարաբերություններին համապատասխանել են և չհա-
սունացած տեսություններ»⁹⁴: Դասակարգային անբավարար
շերտափոքումը, բազմակացութաձևությունը, սոցիալ-տնտե-
սական հետամնացությունը, պրոլետարիատի և նրա մարք-
սիստական-լենինյան ավանգարդի անբավարար զարգացած
լինելը, իսկ որոշ երկրներում անգամ նրանց բացակայու-
թյունը և այլն, այս բոլորը պարարտ հող էր ներկայացնում
զանազան ոչ մարքսիստական սոցիալիստական ուսմունքնե-
րի՝ ռեֆորմիստական, լիբերալ-դեմոկրատական, մանր
բուրժուական, իսլամական և հեղափոխական-դեմոկրատա-
կան, տարածման համար:

Դրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմը: Նա հանդիսանում է տիրապետող հեղափոխական տեսություն այն երկրներում, որտեղ տեղի են ունեցել կամ տեղի են ունենում ազգային-դեմոկրատական հեղափոխություններ և հաստատվել են հեղափոխական-դեմոկրատական վարչակարգեր, որոնք փաստորեն ընտրել են զարգացման սոցիալիստական կողմնորոշում: Հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի տեսությունը դարձել է ազգային-դեմոկրատական հեղափոխությունների տեսությունը և հեղափոխական շարժումը սոցիալիստական կողմնորոշման երկրներում ընթանում է այդ տեսության ներքո:

Նախքան հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի էություն բացահայտման անցնելը, անհրաժեշտ ենք համարում երկու վերապահում անել:

Առաջին, հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմը կուռ և ամբողջական ուսմունք չէ: Նա շունի իր հանգամանորեն մշակված և բոլորի կողմից ընդունելի ծրագրային փաստաթուղթը՝ մանիֆեստը: Այդ պատճառով էլ նրա էությունը բացահայտելիս մենք դիմել ենք սոցիալիստական կողմնորոշման երկրների կառավարությունների որոշումներին, կառավարող կուսակցությունների ծրագրային փաստաթղթերին, պետական ականավոր գործիչների հայտարարություններին և այլն:

Երկրորդ, մի երկրում հաստատված հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի ուսմունքը հար և նման չէ մի այլ երկրի համանման ուսմունքին: Չնայած գլխավոր հարցերում գոյություն ունեցող նույնությանը, նրանց միջև կան զգալի տարբերություններ, որն անհրաժեշտ է ի նկատի ունենալ՝ սխալ եզրակացությունների շահագելու համար:

Այժմ կանգ առնենք հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի էությունը բացահայտող հիմնական կետերի վրա: Դրանք ավելի հասկանալի դարձնելու, ինչպես նաև ընդհանուր սոցիալիստական ուսմունքների շարքում նրանց տեղը որոշելու համար, նպատակահարմար ենք գտել հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի հիմնական դր-

բուլթները համադրել ուտոպիստական և գիտական սոցիալիզմի հիմնական դրույթների հետ:

Հասարակութլունը նոր սկզբունքների վրա վերակառուցելու ձգտող յուրաքանչյուր քաղաքական տեսութլան գնահատման հարցում սկզբունքային նշանակութլուն ունի, թե ինչ ձևով, ինչպիսի ուղիներով է նա ձգտում հասնել, իրականացնել այդ վերափոխումները:

Հայտնի է, որ ուտոպիստ-սոցիալիստները ոչ միայն ժխտում էին հեղափոխութլունը, այլև դեմ էին նրան: Սոցիալիստական հասարակարգի կառուցման հնարավորութլունը նրանցից ոմանք տեսնում էին սոցիալական օրենքի հայտնագործման մեջ, որի օգնութլամբ, իբր թե, հնարավոր կլինի կարգավորել մարդկային կրքերը և հասնել երջանկութլան: Այդ տեսակետները զարգացնում էր ֆրանսիական ուտոպիստ-սոցիալիստ Շարլ ֆուրյեն: Անգլիական ուտոպիստ-սոցիալիստ Ռոբերտ Օուենի կարծիքով անցումը սոցիալիզմին հնարավոր է մարդկային բանականութլան զարգացման և լուսավորութլան տարածման ուղիով: Իսկ Սեն-Սիմոնը երազում էր սոցիալիստական հասարակարգ կառուցել մարդկանց բարոյական կատարելագործման և հարուստների մոտ աղքատների նկատմամբ սեր արթնացնելու ուղիով: Պատմութլունը վաղուց է ապացուցել այդ տեսակետների ոչ գործնական լինելը:

Ի տարբերութլուն ուտոպիստական սոցիալիզմի, հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմը հեղափոխական գործողութլունների տեսութլուն է: Նոր հասարակարգի կառուցումն ըստ այդ տեսութլան հնարավոր է միայն հեղափոխական պայքարի և վերափոխումների միջոցով: Սոցիալիզմի հեղափոխական-դեմոկրատական ուսմունքը ոչ միայն թուլլատրելի է համարում իշխանութլան գրավումը ուժի, պետական հեղաշրջման կամ հեղափոխութլան միջոցով, այլև դա դիտում է սոցիալիզմին անցնելու անհրաժեշտ նախադրյալ: Դրա մասին են վկայում սոցիալիստական կողմնորոշման երկրների փորձը և ծրագրային փաստաթղթերը: Հեղափոխական-դեմոկրատները արաբական բոլոր երկրներում իշխանութլան գլուխ անցան ոչ թե էվոլյուցիոն զարգացման ուղիով կամ պառլամենտական ընտրութլունների, այլ կատարված

հեղափոխությունների շնորհիվ: Եզրապատական հեղափոխության առաջնորդ Գամալ Աբդել Նասերը իր առաջին աշխատության մեջ՝ «Հեղափոխության փիլիսոփայությունը», նշում էր, որ յուրաքանչյուր ազգ անցնում է երկու հեղափոխությունների միջով, առաջին՝ քաղաքական, երկրորդ՝ սոցիալական⁹⁵: Հեղափոխական պայքարը որպես գլխավոր գործիք հասարակությունը սոցիալիզմի սկզբունքների հիման վրա վերակառուցելու համար արձանագրված է Սիրիայի կարևոր պաշտոնական փաստաթղթում՝ Առաջադիմական ազգային ճակատի խարտիացում՝ ընդունված 1972 թ. մարտի 7-ին: Այնտեղ ընդգծված է, որ արաբական հեղափոխությունը կրում է «ազատագրական սոցիալիստական հեղափոխության բնույթ»⁹⁶: Իսկ Իրաքի Ազգային գործողության խարտիայում, որն ընդունվեց 1971 թ. նոյեմբերի 15-ին, որը և հանդիսանում է Իրաքի հիմնական քաղաքական ծրագրային փաստաթղթերից մեկը, ասված է, որ Արաբական սոցիալիստական վերածնության կուսակցությունը 1968 թ. հուլիսի 17-ից ղեկավարում է հեղափոխական վերափոխումներն Իրաքում⁹⁷: Հեղափոխական վերափոխումների կուրսը Իրաքում վերստին հաստատվեց 1974 թ. հունվարին Բաաս կուսակցության 8-րդ մարզային համագումարի կողմից. «Հեղափոխությունն առաջ է ընթանում ազգային դեմոկրատական, սոցիալիստական պետության կառուցման ուղիով»⁹⁸:

Համանման դրույթներ կարելի է գտնել սոցիալիստական կողմնորոշման մյուս երկրների ծրագրային փաստաթղթերում:

Այս բոլորը հիմք է տալիս ասելու, որ այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին սոցիալիզմին անցնելու միջոցների և եղանակների հարցն է, հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի ուսմունքը մի քայլ առաջ է ուտոպիստական սոցիալիզմի համեմատությամբ և ավելի մոտ է գիտական սոցիալիզմին: Հեղափոխական-դեմոկրատական և գիտական սոցիալիզմի համար ընդհանուրն այն է, որ երկուսն էլ հեղափոխական վերափոխումները համարում են գլխավոր գործիքը հին հասարակարգի քանդման և սոցիալիզմին անցնելու պրոցեսում:

Սակայն խոսելով գիտական սոցիալիզմի և հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի կոնցեպցիաների ընդ-

Հանրության մասին, չի նշանակում դրանք նույնացնել: Խոսքը միայն և միայն տեսակետների համբնկման մասին է մարդկային հասարակության վերափոխությունների ուղիների հարցում:

Հեղափոխական-դեմոկրատական ուսմունքի կողմից հեղափոխական պայքարի կոնցեպցիայի ընդունման գործում վճռական դեր խաղացին պատմական փորձը և գիտական սոցիալիզմը: Փորձը մի կողմից ցույց տվեց ուտոպիստական սոցիալիզմի գաղափարների սնանկությունը, իսկ մյուս կողմից՝ գիտական սոցիալիզմի տեսության ներգործությունը: Սոցիալիզմի համար պայքարի մեթոդների ընտրման հարցում անվիճելի է գիտական սոցիալիզմի ազդեցությունը հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի կոնցեպցիաների վրա:

Սա լուկ ենթադրություն չէ, այլ հիմնված է իրենց՝ հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի ներկայացուցիչների խոստովանությունների վրա: 1962 թ. մայիսի 26-ին հանդես գալով ժողովրդական ուժերի Ազգային կոնգրեսում, նաանրը հայտարարեց. «Մենք ասում ենք, որ մեր սոցիալիզմը ելնում է մեր կյանքի պայմաններից: Բայց մենք մոլեռանդներ չենք: Մենք կուսումնասիրենք ուրիշ երկրների սոցիալիստական փորձը ամբողջ աշխարհում»⁹⁹: Այս հարցի մասին ավելի որոշակի է ասված Սիրիայի Առաջադիմական ազգային ճակատի խարտիայում: «Արաբական հեղափոխական շարժման համագործակցությունը, — կարդում ենք այնտեղ, — ազատագրական շարժման և սոցիալիստական հեղափոխությունների հետ մեծ նշանակություն է ունեցել արաբական հեղափոխությունների հարստացման և համաշխարհային մասշտաբով նրա հեռանկարների ընդարձակման գործում»¹⁰⁰:

Սոցիալիստական որևէ ուսմունքի ուղղության բնույթը որոշող կարևոր շափանիշներից մեկը վերաբերմունքն է բուրժուական և բանվոր դասակարգերին, թե տվյալ ուսմունքն ինչ նշանակություն է տալիս այդ դասակարգերին հասարակության մեջ և ինչպես է լուծում նրանց միջև եղած անտա-դոնիստական հակասությունները:

Ուտոպիստ-սոցիալիստները չկարողացան ճիշտ պատասխան գտնել այդ հարցերին: Նրանց որոշ գաղափարախոսներ, ինչպես Սեն-Սիմոնը, առաջ քաշեցին «արդյունաբերական դասակարգի» տեսությունը, որի համաձայն թե՛ կապիտալիստները և թե՛ պրոլետարները, որոնք զբաղված են արդյունաբերական ոլորտում, միավորվում են մեկ միասնական «արդյունաբերական դասակարգի» մեջ: Դա նշանակում էր անտեսել բուրժուազիայի և պրոլետարիատի միջև եղած արմատական տարբերությունները, պրոլետարիատը որպես դասակարգ տարրալուծել արհեստականորեն հնարած «արդյունաբերական դասակարգ» հասկացության մեջ և այդ կերպ լուծել բուրժուազիայի և պրոլետարիատի միջև եղած հակասությունը:

Հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմը, ի տարբերություն ուտոպիստականի, հստակ կերպով առանձնացնում է բուրժուազիային և ընդունում պրոլետարիատի գոյությունը: Հակակապիտալիզմը, որը կազմում է սոցիալիզմի հեղափոխական-դեմոկրատական կոնցեպցիաների անբաժան և կարևոր մասը, հիմնվում է հենց բուրժուազիայի, որպես ինքնուրույն շահագործող դասակարգի ճանաչման սկզբունքի վրա: Դրանում է կայանում հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի սկզբունքային տարբերություններից մեկը ուտոպիստական սոցիալիզմից: Միաժամանակ «արդյունաբերական դասակարգի» ժխտման և բուրժուազիայի որպես ինքնուրույն շահագործողական դասակարգի ճանաչման հարցում տարաձայնություններ չկան գիտական և հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի միջև: Նրանց միջև սկզբունքային տարբերություն գոյություն ունի պրոլետարիատի, հեղափոխական պրոցեսում նրա տեղի և դերի հարցում: Հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմը թեև ընդունում է պրոլետարիատի որպես ինքնուրույն դասակարգի գոյությունը, սակայն նրան չի ճանաչում որպես մի ուժ, որն ընդունակ է ոչ միայն այժմ, այլև ապագայում դառնալու հասարակության առաջատար ուժը և քաղաքական ղեկավարը և իրագործելու սոցիալ-տնտեսական վերափոխումներ: Այդ ուսմունքի մեջ բանվոր դասակարգն իր քաղաքական նշանակությունամբ միևնույն հարթության վրա է

դրվում մյուս դասակարգերի և տարբեր խավերի հետ: Այդ մասին միանգամայն որոշակի է ասված, օրինակ, Իրաքի Ազգային գործողության խարտիայում, որտեղ արձանագրված է, որ «ժողովրդական ղանգվածները, և նրանց մեջ բանվորները, գյուղացիները, ուսանողները և մտավորականությունը հեղափոխության հիմքն են»¹⁶¹: Այդ նույն կոնցեպցիան գտնում ենք Սիրիայի Առաջադիմական ազգային ճակատի խարտիայում, որտեղ ընդգծված է, որ ճակատի ուժերը դիմում են հասարակության որոշակի խավերին՝ բանվորների, գյուղացիների, արհեստավորների, ղինվորների, ցածր վարձատրվող քաղաքացիների և հեղափոխական մտավորականության ներկայացուցիչներին¹⁶²: Համանման տեսակետներ կան նաև Ալժիրի¹⁶³ և այլ երկրների ծրագրային փաստաթղթերում:

Պրոլետարիատի քաղաքական ղեկավար դերի ժխտման հետ հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի գաղափարախոսները պրոպագանդում են ազգի միաձուլության և ազգային ուժերի միասնության, կոալիցիայի տեսությունը, որտեղ ղեկավար դերը փաստորեն պատկանում է մանրթուրժուական տարրերին:

Միանգամայն հասկանալի է դառնում հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի կողմից սկզբունքորեն պրոլետարիատի դիկտատուրայի կամ բանվոր դասակարգի քաղաքական ղեկավարման այլ ձևերի ժխտումը: Սոցիալիզմի այս հոսանքի ներկայացուցիչները չեն թաքցնում իրենց տարաձայնությունները մարքսիզմ-լենինիզմի հետ սկզբունքորեն կարևոր այս հարցում: Իր ելույթներից մեկում, 1962 թ. Նասերը հայտարարեց. «Մարքսիզմը պահանջում է անցում հետադիմության դիկտատուրայից պրոլետարիատի դիկտատուրային: Մենք չենք ասում այն մասին, որ մի դասակարգի դիկտատուրան հանձնում ենք մի այլ դասակարգի դիկտատուրային: Մենք մի դասակարգի դիկտատուրայից անցնում ենք ամբողջ ժողովրդի դիկտատուրային»¹⁶⁴: Թեև հետագայում Նասերի քաղաքական հայացքներում կատարվեցին դրական փոփոխություններ, սակայն պրոլետարիատի քաղաքական իշխանության հարցում նա չփոխեց իր տեսակետները: Այդ է վկայում 1966 թ. նրա պրած մի հայտա-

րարությունը, որտեղ ընդգծվում էր, որ սկզբունքներից մեկը, որ նրան բաժանում է մարքսիստներից, պրոլետարիատի դիկտատուրայի հարցն է¹⁰⁵:

Սիրիայում նույնպես ժխտվում է պրոլետարիատի քաղաքական ղեկավարության հնարավորությունը և առաջ է քաշվում լայն համազգային կոալիցիայի ստեղծման հարցը¹⁰⁶: Այդ կոնցեպցիան տիրապետող է նաև Իրաքում: Իրաքի Ազգային գործողության խաբտիայում տրված է 1968 թ. հունիսի 17-ի հեղափոխությունից հետո երկրում հաստատված քաղաքական իշխանության բնութագիրը: «Քաղաքական համակարգը, — գրված է խաբտիայում, — որ կառուցվել է հունիսի 17-ի հեղափոխությունից հետո արաբական սոցիալիստական վերածնության կուսակցության ղեկավարությամբ, որը ձգտում է իրականացնել ազգային, ազգայնական և առաջադիմական ուժերի և տարրերի ամենալայն կոալիցիա, հանդիսանում է դեմոկրատական, ժողովրդական և միասնական (ունիտար) համակարգ»¹⁰⁷: Այստեղ մի խոսքով ասված բանվոր դասակարգի քաղաքական ղեկավարության կամ առաջատար դերի մասին: Փաստորեն պրոլետարիատը տարրալուծված է ազգային և առաջադիմական տարրեր ուժերի ու տարրերի մեջ կամ հանդիսանում է այդ կոալիցիայի շարքային ջոկատներից մեկը:

Համանման դրույթներ կան ձևակերպված նաև Ալժիրի, ինչպես նաև Լիբիայի ծրագրային փաստաթղթերում:

Այսպիսով, հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի ուսմունքը դեռ չի բարձրացել հասարակությունը սոցիալիստական սկզբունքների վրա վերականգնելու գործում բանվոր դասակարգի պատմական առաջատար դերի ըմբռնման մակարդակին: Հենց այս հարցում է ամենագլխավոր, սկզբունքային տարաձայնություններից մեկը հեղափոխական-դեմոկրատական և գիտական սոցիալիզմի միջև:

Հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի էությունը հասկանալու համար սկզբունքային նշանակություն ունի դասակարգային պայքարի հարցը:

Այս ուսմունքի գաղափարախոսներն ու կողմնակիցները, ինչպես ուտոպիստ-սոցիալիստները, սկզբնական շրջանում, ամբողջովին ժխտում էին դասակարգային պայքարի տեսու-

թյունը, որը հանդիսանում է մարքսիզմ-լենինիզմի կարևորագույն դրույթներից մեկը: Նրանք քարոզում էին «դասակարգային խաղաղության» և «դասակարգային ներդաշնակության» դադափարները՝ ելնելով այն տեսակետից, թե հին վարչակարգի տապալումից և հեղափոխական-դեմոկրատների իշխանության գլուխ անցնելուց հետո հասարակության հիմնական սոցիալ-դասակարգային ուժերի՝ բուրժուազիայի, պրոլետարիատի, գյուղացիության, միջին և մանր խավերի միջև արմատական հակասություններ չեն առաջանա: Նրանք պնդում էին, որ այդ դասակարգերի շահերը համընկնում են ներքին և արտաքին քաղաքականության գլխավոր հարցերի շուրջը: Այդ տեսակետի յուրօրինակ արտահայտություն է ազդի միաձուլյ լինելու տեսությունը: Դրանում դժվար չէ նկատել բուրժուազիա-սոցիալիստների հեռավոր ազդեցությունը:

Դասակարգային պայքարի ժխտումը և «դասակարգային հաշտության» ընդունումը այս կամ այն շափով արտացոլվել է Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի, Ալժիրի, Լիբիայի հեղափոխական դեմոկրատների բոլոր ծրագրային փաստաթղթերում: Գործնականում այդ տեսությունը կիրառում գտավ սոցիալիզմն այդ երկրներում ազգային բուրժուազիայի օգնությամբ «կառուցելու» փորձերի մեջ: Ազգային էկոնոմիկայի ստեղծումը և զարգացումն առաջին հերթին կապվում էր ազգային բուրժուազիայի գործունեության հետ: Ելնելով այդ տեսակետից, որոշ երկրներ, նախ և առաջ Եգիպտոսի և Սիրիայի կառավարությունները, հատկապես 50-ական և 60-ական թթ. սկզբներին, լայն քաղաքական և ֆինանսատնտեսական օգնություն ու աջակցություն էին ցույց տալիս ազգային բուրժուազիային:

Սակայն հետագայում հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի գաղափարախոսները հարկադրված էին վերանայել իրենց հայացքները դասակարգային պայքարի հարցում: Գլխավոր ուղղումը մտցրեց ինքը՝ ազգային բուրժուազիան, որը շարդարացրեց իր վրա դրված հույսերը: Ինչպես ցույց տվեց իրականությունը, ազգային բուրժուազիան, ստանալով կառավարության աջակցությունը, բնավ մտադիր չէր պայքար ծավալելու սոցիալիստական, թեկուզ և արաբական

ըմբռնումով, հասարակարգի կառուցման համար: Ազգային բուրժուազիան ձգտում էր երկրի տնտեսական ու քաղաքական զարգացումը տանել այնպիսի ուղիով, որն առաջին հերթին համապատասխանում էր նրա դասակարգային շահերին: Դրանով իսկ նա առաջինը խախտեց «դասակարգային խաղաղությունը» և իրեն հակադրեց ամբողջ հասարակությանը: Հեղափոխական-դեմոկրատները հարկադրված էին ինչ-որ փոփոխություններ մտցնել իրենց տեսակետներում: Սկզբում նրանք ազգային բուրժուազիային մեղադրեցին հասարակության ինչ, իսկ ապա մշուշապատ ձևով սկսեցին խոսել դասակարգային հակասությունների և պայքարի մասին, շնայած որ իրենց ծրագրային փաստաթղթերում նրանք այդպես էլ այդ հարցի վերաբերյալ համապատասխան փոփոխություն չմտցրին:

Սակայն հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի գաղափարախոսների կողմից ինչ-որ շափով դասակարգային պայքարի ընդունումը արտահայտվեց յուրօրինակ ձևով և չի կրում համընդհանուր բնույթ: Նրանք ճանաչում են միայն բուրժուազիայի դեմ ուղղված դասակարգային պայքարը և «չեն տեսնում» այն հակասությունները, որոնք կան մնացած դասակարգերի և սոցիալական խմբերի, մասնավորապես պրոլետարիատի, միջին ու մանր բուրժուազիայի միջև: Բացի դրանից, ասպարեզ նետվեց, ինչպես Եգիպտոսում, «ոչ շահագործողական բուրժուազիա» հասկացությունը, որի հետ կարելի է համագործակցել, քանի որ նա դիտվում է երկրի աշխատավորական ուժերի բաղկացուցիչ մաս:

Այլ կերպ ասած, հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի տեսության մեջ դասակարգային պայքարի հարցը չի հասցված իր տրամաբանական վախճանին և համընդհանուր բնույթ չի կրում:

Սոցիալիստական բոլոր ուսմունքների մեջ կենտրոնական հարցերից է սեփականության հարցը: Մարքսիզմ-լենինիզմը սոցիալիստական հասարակության կառուցումը կապում է քաղաքում ու գյուղում արտադրության բոլոր միջոցների հանրայնացման հետ: Հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմը, ի տարբերություն գիտական սոցիա-

լիզմի, շի ընդունում արտադրութեան բոլոր միջոցների հան-
րայնացումը ամբողջ երկրի մասշտաբով: Առայժմ զգալի
հարված է հասցվել խոշոր բուրժուազիային: Սահմանափակ-
վել է խոշոր ֆեոդալ-կալվածատերերի սեփականութիւնը,
նվազել նրանց քաղաքական ազդեցութիւնը երկրի ներսում:

Այդ երկրներում պահպանվել է ոչ միայն մանր, այլև
միջին բուրժուազիան: Պահպանվել է նաև միջին հողատերե-
րի և որպես սոցիալական նոր խավ ձևավորված՝ կուլակ-
ների սեփականութիւնը: Հեղափոխական-դեմոկրատական
ռեֆորմները շեն դնում դրանց վերացման հարցը: Իրաքում
պաշտոնապես ճանաչվում է սեփականութեան երեք ձև՝ պե-
տական, մասնավոր և խառը¹⁰⁸: Ընդամին հատուկ ընդգծվում
է մասնավոր սեկտորի շրջական դերը ազգային էկոնոմիկայի
կառուցման գործում¹⁰⁹: Սիրիայի սահմանադրութիւնը նույն-
պես ընդունում է սեփականութեան երեք ձև՝ ժողովրդական,
կոլեկտիվ և մասնավոր¹¹⁰:

Ի նկատի ունենալով փաստական վիճակը, կարող ենք
ասել, որ այդ երկրներում արտադրութեան միջոցների հան-
րայնացումը թե՛ հորիզոնական՝ այսինքն արտադրութեան
բոլոր ճյուղերի ընդգրկումը, և թե՛ ուղղաձիգ՝ այսինքն ան-
կախ սեփականութեան չափերից և ծավալներից, շի դրվում:

Հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի էութիւնն
ամբողջովին բացահայտելու համար, անհրաժեշտ է կանգ
առնել կրոնի դերի վրա: Հեղափոխական-դեմոկրատական
սոցիալիզմի ուսմունքի կողմնակիցները դեռ մեծ նշանա-
կութիւն են տալիս կրոնի և կրոնա-էթիկական հայացքներին:
Կրոնի օգտագործումը ոչ մարքսիստական սոցիալիզմի կող-
մից նոր բան չէ: Հայտնի է, որ ուտոպիստական, երբեմն
նաև ռեֆորմիստական սոցիալիզմի կողմնակիցները, մաս-
նավորապես Սեն-Սիմոնի հետևորդները, նույնպես փորձում
էին օգտագործել այսպես կոչված նորացված կրոնը հասա-
րակութեան սոցիալիստական վերափոխումների համար:

Կրոնական կոնցեպցիաները, թեև ոչ միատեսակ ուժով,
դրսևորվում են սոցիալիստական կողմնորոշման բոլոր եր-
կրներում, կաղմելով դրանց սոցիալիստական ծրագրերի
բաղկացուցիչ մասը: Իսկ որոշ երկրներում, ինչպես Նգիպ-
տոսը, Իրաքը, Լիբիան և այլն, իսլամը հռչակված է որպես

պետական կրոն: «Մարքսիզմ-լենինիզմը չի հավատում կրո-
նին: Մենք հավատում ենք նրան: Մենք հավատում ենք
ալլահին», — հայտարարեց Նասերը 1962 թ. մայիսին Նգիպ-
տոսի ժողովրդական ուժերի կոնգրեսում¹¹¹: Հետագայում էլ
Նասերի և Նգիպտոսի մյուս ղեկավարների հայացքներն այս
հարցում փոփոխության չենթարկվեցին: Նասերը 1966 թ.
իր ելույթներից մեկում նշեց, որ եթե մարքսիզմը պայմանա-
կանորեն ձևակերպենք 20 կետով, ապա դրանցից 18-ի տակ
նա պատրաստ է ստորագրել: «Միակ երկու կետերը, — նշեց
Նասերը, — որ բաժանում են մեզ մարքսիստներից՝ պրոլե-
տարիատի դիկտատուրան և կրոնի նկատմամբ վերաբեր-
մունքն է»¹¹²: Նասերը և եգիպտական հեղափոխական դե-
մոկրատներն իրենց դիրքը կրոնի հարցում այնքան կտրուկ
և որոշակի են սահմանել, որ դա այլ մեկնաբանության տե-
ղիք չի տալիս:

1973 թ. մարտի 12-ին ընդունված Սիրիայի սահմանա-
դրությունը Սիրիան հռչակել է «սուվերեն սոցիալիստական
ժողովրդադեմոկրատական պետություն», որտեղ արձանա-
գրված է տառացիորեն հետևյալը. «Մուսուլմանական իրա-
վունքը օրենսդրության գլխավոր աղբյուրն է»¹¹³:

Կրոնի նկատմամբ համանման մոտեցում գոյություն
ունի Իրաքում: Իրաքի ժամանակավոր սահմանադրությունը,
որը երկիրը հայտարարեց «ժողովրդական դեմոկրատական
սուվերեն հանրապետություն» և նրա գլխավոր նպատակը
համարեց արաբական միասնական պետության ստեղծումը
և «սոցիալիստական կարգերի հաստատումը», հռչակեց (հոդ-
ված 4-րդ), որ «իսլամը հանդիսանում է պետական կրոն»¹¹⁴:

Կրոնի հարցում Լիբիան ավելի հեռու է գնացել: Այստեղ
կրոնը, այսինքն իսլամը, հռչակվել է միակ բնական, մարդու
կողմից չստեղծված օրենք, միակ ճիշտը և համապարփակը,
որի վրա հենվելով միայն կարելի է կառուցել սոցիալիս-
տական հասարակարգ:

Կրոնին զգալի տեղ է հատկացվում նաև Ալժիրում:

Մարքս-լենինյան տեսությունը, ինչպես հայտնի է, ժըխ-
տում է կրոնի որևէ իրավունքը խառնվելու, առավել ևս որո-
շելու երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգաց-

ման ուղղութիւնը: Նա այս կամ այն կրօնին դաժանելը հա-
մարում է յուրաքանչյուր անհատի խղճի գործ:

Այսպիսով, վերաբերմունքը կրօնի նկատմամբ գիտա-
կան և հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի տե-
սութիւնների մեջ մյուս կարևոր տարբերութիւններից մեկն է:

Վերևում շարադրվածից երևում է, որ հեղափոխական-
դեմոկրատական սոցիալիզմն իր վրա կրում է էկլեկտիզմի
կնիք: Նրանում առկա են ինչպես ուտոպիստական և մանր-
բուրժուական, այնպես էլ գիտական սոցիալիզմի առանձին
տարրեր:

Ամփոփելով, կարելի է ասել, որ հեղափոխական-դեմոկ-
րատական սոցիալիզմի տարբերութիւնը գիտական սոցիա-
լիզմից՝ գլխավոր և սկզբունքային հարցերի վերաբերյալ,
հանդում է հետևյալին.

1. Պրոլետարիատի պատմական առաքելության և դերի
շրմբոնումը, նրա քաղաքական ղեկավարության և քաղա-
քական իշխանության հաստատման գաղափարի ժխտումը:
Որպես այլընտրանք հեղափոխական-դեմոկրատական սոցիա-
լիզմը առաջադրում է ժողովրդաիշխանության գաղափարը,
որտեղ տիրապետող դիրք են գրավում միջին և մանր խա-
վերը, գլխավորապես մանրբուրժուական ծագում ունեցող,
իսկ քաղաքի և գյուղի աշխատավորները հետին պլան են
մղված:

2. Դասակարգային պայքարի անտեսումը և շրնդու-
նելը:

3. Հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմը դեռ չի
բարձրացել արտադրության գլխավոր միջոցների հետևողա-
կան հանրայնացման անհրաժեշտութիւնը հասկանալու մա-
կարդակին:

4. Նա հենվում է կրօնի, տվյալ դեպքում իսլամի, նրա
դոգմաների վրա, իսլամը դիտելով որպես վերահիշյալ
երկրներում հաստատված քաղաքական, սոցիալ-տնտեսական
և գաղափարական կառուցվածքի էական տարր:

Հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմի այս յու-
րահատկութիւնները բացատրվում են նրանով, որ նա առա-
ջին հերթին հեղափոխական մանր բուրժուազիայի շահերի
խտացված արտահայտութիւնն է, թեև նրանում, ինչպես

արդեն նշել ենք, որոշ շափով արտահայտվում են նաև բան-
վորների, գյուղացիների և մտավորականության շահերը, սա-
կայն դրանք առայժմ տիրապետող շեն և առաջնությունը զի-
ջում են մանր բուրժուազիային:

Ընդհանուր գծերով, այսպիսին է հեղափոխական-դե-
մոկրատական սոցիալիզմի ուսմունքի քաղաքական-դասա-
կարգային էությունը: Դրանով կարելի է բացատրել ինչպես
նրա հեղափոխականությունը, այնպես էլ անհետևողակա-
նությունը, նրանում ինչպես ուտոպիստական, այնպես էլ
գիտական սոցիալիզմի տարրերի և կոնցեպցիաների առկա-
յությունը¹¹⁵:

Այդուհանդերձ, հեղափոխական-դեմոկրատական սոցիա-
լիզմը ամենահեղափոխական հոսանքն է Ասիայի և Աֆրի-
կայի երկրներում տարածում գտած ոչ մարքսիստական սո-
ցիալիստական ուսմունքների մեջ:

6. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԽՈՒՄ
ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հեղափոխական շարժումը փոփոխությունների և զարգացման վիճակում գտնվող կենդանի պրոցես է: Եվ դա հասկանալի է, քանի որ հեղափոխական պրոցեսը կոչված է լուծելու իր առջև կանգնած խնդիրները, որի ընթացքում նա հասնում է զարգացման ավելի բարձր աստիճանի: Հակառակ դեպքում տեղի է ունենում հեղափոխության վերասերում՝ դրանից բխող քաղաքական և սոցիալ-տնտեսական ամենածանր հետևանքներով:

Այս օրինաչափությունը հաստատում է նաև արաբական հեղափոխական, մասնավորապես ազգային-դեմոկրատական հեղափոխությունների պրակտիկան:

Ժամանակակից փուլում ազգային-դեմոկրատական հեղափոխությունները որոշակի էվոլյուցիա են ապրում: Դա բխում է այդ՝ անցման շրջանի հեղափոխությունների բուն էությունից: Անցման շրջանը չի կարող հավերժ լինել: Նրա ընդերքում կատարվող քանակական փոփոխություններն անխուսափելիորեն առաջ են բերում որակական փոփոխություններ և կանխորոշում նրա զարգացման հետագա ուղին, նրա ճակատագիրը:

Այդ առումով, գործ ունենք երեք տարբերակի հետ:

Առաջին, ազգային-դեմոկրատական հեղափոխությունների խորքում կուտակված որակական փոփոխությունների առաջադիմական բնույթի շնորհիվ տեղի է ունենում այդ հեղափոխության սոցիալիստականի վերաճելու պրոցեսը: Այդ երևույթն այսօր կատարվում է Եմենի Ժողովրդական Դե-

մեկրատական Հանրապետությունում*։ (Ի նկատի ունենալով մինչև նրա միավորվելը ԵԱՀ-ի հետ)։ ԵԺԴՀ-ում հեղափոխական-դեմոկրատները, 1980 թ. միավորվելով հիմնեցին Եմենի սոցիալիստական կուսակցությունը։ Միավորումը տեղի ունեցավ գիտական սոցիալիզմի սկզբունքների հիման վրա։ Եվ քանի որ սոցիալիստական կուսակցությունը կառավարող կուսակցություն է, ԵԺԴՀ-ում կատարվող ամատական վերափոխումներն այսօր ջանում են իրականացնել գիտական սոցիալիզմի սկզբունքներին համապատասխան, հաշվի առնելով ԵԺԴՀ-ի յուրահատուկ պայմանները՝ հետամնացությունը, բազմազան կացութաձևերի, այդ թվում՝ ցեղային-տոհմատիրական հարաբերությունների առկայությունը, պրոլետարիատի փոքրաքանակ լինելը և այլն։ Այս բոլորն, անշուշտ, մեծ դժվարություններ են ստեղծում սոցիալիստական վերափոխումների ճանապարհին։ Բայց գիտական սոցիալիզմի սկզբունքների ստեղծագործաբար օգտագործումը՝ պատմական անցյալից ժառանգություն մնացած յուրահատկությունների հաշվառմամբ, այն միակ ճիշտ ուղին է, որ ի վիճակի է ապահովել այդ դժվարությունների հաղթահարումը և ԵԺԴՀ-ն ապագայում վերածել սոցիալիստական երկրի։

ԵԺԴՀ-ի և աֆրիկյան մի շարք այլ երկրների օրինակը ցույց է տալիս, որ բարենպաստ պայմանների առկայություն դեպքում, ազգային-դեմոկրատական հեղափոխությունները կարող են թևակոխել հեղափոխության սոցիալիստական փուլը։

Երկրորդ, պատմական փորձը եկավ հաստատելու, որ ազգային-դեմոկրատական հեղափոխությունները ոչ միայն ինքնաբերաբար չեն վերաճում սոցիալիստականի, այլև, ընդհակառակը, հնարավոր է նրանց հետընթաց զարգացումը, ազգային-դեմոկրատական հեղափոխությանը վերջ է տրվում և տվյալ երկիրը կրկին հետ է շարժվում մոտավորապես դրան նախորդած պատմական դարաշրջանը։ Սրա ապացույցն է հասարակական-քաղաքական և տնտեսական

* Զարգացման նույն պրոցեսն է ընթանում նաև Բենինում և աֆրիկյան մի շարք այլ երկրներում։

դարձանցումը Եզիպտոսում Նասերի մահից հետո, Սադաթի պրեզիդենտության շրջանում՝ 1970-ական թվականներին, և Սուդանում, մոտավորապես 70-ական թվականների կեսերից՝

Նասերը 60-ական թվականների կեսերից կիրառեց մի շարք վերափոխումներ, որոնք հակակապիտալիստական բռնույթ էին կրում։ Սակայն նրան չհաջողվեց այդ ռեֆորմներն իրականացնել ամբողջությամբ՝ լուծել երկրի առջև կանգնած սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրները, և մինչև վերջ արմատախիլ անել շահագործող տարրերին։ Նա ծանր հարված հասցրեց եզիպտական խոշոր, մասամբ նաև միջին բուրժուազիային և խոշոր ֆեոդալ-կալվածատերերին։ Պահպանելով իրենց գոյությունը և դաշնակցելով քաղաքական և ռազմական ընդդիմադիր ուժերի հետ, որոնք դեմ էին Նասերի կուրսին, նրանք սպասում էին առիթի՝ իրենց դիրքերը վերականգնելու համար։ Եզիպտական աջ ուժերին այդ բանը հաջողվեց իրականացնել Նասերի մահից հետո։ Աջերի և ձախերի՝ նասերականների, միջև սկսված պայքարն ավարտվեց աջերի հաղթանակով, որի քաղաքական շահերի արտահայտիչը դարձավ Եզիպտոսի նոր պրեզիդենտ Անվար Սադաթը։ Նա կիրառեց «ինֆիթահի»՝ բաց դռների քաղաքականություն, վերականգնեց և ամրապնդեց մասնավոր և օտարերկրյա կապիտալի դիրքերը, հարված հասցրեց պետական սեկտորին, սահմանափակեց դեմոկրատական ազատությունները և աշխատավորների իրավունքները։ Սադաթը կտրուկ շրջադարձ կատարեց նաև արտաքին քաղաքականության բնագավառում։ Նա հրաժարվեց Խորհրդային Միության հետ բարեկամությունից, մերձեցավ ԱՄՆ-ի և Իսրայելի հետ, իսկ 1978 թ. Քեմպ-Դևիդի համաձայնագրի ստորագրումով լքեց արաբական պայքարի ճակատը և դավաճանեց արաբների ու պաղեստինցիների ազատագրության գործին¹¹⁶։ Դա նշանակում էր Նասերի կողմից ազգային-դեմոկրատական հեղափոխության ընթացքում ստեղծված ամբողջ քաղաքա-

* Բացի Եզիպտոսից և Սուդանից, ազգային-դեմոկրատական հեղափոխությունների ընդհատում տեղի ունեցավ Գանայում, Մալիում և մի շարք այլ երկրներում։

կան և սոցիալ-տնտեսական համակարգի վերացում: Եզիպ-
տոսը հետընթաց շարժում կատարեց: Այստեղ վերջ տրվեց
ազգային-դեմոկրատական հեղափոխությանը:

70-ական թվականների կեսերից շրջադարձ տեղի ունե-
ցավ նաև Սուդանի կառավարության քաղաքականության մեջ:
Երկրում հաստատվեց Նիմեյրիի հետադիմական դիկտատու-
րան. սկսվեցին բռնություններն ազգային հայրենասիրական
ուժերի նկատմամբ: Հարված հասցնելով դեմոկրատիային,
դադարեցնելով առաջադիմական վերափոխությունները, որոնք
սկսվել էին կիրառվել 1969 թ. մայիսի 25-ի հեղափոխությու-
նից հետո, Նիմեյրին 80-ական թվականների սկզբին համա-
պատասխան որոշումներով երկրի քաղաքական և սոցիալ-
տնտեսական համակարգի վերակառուցման հիմքում դրեց
խլամի սկզբունքները:

Սուդանում նույնպես ազգային-դեմոկրատական հեղա-
փոխությունը դադարեցվեց:

Եզիպտոսի և Սուդանի հրաժարվելն առաջադիմական
կուրսից ծանր հարված էր արաբական հեղափոխական
շարժմանը:

Երրորդ, առկա է նաև ազգային-դեմոկրատական հեղա-
փոխության մեկ այլ յուրահատուկ ձևափոխություն: Ազգա-
յին-դեմոկրատական հեղափոխությունը հասնելով զարգաց-
ման մի որոշ մակարդակի, սկսում է դոփել տեղում, առա-
ջանում է լճացում, որը պարարտ հող է հանդիսանում բացա-
սական երևույթների առաջացման համար:

Այս պրոցեսն ընթանում է Իրաքում 70-ական թվական-
ների վերջերից և Սիրիայում՝ 80-ականների սկզբներից: Եր-
կու երկրներում էլ տեղի չի ունենում առաջադիմական քա-
ղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումների խորա-
ցում, աշխատավորական զանգվածները չեն ներգրավվում
երկրի կառավարման պրոցեսին: Ձևավորվել ու զարգանում
է այսպես կոչված բյուրոկրատական և մակաբուծային բուր-
ժուազիան, որոշ չափով աշխուժացել է մասնավոր սեկտորը
և այլն: Իսկ Իրաքում սրվեցին հակասությունները կառա-
վարող Բաաս և մյուս կուսակցությունների ու դեմոկրատա-
կան ուժերի միջև: Երկրի զարգացման վրա խիստ բացասա-
բար ազդեց իրաքյա-իրանական պատերազմը, որը նպաստեց

հետադիմական ուժերի գլուխ բարձրացմանը և նրանց դիրքերի ամրապնդմանը: Իրաքում հաստատվել է Սադդամ Հուսեյնի և նրա կողմնակիցների ռազմական դիկտատուրա:

Իրաքի և Սիրիայի կոմունիստական կուսակցությունները գտնուում են, որ Իրաքում և Սիրիայում, զարգացող բացասական տենդենցների հետևանքով այսօր այլևս հնարավոր չէ խոսել ազգային-դեմոկրատական հեղափոխությունները սոցիալիստականի վերածելու մասին:

Այսպիսով, կարող ենք ասել, որ արաբական այն երկրներում, որոնք ներգրավված են ազգային-դեմոկրատական հեղափոխության ոլորտը, բացառությամբ ԵժԴՀ-ի, հեղափոխական շարժումը ապրում է ճգնաժամ: Սակայն ճգնաժամ ապրում է ոչ թե հեղափոխական շարժումն ընդհանրապես, այլ հեղափոխության կոնկրետ, տվյալ տիպը, այսինքն՝ ազգային-դեմոկրատական հեղափոխությունը: Մեր կարծիքով, հեղափոխական-դեմոկրատների հեղափոխական պոտենցիան սպառվել կամ էլ ընդհուպ մոտեցել է դրան: Արաբական երկրների քաղաքական և սոցիալ-տնտեսական հետադա առաջադիմությունը պահանջում է դուրս գալ ազգային-դեմոկրատական հեղափոխությունների շրջանակներից և վճռական քայլ կատարել սոցիալիստական հեղափոխության ուղղությամբ: Պետք է վճռական դերն անցնի բանվոր դասակարգին և առաջադիմական ու հայրենասիրական ուժերին, որոնք ի վիճակի կլինեն նոր շունչ հաղորդել հեղափոխական պրոցեսին: Դրա համար կպահանջվի որոշակի պատմական ժամանակաշրջան:

Իսկ ինչ վերաբերում է հեղափոխական շարժման ալիքի բարձրացմանը զարգացման կապիտալիստական ուղիով ընթացող արաբական երկրներում, ապա դա, ինչպես նշել ենք, կախված է հեղափոխական ուժերի՝ բանվորների, գյուղացիության, մտավորականության ինքնագիտակցության, նրանց կազմակերպվածության աստիճանից, ինչպես նաև այդ երկրներում քաղաքական պայքարի սրումից:

Այդ պայքարի ընթացքում բացառված չէ, որ բարենր-պաստ պայմանների դեպքում, հնարավոր լինի որոշ երկրներում ուղղակի անցնել սոցիալիստական վերափոխումների իրագործմանը:

Նշանակով այդ երկրների զարգացման ցածր մակարդակից և սոցիալ-դասակարգային անբավարար շերտավորումից, հավանական է, որ նրանք նույնպես կանցնեն ազգային-դեմոկրատական հեղափոխությունների բովով: Միայն թե նրանք չգտնվեն ավելի նպաստավոր իրավիճակում, քան արաբական այն երկրները, որոնք առաջինը ոտք դրեցին ազգային-դեմոկրատական հեղափոխության ոլորտը, քանի որ հնարավորություն կունենան հաշվի առնել նրանց կուտակած պատմական փորձը և խուսափել այն սխալներից ու վրիպումներից, որոնք թույլ տրվեցին նախորդների կողմից:

Այսպիսով, եթե հետադարձ հայացք դրենք արաբական հեղափոխական շարժման անցած ուղուն, սկսած 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչև մեր օրերը, այն ընթացել է վերընթաց ուղիով: Մի շարք երկրներում հակաիմպերիալիստական, հակաֆեոդալական հեղափոխությունները վերածվեցին ազգային-դեմոկրատական հեղափոխությունների, որոնց ընթացքում առաջին պլան մղվեց առաջադիմական սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումների հարցը:

Կուտակված հսկայական փորձը և համապատասխան հեղափոխական ուժերի առկայությունը վստահություն են ներշնչում, որ արաբական երկրներում հեղափոխական շարժումը կարող է հասնել նոր հաղթանակների: Դրանով իսկ նա իր արժանի լուման կունենա համաշխարհային հեղափոխական պրոցեսի մեջ:

1. Ph. Hitti. History of Syria, Including Lebanon and Palestine, London, 1951, p. 667.

2. G. Haddad, Fifty Years of Modern Syria and Lebanon, Beirut, 1950, 29.

3. جهاد صالح، الطورانية التركية بين الاصولية والفاشية، بيروت، ١٩٨٧، ص ٥

(Ջիհադ Վալեհ, Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև, Բեյրութ, 1987, էջ 5):

4. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, ԹԶԽԴ, էջ 150—151:

5. جميل خبر، الارمن ولبنان. — «المدينة»، بيروت، عدد ٢٤، ١٩٧٤

(Ջամիլ Խարե, Հայերը և Լիբանանը, Ալ-Մադինա, Բեյրութ, № 24, 1974):

6. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 6. Արաբական երկրներ, Երևան, 1974, էջ 219—220:

7. وثائق المؤتمر العربى الاول ١٩١٣، بيروت، ١٩٨٥، ص ١١٣

(Արաբական առաջին կոնգրեսի փաստաթղթեր. 1913, Բեյրութ, 1985, էջ 113):

8. Նույն տեղում:

9. «Ժողովուրդի Ձայն», Բեյրութ, 5. 1, 1947:

10. Վ. Ի. Լենին, Եժ, հ. 23, էջ 67:

11 Վ. Ի. Լենին, Եժ, հ. 30, էջ 189:

12. Տես, ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում (1945—1963 թթ.), Ե, 1964: Նույնի՝ Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958 թթ.) Ե, 1967: Նույնի՝ Հոկտեմբերը և ազգային-ազատագրական շարժման վերելքը Արաբական արևելքում— Վ. Ի. Լենինը և Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը» Ե, 1969: Նույնի (հեղինակակից)՝ Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917—1946 թթ.) Եր. 1975: «Великий Октябрь и народы Востока», М., 1957; Л. Н. Котлов, Национально-освободительное восстание 1920 г. в Ираке, М., 1958; А. М. Ментешашивили, Ирак в годы английского мандата, М., 1969; «Новейшая история арабских стран», М., 1968; Н. О. Оганесян, Образование независимой Сирийской республики, (1939—1946), М., 1968; Его же, Национально-освободительное движение в Ираке (1917—1958), Е., 1976; Б. Г. Сейранян, Египет в борьбе за независимость (1945—1952), М., 1970 և այլն:

13 Объединенная Арабская Республика (Справочник), М., 1968, с. 274.

14. Նույն տեղում, էջ 278:
- 15 Современная Сирия (Справочник), М., 1974, с. 255.
16. Վ. Ի. Լենին, *Եժ*, հ. 30, էջ 189:
- 17 Л. Н. Ватолина, Современный Египет, М., 1949, с. 68.
- 18 Объединенная Арабская Республика, с. 95.
- 19 Новейшая история арабских стран, с. 364.
20. Նույն տեղում, էջ 366:
21. Նույն տեղում, էջ 394:
- 22 Объединенная Арабская Республика, с. 107.
- 23 Политические партии. Справочник, М., 1981, с. 207.
- 24 «صفحات من تاريخ الحزب الشيوعي السوري» وثائق
برنامجية وبعض الأبحاث والدراسات « ١٩٧٤ » ص ٥
(«էջեր Սիրիայի կոմունիստական կուսակցության պատմությունից: Մրա-
գրային փաստաթղթեր և որոշ հետազոտություններ և ուսումնասիրություն-
ներ», 1974, արարերեն):
- 25 «نضال الحزب الشيوعي اللبناني من خلال وثائقه»
الجزء الأول، بيروت ١٩٧١ ص ٥٧
(Լիբանանի կոմունիստական կուսակցության պայքարի փաստաթղթերում,
առաջին մաս, Բեյրութ, 1971, արարերեն):
- 26 Халед Хаммами, 60 лет Сирийской коммунистической пар-
тии.—«Проблемы мира и социализма», Прага, № 10, 1984, с. 91.
- 27 Рафик Самхун, 60 лет Ливанской коммунистической пар-
тии.—«Проблемы мира и социализма», Прага, № 12, 1984, с. 88.
2٨. «ارتين مادويان» حياة على المتراس» بيروت ١٩٨٦
ص ٤٤
(Արթին Մադեյան, Կյանքը պատենելի վրա, Բեյրութ, 1986, էջ 44):
29. Նույն տեղում, էջ 57:
30. Նույն տեղում, էջ 53—54:
31. Նույն տեղում, էջ 57:
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում, էջ 54:
- 34 «Проблемы мира и социализма», № 12, 1984, с. 88.
- 35 О. Ш. Каджая. Коммунистические партии арабских стран
в борьбе за национальную независимость и социальный прогресс.
Тбилиси, 1983, с. 270.
36. «لماذا يناضل الحزب الشيوعي السوري؟ — صفحات
من تاريخ الحزب الشيوعي السوري» وثائق برنامجية»
ص ٧
37. Նույն տեղում, էջ 11:
38. Նույն տեղում, էջ 19:

39. Նույն տեղում:
40. Նույն տեղում, էջ 20—25:
41. Նույն տեղում, էջ 31:
42. «Проблемы мира и социализма», № 10, 1984, с. 91.
43. Ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958 թթ.), Երևան, 1967, էջ 31:
44. نضال الحزب الشيوعي اللبناني من خلال وثائق الجزء الاول ص ١٠٥—١٠٦
45. ЦГАОР, СССР, ф. 4459, оп. I, д. 8088, л. 8—9.
46. Ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958 թթ.) էջ 78—79:
47. «١٩٤٤—الميثاق الوطني للحزب الشيوعي السوري - صفحات من تاريخ الحزب الشيوعي السوري ' وثائق برنامجية » ص ٥٧—٥٨
48. Տե՛ս «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, 10, 1, 1944:
49. Политические партии. Справочник, с. 161.
50. Влияние Великого Октября на развитие мирового коммунистического движения, М., 1977, с. 528.
51. Report of the Iraqi Communist Party to the Conference of Communist and Workers Parties within the Sphere of British Imperialism, held in London, April 21-24, 1954- „World News“, vol. I, № 20, May 15, 1954, p. 389.
52. „Iraqi Review“, Baghdad, 1960, №. 24. p. 10.
53. Նույն տեղում:
54. Մեջբերումն քստ. Օ. Յ. Կաճայա, указ. раб., с. 169.
55. Նույն տեղում:
56. Жизнь, отданная борьбе, М., 1966, с. 248.
57. Н. О. Оганесян, Национально-освободительное движение в Ираке, с. 312.
58. يوسف سلمان يوسف (فهد) . ' Ծրագրի լրիվ տեքստը տե՛ս . ' قضيتنا الوطنية ' بغداد ' ١٩٤٥
- (Յուսուֆ Սալման Յուսուֆ (Ֆահեդ), Մեր ազգային հարցերը, Բաղդադ, 1945),
59. Նույն տեղում, էջ 18:
60. Նույն տեղում:
61. Նույն տեղում, էջ 19:
62. Նույն տեղում, էջ 18:
63. Ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Իրանում (1945—63 թթ.) էջ 89:
64. يوسف سلمان يوسف ' قضيتنا الوطنية ' ص ١٨

65. W. Laqueur, Communism and Nationalism in the Middle East, London, 1957, p. 188.
66. Monitor, 5. IV. 1948.
67. S. Gavan, Kurdistan. Divided Nation of the Middle East, London, 1980, p. 47.
68. Նույն տեղում:
69. ЦГАОР СССР, ф. 4459, оп. 24, д. 1182, л. 163.
70. Положение рабочего класса и рабочее движение в странах Азии и Африки, М., 1962, с. 21.
71. ЦГАОР СССР, ф. 4459, оп. 24, д. 1182, л. 114.
72. О. Ш. Каджая, указ раб., с. 185.
73. ١٩٥٩—٣—٣٠ 'اتحاد الشعب' بغداد.
74. Е. М. Примаков, Восток после краха колониальной системы, М., 1982, с. 54.
75. Н. О. Оганесян, Неравномерное развитие арабских стран.— «Характерные черты социально-политического развития арабских стран в 1950—1970-е годы», Ереван, 1980; Е. М. Примаков, Восток после краха колониальной системы.
76. И. П. Беляев, Е. М. Примаков, Египет: Время президента Насера, М., 1981, с. 57.
77. Նույն տեղում:
78. Նույն տեղում, էջ 37:
79. Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 622:
80. Хартия Прогрессивного национального фронта САР. Современная Сирия., М., 1974, Приложение, с. 350.
81. Նույն տեղում, էջ 349:
82. Iraq. The National Action Charter, Baghdad, 1971.
83. Правда, 19.7.1973.
84. وثائق المؤتمر الوطني الثالث للحزب الشيوعي العراقي 'بغداد' ١٩٧٦
- (Իրաքի կոմունիստական կուսակցության երրորդ ազգային համագումարի փաստաթղթերը, Բաղդադ, 1976):
85. Политические партии. Справочник, с. 140.
86. Նույն տեղում:
87. Демократическая республика Судан, М., 1973, с. 162, 293.
88. Նույն տեղում, էջ 296:
89. Նույն տեղում, էջ 170:
90. Л. Р. Полонская, А. Х. Вафа. Восток: идеи и идеология, М., 1932, с. 237.
91. Muammar al-Qathafi. The Green Book Part One. The Solution of the Problem of Democracy. The Authority of the People. Tripoli, 1976.
92. И. П. Беляев, Е. М. Примаков. указ. раб. с. 54.

93. նույն տեղում, էջ 245—246.

94. К. Маркс и Ф. Энгельс. Соч. т. 19, М., 1961, с. 194.

95. جمال عبد الناصر 'فلسفة الثورة' القاهرة '١٩٥٤'

ص ٦٤

(Իսմայլ Արդևի նախը, Հեղափոխութեան փիլիսոփայութեանը, Կահիրե, 1954):

96. Хартия Прогрессивного национального фронта САР—Современная Сирия, с. 343.

97. Iraq. The National Action Charter, p. 11.

98. „Revolutionary Iraq. 1968—1973. The Political Report adapted by the 8th Regional Congress of the Arab Ba'ath Socialist Party January 1974“. Baghdad, 1974, p. 176.

99. И. П. Беляев, Е. М. Примаков, указ. раб., с. 273.

100. Хартия Прогрессивного национального фронта САР—Современная Сирия, с. 346.

101. Iraq. The National Action Charter, p. 23.

102. Хартия Прогрессивного национального фронта САР—Современная Сирия, с. 347.

103. За рубежом, № 34, 1976, с. 9.

104. И. П. Беляев, Е. М. Примаков, указ. раб., с. 272.

105. նույն տեղում, էջ 274.

106. Хартия Прогрессивного национального фронта САР—Современная Сирия, с. 347.

107. Iraq. The National Action Charter, p. 22.

108. նույն տեղում, էջ 37—38.

109. նույն տեղում, էջ 38.

110. ՏԽՍՍ Современная Сирия, с. 232—233.

111. И. П. Беляев, Е. М. Примаков, указ. раб., с. 272.

112. նույն տեղում, էջ 274.

113. Современная Сирия, с. 232.

114. الجمهورية العراقية • الدستور المؤقت 'بغداد' ١٩٧٠

ص ٣—٤

(Իրաքի Հանրապետութեան ժամանակավոր սահմանադրութեան, Բաղդադ, 1970, էջ 3—4):

115. Н. О. Оганесян. Революционно-демократический социализм и его соотношение с утопическим и научным социализмом—«Вестник Ереванского Университета», Ереван, 1980, № 2 (41), с. 15—25.

116. Այս մասին ավելի մանրամասն տե՛ս. Ե. Ա. Աբգարյան, Причины изменений внутренней и внешней политики Египта после Г. А. Насера—Характерные черты социально-политического развития арабских стран в 1950—1970 годы, с. 111—116; Ե. Մ. Սրիմակով. История одной сделки, М., 1985.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջաբան	5
1. Սոցիալական հեղափոխությունը և նրա դրսևորման յուրահատկություններն արաբական երկրներում	13
2. Բանվոր դասակարգի և կոմունիստական կուսակցությունների դերը սոցիալական հեղափոխության առաջին փուլում	22
3. Աղգային-դեմոկրատական հեղափոխությունները և նրանց օրինաչափությունները	47
4. Հեղափոխական-դեմոկրատական վարչակարգերի հաստատումը և նրանց խնդիրները	57
5. Հեղափոխական տեսությունը	69
6. Հեղափոխական պրոցեսը ժամանակակից փուլում և նրա դարգացման հեռանկարները	85
Ծանոթագրություններ	91

ՆԿԱՌԱՅ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԸ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ


Հրատ. խմբագիր է. Ս. Սոխիկյան
 Նկարիչ Ա. Վ. Աբամյան
 Տեխ. խմբագիր Լ. Գ. Խաչատուրյան
 Սրբագրիչ Ն. Հ. Մկրտչյան

ИБ № 1697

Հանձնված է շարվածքի 10. 05. 1990 թ.: Ստորագրված է տպագրության 11. 09. 990 թ.: Չափը $84 \times 108 \frac{1}{32}$, թուղթ № 1: Տառատեսակ «գրքի սովորական» բարձր տպագրություն: Պայմ. 5,14 մամ., տպագր. 6,0 մամուլ: Ներկ. մամուլ 5,14: Հրատ.-հաշվարկ. 3,58 մամուլ: Տպաքանակ 3000: Հրատ. № 7803: Պատվեր № 201: Գինը 75 կ.:
 ՀՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան,
 Մարշալ Բաղրամյան պող. 24 դ.:
 Издательство АН Армении, 375019, Ереван,
 пр. Маршала Баграмяна, 24 г.
 ՀՀ ՂԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան
 Մարշալ Բաղրամյան պող. 24:

Типография Издательства АН Армении, 375019, Ереван,
 пр. Маршала Баграмяна, 24.

25 հայ.



հղ.

